Վ.Վ. Խաչատրյան
Ա.Ռ. Մակարյան

ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2011

Երախտիքի խոսքեր

Այս զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության ինստիտուտից ստացված դրամաշնորհի շրջանակներում:

Զեկույցը պատրաստվել է հիմնական հետազոտող և հեղինակ Վիլեն Խաչատրյանի և Աննա Մակարյանի կողմից:

Հեղինակն իր երախտիքի խոսքն է հայտնում Աննա Մակարյանին՝ հետազոտությանն աջակցելու կապակցությամբ և զեկույցի որոշ մասերը (ներածություն, մեթոդաբանություն, ճգնաժամի ուղղակի (անմիջական) սոցիալական ազդեցություն, տնային տնտեսությունների հաղթահարման ռազմավարություններ, ուղղակի սոցիալական ազդեցությունից բխող հետևանքներ՝ ածանցյալ սոցիալական ազդեցություն, մրցունակություն բաժիններ) պատրաստելու գործում զգալի մասնակցության համար:

© Վ.Վ. Խաչատրյան, Ա.Ռ. Մակարյան

© Բաց հասարակության ինստիտուտ

Բովանդակություն

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 7

ԲԱԺԻՆ I ՃԳՆԱԺԱՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ 11

Փոխանցման ուղի 1 Ներքին աշխատանքի շուկա 11

Փոխանցման ուղի 2 Գներ 17

Փոխանցման ուղի 3 Ակտիվներ 21

Փոխանցման ուղի 4 Վարկեր 25

Փոխանցման ուղի 5 Պետական եկամուտներ 27

Փոխանցման ուղի 6 Օտարերկրյա աշխատանքի շուկաներ 32

ԲԱԺԻՆ II ՃԳՆԱԺԱՄԻ ՈՒՂԱԿԻ (ԱՆՄԻՋԱԿԱՆ) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ 33

Եկամուտներ (դրամական և ոչ դրամական) 34

Ծախսերի կառուցվածք 42

Աղքատություն 44

ԲԱԺԻՆ III ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ... 47

ԲԱԺԻՆ IV ՈՒՂՂԱԿԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ՝ ԱԾԱՆՑՅԱԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ 49

Սնուցում 49

Կրթություն 50

Առողջություն 52

ԲԱԺԻՆ V ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 56

Արտադրողականություն 56

Աշխատուժի օգտագործում 58

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 58

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 62

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 64

ՁԵԿՈՒՅՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 79

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Ճգնաժամի սոցիալական ազդեցության փոխանցման ուղիները

Ներքին աշխատանքի շուկա

Նպատակային քաղաքականություն է հարկավոր մշակել և իրագործել գործազրկության և զբաղվածության ասպարեզներում, այսինքն՝ այն խնդիրները, որոնք կան զբաղվածության պարագայում հակառակ տեսանկյունից առկա են գործազրկության առումով, քանի որ եթե տեղի չունենա ըստ մարզերի գործազրկության մակարդակով ըստ առաջնայնության բաժանում և մարզ առ մարզ ամենաբարձր գործազրկություն ունեցողից մինչև ամենացածրը մշակված նպատակային քաղաքականություն, և մյուս կողմից զբաղվածության արդյունավետ դիվերսիֆիկացիոն քաղաքականություն չմշակվի, ապա այս խնդիրները մնալու են շատ դանդաղ լուծվող խնդիրների շարքում:

Գներ

Ճգնաժամի սոցիալ-տնտեսական ազդեցությունների ամենախոցելի ոլորտներից մեկը գնագոյացման և ընդհանրապես գների ու սակագների համակարգն է, որն իր բացասական ազդեցությունն է թողնում գրեթե ողջ բնակչության վրա: Իսկ այդ բացասական ազդեցությունն ավելի ծանր են զգում բնակչության աղքատ խավերը, որոնք իրենց պարենային ապրանքների գնման համակարգում գրեթե այլընտրանք չունեն:

ՀՀ կառավարությունը որդեգրել է գնաճի զսպման և ինֆլյացիայի ցածր մակարդակի ապահովման քաղաքականություն, սակայն այն պետք է իրագործվի ելնելով *յուրաքանչյուր ապրանքատեսակի գների փոփոխության* հետ կապված տարվող լուրջ քաղաքականությամբ և խթաններ ստեղծելու գնաճի մեջ մեծ մասնաբաժին ունեցող ապրանքերի արտադրությունն ապահովելու և գների բարձրացում թույլ չտալու համար, այլ ոչ թե լինելով կախված արտաքին շուկաներից միշտ սպասի արտաքին տնտեսական ցնցումների արդյունքում ի հայտ եկող գնային փոփոխություններին:

Ակտիվներ

Անշարժ գույքի շուկայում տեղի ունեցած գործարքների փոփոխության, վաճառվող բնակելի տների, բազմաբնակարան շենքերի բնակարանների և գյուղատնտեսական նշանակության հողերի վաճառքի խնդիրները, դրանց առանձին մարզերում տարածաշրջանային գնային փոփոխությունները մնում են տարբեր մասնագետների ուշադրության կենտրոնում:

Մյուս կողմից այն հիպոթեզը, թե արդյոք տեղի է ունեցել «ակտիվների փուչիկի» պայթյուն ՀՀ անշարժ գույքի շուկայում դեռ պետք է բացահայտել: Ինչպես նաև կարևոր նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, թե արդյոք Հայաստանում անշարժ գույքի գները ճկուն են, թե ոչ ճկուն, որոնք վիճակագրական տվյալների հիման վրա անգամ շեղվում են առաջարկի և պահանջարկի դասական օրենքներից: Կարևոր հարցադրումներից է նաև բանկերի ներգրավվածությունն անշարժ գույքի շուկայում, ինչպես նաև այդ շուկայի փոխկապվածության խնդիրը բանկային ճգնաժամի առաջացման հետ:

Հայաստանում տեղի ունեցած արտարժութային ճգնաժամի բացասական սոցիալական ազդեցություն ունեցող երևույթներից մեկն է, որը ստիպել է տնային տնտեսություններին վերանայել իրենց վարքագիծը, սակայն այդքան խելացի վարքագիծ ավանդներ ունեցողների կողմից կորուստներ չունենալու համար դժվար էր ակնկալել, այստեղ ավելի ճիշտ երևույթի վերաբերյալ եղել է ներքին կարգով տեղեկատվության արտահոսք, որն էլ հասցրել է նմանատիպ վարքագծի, հակառակ պարագայում այդքան մեծ տեղաշարժեր և դրամից արտարժույթի անցման գործընթացներ դժվար թե տեղի ունենար, քանի որ հակառակ պարագայում տոկոսադրույքների կրճատման միջոցով բանկերի կողմից կկանխվեր դա:

Վարկեր

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկերի հանրագումարը 2006թ. կազմել է մոտ 260.0 մլրդ դրամ, որից տնային տնտեսություններին վարկ է տրամադրվել 129.4 մլրդ դրամը, այսինքն՝ համարյա կեսը: 2007թ. ընդհանուր վարկերը կազմել են 464.8 մլրդ դրամ, որից տնային տնտեսություններին են հատկացվել 247.7 մլրդ դրամը, այսինքն՝ կեսից էլ ավելին: 2008թ. նախաճգնաժամային տարում ընդհանուր բանկերի և վարկային

կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերը կազմել են 692.9 մլրդ դրամ, որից տնային տնտեսություններին է տրվել 367.8 մլրդ դրամը: Ճգնաժամային 2009թ. ընդհանուր վարկերը կազմել են 785.5 մլրդ դրամ, իսկ տնային տնտեսությունների մասնաբաժինը եղել է 341.0 մլրդ դրամ, այսինքն՝ արդեն 2009թ. տնային տնտեսությունների վարկեր վերցնելու տեսակարար կշիռը կեսից ավելի քիչ է սկսել կազմել ամբողջական վարկերի կազմում: 2010թ. ընդամենը վարկերը հատեցին մեկ տրիլիոն դրամի սահմանագիծը և կազմեցին 1009.4 մլրդ դրամ, որից տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմում է 411.9 մլրդ դրամ: Իսկ հաշվի առնելով, որ 2006-2010թթ. ընթացքում վարկերի տոկոսադրույքները, որոնք սահմանվել են առևտրային բանկերի կողմից տատանվել են 15.56-19.22% միջակայքում, որը նշանակում է, վարկեր ունեցող տնային տնտեսությունները, ձեռնարկությունները և այլն դժվարին վիճակում են հայտնվել, սա լուրջ սոցիալական մտահոգության հիմքեր կարող է ստեղծել, ինչպես նաև առաջացնել տնտեսական ոչ համաչափ զարգացումներ՝ հատկապես երկարաձգվող վարկերի տեսքով և 150-190 մլրդ դրամի հասնող տարեկան տոկոսավճարներ մարելով:

Պետական եկամուտներ

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտները 2008-2010թթ. ընթացքում ամենաբարձր են եղել 2008թ. կազմելով 759.2 մլրդ դրամ, որից հետո սկսված ճգնաժամի արդյունքում դրանք նվազել են՝ կազմելով 676.4 մլրդ դրամ, իսկ արդեն 2010թ. դրանք վերականգնվել են՝ հասնելով 755.8 մլրդ դրամի, սակայն 3.4 մլրդ դրամով պակաս են եղել 2008թ. ցուցանիշից:

Հարկերի և տուրքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2008թ. դրանք կազմել են 621.0 մլրդ դրամ, իսկ 2009թ. 522.4 մլրդ դրամ, իսկ 2010թ. 594.1 մլրդ դրամ, այսինքն՝ ճգնաժամային 2009թ. դրանք կրճատվել են մոտ 100 մլրդ դրամով, որը հսկայական գումարային մուտքերի անկում է ՀՀ պետական բյուջեի համար, իսկ 2010թ. վերականգնում դեռևս տեղի չի ունեցել քանի 2008թ. համեմատությամբ այն 27 մլրդ դրամով պակաս է:

2008-2010թթ. ընթացքում ՀՀ կառավարությունը նախընտրել է իրագործել բյուջեի ծախսերի ընդլայնման քաղաքականություն, որի արդյունքում 2008թ. 760.6 մլրդ դրամ ընդհանուր ծախսերը 2010թ. կազմում էին արդեն 856.8 մլրդ դրամ:

Օտարերկրյա աշխատանքի շուկաներ

Հետաքրքիրն այն է, որ թեկուզ ճգնաժամի առկայությանը, Համաշխարհային Բանկի փորձագետ էրսադոն գալիս է այն եզրակացության, որ աղքատությունը շարունակում է նվազել, որից կարելի է հետևություն անել, որ հայերն ունեն ճգնաժամային իրավիճակներին դիմակայելու մեծ ունակություն: Հետաքրքիր է նաև այն, որ այն տնային տնտեսությունները, որոնք ստանում են դրսից դրամական միջոցներ, ավելի մեծ հակվածություն ունեն խնայել, որն էլ նրանց օգնում է նաև դուրս գալ ավելի բարդ տնտեսական իրավիճակներից, անգամ դրամական հոսքերը պակասելու իրավիճակում: Մյուս կողմից նրանք հակված են այդ միջոցները ծախսել կրթական, առողջապահական և այլ ծառայությունների վրա, որն էլ ուղղված է նրանց բարեկեցության բարձրացմանը:

Ճգնաժամի ուղղակի (անմիջական) սոցիալական ազդեցություն

Ընդհանուր առմամբ իրական դրամական եկամուտները և դրամական արտահայտությամբ սննդամթերքի սպառումը սեփական տնտեսությունից աճեց, իսկ դրամական եկամուտների կառուցվածքում սոցիալական նպաստների և կենսաթոշակների և այլ եկամուտների (պարտք, խնայողությունների օգտագործում և այլն) խմբերի մասնաբաժինների մեծացումը մատնանշում է սոցիալական ապահովության համակարգի և տնային տնտեսությունների որդեգրած ռազմավարությունների կարևորությունը ճգնաժամի հաղթահարելու գործում: Քաղաքային, ինչպես նաև գյուղական բնակավայրերում դրամական արտահայտությամբ սննդամթերքի սպառումը սեփական տնտեսությունից (ներառյալ՝ օգնություն) աճեց ճգնաժամային տարում: Իրական դրամական եկամուտների աճ է արձանագրվել բոլոր դեցիլային խմբերում: Ընդհանուր առմամբ դրամական եկամուտների կառուցվածքում բոլոր դեցիլային խմբերի դեպքում աճել է սոցիալական ապահովության և նպաստների, ինչպես նաև այլ եկամուտների աղբյուրների դերը (բացառությամբ VI դեցիլային խմբի): «Եկամուտներ աշխատանքից» աղբյուրից ստացվող իրական եկամուտների աճ է արձանագրվել IV-IX դեցիլային խմբերի մոտ, մինչդեռ I-III դեցիլային խմբերի պարագայում այս աղբյուրից ստացվող իրական եկամուտների անկում են արձանագրել: Իսկ ինչ վերաբերում է ՀՀ-ից դուրս ստացվող բարեկամներից ստացվող եկամուտներին, ապա, ընդհանուր առմամբ,

միջինից բարձր և բարձր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունները սկսել են դոլարային արտահայտությամբ ավելի շատ գումարներ ստանալ (VII-X դեցիլային խմբեր): Սննդամթերքի իրական սպառումը, ընդհանուր առմամբ, ճգնաժամի տարում բոլոր դեցիլային խմբերում աճեց, իսկ ոչ պարենային ապրանքների իրական սպառումը կրճատվեց, սակայն այն հիմնականում պայմանավորված է եղել V-X դեցիլային խմբերով: Ծառայությունների իրական սպառման աճ է արձանագրվել աղքատ I-II, ամենահարուստ և VI դեցիլային խմբերում: Իսկ ծախսերի մեջ որոշ խմբերի իրական ծախսերի ավելացումը կամ կրճատումը արտացոլել է ՀՀ տնային տնտեսությունների կողմից որդեգրած ճգնաժամը հաղթահարելու ռազմավարությունները: Աղքատությունը աճեց, սակայն կտրուկ աճ չնկատվեց ճգնաժամի ժամանակ՝ Կառավարության կողմից տրամադրված տրանսֆերտների շնորհիվ:

Ուղղակի սոցիալական ազդեցությունից բխող հետևանքներ՝ ածանցյալ սոցիալական ազդեցություն

Որպես ճգնաժամի ածանցյալ սոցիալական ազդեցությունները դիտարկելիս, ընդհանուր առմամբ թերսնուցման դեպքերի աճ է նկատվեց, իսկ կրթության ոլորտում լուրջ փոփոխություններ չարձանագրվեին, մինչդեռ ճգնաժամի առողջության վրա ազդեցությունը պետք է գնահատել երկարաժամկետ հատվածում: Միջինում միայն Երևան քաղաքում է թերսնուցում արձանագրվել՝ ընդունած կալորիաների տեսանկյունից (հաշվի առնելով, ինչպես մեդիանա և միջին արժեքները): Ինչ վերաբերում է, կրթությանը, ապա բարձրագույն կրթության տեսանկյունից նյութական միջոցների նվազման պատճառով, 2008թ. նկատմամբ 2009թ. դուրս մնացողների կտրուկ աճ չի արձանագրվել, իսկ վճարովի համակարգում ընդգրկվածների թիվն աճել է, տնային տնտեսությունների պատասխաններից երևում է, որ հանրակրթական դպրոցներից տնային տնտեսությունների չնչին տոկոսն է հանել երեխաներին: Առողջապահական ծախսերի կրճատման պարագայում պոլիկլինիկաներ կամ ամբուլատոր հաստատություններ հաճախումների թիվն աճել է, իսկ այլ հիվանդությունների, ինչպես նաև մահացության դեպքերի աճի ֆոնի վրա, որը նկատվել է նախքան ճգնաժամն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև ալկոհոլի և ծխախոտի իրական սպառման ծավալների պարագայում անհրաժեշտ կլինի ճգնաժամի ազդեցությունը բնակչության առողջության վրա դիտարկել երկարաժամկետ ժամանակահատվածում, որի համար լուրջ հետազոտություն է անհրաժեշտ:

Տնային տնտեսությունների հաղթահարման ռազմավարությունները

Տնային տնտեսությունների հաղթահարմանը նպաստել են սովորությունների կամ առօրյա վարքագծում կատարված փոփոխությունները, եկամուտների աղբյուրներից որևէ մեկի դերի ավելացումը նույնիսկ կախումն այլ աղբյուրներից, ինչպես նաև սեփական ուժերով ուղիների որոնումը որոշ տնային տնտեսությունների մոտ: Ճգնաժամի պայմաններում ժամանցի, զվարճանքի ծախսերի կրճատումն ուղեկցվել է սննդամթերքի սպառման մեջ փոփոխություններ մտցնելով, ինչպես նաև ծառայությունների և այլ ապրանքների սպառման կրճատմամբ: Հաղթահարման համար որպես աղբյուր են հանդիսացել Կառավարության սոցիալական ապահովության համակարգ, պարտքի և խնայողությունների առկայությունը: Իսկ տնային տնտեսությունների որոշ մասը նաև սեփական ուժերով փորձել են այլ եկամտի աղբյուր ապահովել՝ պատահական գործ կատարելու և այլ բնակավայրում սեզոնային աշխատանքների մեկնել:

ՀՀ տնտեսության մրցունակության հիմնական ցուցանիշներ

Ընդհանուր առմամբ, ճգնաժամի ժամանակ արտադրողականության անկման պարագայում իրական աշխատավարձերի աճը փաստում է լուրջ կադրային խնդիրների առկայության մասին: Մյուս կողմից աշխատունակ տարիքի բնակչության թվի աճին զուգահեռ աշխատուժի մասնակցության մակարդակի (labor force participation rate) կրճատումը շեշտադրում է աշխատուժի օգտագործման ոչ բարձր արդյունավետության մասին: Այս երկուսը միասին ապագայում լրացուցիչ բեռ են հանդիսանալու ՀՀ ընկերությունների համար, ինչը հանգեցնելու է իրական աշխատավարձերի աճի, որը կարող է ապահովված չլինել արտադրողականության աճով: Մյուս կողմից 2007-2010թթ. արտադրողականության աճի տեմպերը ճգնաժամից առաջ և հետո զիջել են ՀՆԱ-ի աճի տեմպերին, մինչդեռ ճգնաժամի տարում հակառակ պատկեր է արձանագրվել:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն այլ երկրներ (կախված նրանից թե երկիրը զարգացման որ մակարդակում է գտնվում) էր փոխանցվում տարբեր «փոխանցման մեխանիզմների» միջոցով (տե՛ս, հավելված Ա, աղյուսակ 1), իսկ երկրի ներսում իրենց հերթին ճգնաժամի տարբեր «փոխանցման ուղիները» (տե՛ս, հավելված Ա, աղյուսակ 3): Դեպի Հայաստան ճգնաժամի փոխանցումը հիմնականում պայմանավորված էր ընթացիկ հաշվի փոփոխություններով (տրանսֆերտներ, արտահանման կրճատում, արտահանվող ապրանքների գների կրճատում) և ՕՈՒՆ-ի կրճատմամբ (տե՛ս, հավելված Ա, աղյուսակ 2): Այս փոփոխություններն իրենց հերթին փոխանցման ուղիների միջոցով երկրի ներսում բացասաբար էին անդրադառնում տնային տնտեսությունների բարեկեցության վրա (սոցիալական ազդեցություն)՝ պատճառ հանդիսանալով թերսնման, առողջապահության և կրթության վրա կատարվող ծախսերի կրճատման և որոշակի հիվանդությունների աճին (տե՛ս, հավելված Դ, գծապատկերներ 1 և 2): Չնայած նրան, որ Հայաստանը նախքան 2008թ. վեց տարի անընդմեջ երկնիշ տնտեսական աճ էր արձանագրում, 2009թ. նախորդ տարվա համեմատ 4-րդ ամենախոր ՀՆԱ-ի անկումը արձանագրեց (-14.2%)[1][2], սակայն կարողացավ խուսափել աղքատության զգալի աճից ճգնաժամի ժամանակ, որում ինչպես Կառավարությունն այնպես էլ տնային տնտեսությունների ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունները մեծ դեր խաղացին (էրսադո, 2010թ.), թեպետ այդ ռազմավարությունները ներկայումս և ապագայում բացասաբար կարող են անդրադառնալ, բնակչության որոշ խմբերի վրա:

Աշխատուժի արտադրողականությունը, որպես բնակչության բարեկեցության կամ կենսամակարդակի, և որպես բարձր աշխատավարձերի երաշխիք (Պորտեր և Քեթելս, 2003թ.), 2010թ. նախորդ տարվա նկատմամբ գրեթե նույն մակարդակի վրա մնացին, իսկ իրական աշխատավարձերն այդ նույն ժամանակահատվածում 2.4%[3] աճեցին: Իրական աշխատավարձի աճի տեմպի դանդաղեցումը հնարավորություն չի տա ավելի արագ ժամանակահատվածում բարելավել բնակչության կենսամակարդակը և, հետևաբար, հաղթահարել առկա սոցիալական խնդիրները:

Բաժին I-ում ներկայացված են երկրի ներսում ճգնաժամի բացասական ազդեցությունը տնային տնտեսությունների վրա տարածող «փոխանցման ուղիները»: Հեղինակները տարանջատում են վեց փոխանցման ուղի՝ ՀՀ աշխատանքի շուկա, գներ, ակտիվներ, վարկեր, պետական բյուջեի եկամուտներ և օտարերկրյա աշխատանքի շուկաները: Ամեն փոխանցման ուղու ազդեցությունը ներկայացնելուց առաջ տրվում է յուրաքանչյուր ուղու նկարագիրը և այնուհետ ազդեցությունը համապատասխան տնտեսական ցուցանիշի վրա, ինչպիսիք են գործազրկության մակարդակի աճը, աշխատավարձերի կրճատումը, անշարժ գույքի գների անկումը, տրանսֆերտների կրճատումը և այլն:

Բաժին II-ում ներկայացված են ճգնաժամի տնային տնտեսությունների վրա ունեցած ուղղակի (անմիջական) սոցիալական ազդեցությունը՝ բարեկեցության փոփոխություն: Որպես այդպիսիք դիտարկվում են տնային տնտեսությունների եկամուտները (ինչպես նաև կառուցվածքում արձանագրած փոփոխությունները), սպառողական ծախսերը և աղքատության մակարդակը: Բաժին III-ը ներկայացնում է տնային տնտեսությունների կողմից որդեգրած ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունները, որոնցից էլ բխել է «ածանցյալ սոցիալական ազդեցություն»-ը նրանց վրա (Բաժին IV): Այս բաժնում ներկայացվում են բնակչության թերսնուցման, առողջության վիճակը, բարձրագույն կրթության վրա ազդեցության հետևանքները: Իսկ Բաժին V-ը անդրադառնում է ՀՀ տնտեսության մրցունակությանը՝ դիտարկելով մրցունակության հիմնական համարվող ցուցանիշները (արտադրողականություն, աշխատուժի մասնակցության մակարդակ, զբաղվածության դրույք):

---

[1] Հետայսու բոլոր տեղերում վիճակագրական տվյալների աղբյուրները ՀՀ ԱՎԾ-ն է, եթե կոնկրետ այլ աղբյուրի վրա հղում չի կատարվում:

[2] Լատվիայից (-18.01%), Ուկրաինայից (-15.1%) և Լիտվայից (-15.03%) հետո, Աղբյուր՝ WB, WDI-Online 2011 (last accessed: March 23, 2011)

[3] Աղբյուր՝ հեղինակների սեփական հաշվարկներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Որևէ ճգնաժամի սոցիալական ազդեցությունը (տնային տնտեսությունների վրա) ներկայացնելիս ընդունված եղանակ է դիտարկել երկրի ներսում ճգնաժամի սոցիալական ազդեցության տարածման «փոխանցման ուղիները» և համապատասխան ուղու հետևանքով առաջացած ցուցանիշների (սոցիալական ազդեցությունը բնութագրող փոփոխականները)՝ համապատասխան վիճակագրական տվյալների փոփոխությունը զուգահեռ ներկայացնելով հարցումների արդյունքում ստացված առաջնային տվյալները, կամ էլ միայն երկրով մեկ անցկացրած հարցման արդյունքների հիման վրա (Բալիսաքան և այլոք, (2010թ.), Վան և Ֆրանսիսկո (2009թ.), Փերնիա և Նոլզ (1998թ.), Սումատրո և այլոք (1998թ.) և այլն):

Սակայն քանի որ կախված նրանից թե երկիրը զարգացման որ մակարդակում է գտնվել, փոխանցման մեխանիզմները, որի միջոցով համաշխարհային տնտեսական ճգնաժամը ներթափանցել է տվյալ երկիր իրարից տարբերվել են, հետևաբար առաջ էր գալիս երկրի ներսում ճգնաժամի սոցիալական ազդեցության տարածման ուղիների հստակեցումը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ էր հստակեցնել, թե Հայաստանում տեղի ունեցած ճգնաժամը որ տիպի ճգնաժամին էր դասվում, դրանից բխող համապատասխան փոխանցման ուղիները որոշելու համար:

Հաշվի առնելով ՄԱԿ-ի Աղքատության և սոցիալական ազդեցության խմբի (2010թ.), PFA-ի (2008թ.), Գյուլումյանի (2009թ.) և Քանագարաջահի (2010թ.) կողմից դիտարկող համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի դեպի Հայաստան փոխանցման մեխանիզմները (բացառության ՕՈՒՆ-ի փոխանցման մեխանիզմի), ապա այդ մեխանիզմները ընթացիկ հաշվի անհավասարակշռության էլ ավելի խորացման պատճառ կարող էին հանդիսանալ, եթե ներմուծումը կտրուկ, մեծ չափերի հասնող անկում չարձանագրեր: Եթե 2005-2007թթ. ընթացիկ հաշվի դեֆիցիտ/ՀՆԱ միջին հարաբերակցությունը կազմել էր մոտ 3.1%, ապա 2008թ. այդ հարաբերակցությունը կազմեց մոտ 11.8%՝ գերազանցելով նախորդ տարիների միջին ցուցանիշին մոտ 8.8%-ային կետով[4]: Հարկ է նշել, որ ընթացիկ հաշվի անհավասարակշռության խորացման պարագայում (2005թ. ի վեր), և հատկապես 2008թ. III-րդ եռամսյակից հետո, ինչը համարվում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի սկիզբը[5], Հայաստանում խորացումը պայմանավորված չէր ներքին խիստ մակրոտնտեսական անհավասարակշռությունների հետ[6], և, հետևաբար, ըստ Միլեսի-Ֆերրեթթիի և Ռազինի (1996թ.) ընթացիկ հաշվի անհավասարակշռության խորացումը, որի պատճառը կարող էր լինել շոկը՝ ինչպես տեղական այնպես էլ արտաքին, հանգեցնելու էր «ճգնաժամի» («տեղական արժույթի փլուզման»): Իսկ ըստ Բլինեյի [2005թ., էջ 79], ցածր եկամուտներ ունեցող երկրներում, որտեղ արժեթղթերի շուկան այդքան էլ զարգացած չէ, արժութային ճգնաժամ է համարվում դևալվացիան, որը պայմանավորված է ընթացիկ հաշվի անհավասարակշռություններով «և/կամ այլ հանգամանքների վերացմամբ»: Իսկ ՀՀ-ում 2009թ. ազգային արժույթի արժեզրկման չափը դոլարի նկատմամբ համապատասխանում է Ռեյնհարթի և Ռոգոֆֆի (2009թ.) արժութային ճգնաժամի սահմանմանը: Հետևաբար՝ Հայաստանում արձանագրվել է ***արժութային ճգնաժամ***, որը պայմանավորված է եղել արտաքին շոկերով:

Հայաստանում 2008-2009թթ. ճգնաժամի սոցիալական ազդեցությանն անդրադարձել են մի շարք վերլուծություններ և զեկույցներ՝ ՀՊԾ-ի պարենային անվտանգության վերլուծություն (2009թ.) ՀԲ-ի կողմից պատրաստված զեկույցը (2010թ.), UNDP-ի կողմից ստացված աջակցության շնորհիվ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից պատրաստված զեկույցը (2010թ.), ինչպես նաև ՀՀ վիճակագրության կողմից պատրաստված զեկույցը (2010թ.): Սակայն վերը նշված զեկույցներից, ոչ մեկը չի դիտարկել տնային տնտեսությունների բարեկեցության փոփոխության տեսանկյունից արժութային ճգնաժամին հատուկ ճգնաժամի սոցիալական ազդեցության տարածման փոխանցման ուղիների (համապատասխան ցուցանիշների

---

[4] Այս ցուցանիշը 2005թ. մոտ 0.5% է եղել և սկսել էլ ավելի խորանալ հետագա տարիների ընթացքում:

[5] Կամ ինչպես նաև անվանում են «Լեհման»-ի շոկ, երբ 2008թ. սեպտեմբերի 15-ին «Lehman Bros.» ընկերության սնանկությունը մի շարք երկրներում շոկերի պատճառ հանդիսացավ:
Աղբյուր՝ http://www.newsweek.com/2009/09/14/the-lehman-shock.html (last accessed: March 24, 2011).

[6] 2005թ.-2008թ. բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ հարաբերակցությունն անընդհատ նվազում էր, գնաճը շատ բարձր մակարդակի վրա չի եղել:

(տնտեսական փոփոխականների) փոփոխության միջոցով) ավելի լայն շրջանակ, ինչպես նաև որդեգրած ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունների միջոցով ուղղակի սոցիալական ազդեցությունից (տնային տնտեսությունների բարեկեցության փոփոխության պատճառով) և դրանից բխող սոցիալական ազդեցության (սնուցում, առողջություն և կրթություն) հստակ տարանջատում: Հեղինակների կողմից առաջարկող ճգնաժամի սոցիալական ազդեցության գնահատման մեխանիզմների հիմքում ընկած են Փերնիայի և Նոլզի (1998թ.), ՀԲ-ի (2010թ.), Վանի և Ֆրանցիսկոյի (2009թ.), ինչպես նաև ՀՊԾ-ի (2009թ.) կողմից առաջարկված մոտեցումների սինթեզի հիման վրա առաջարկած մոտեցումը (տե՛ս, գծապատկեր 1-ը), որը ներառում է վերը նշված փաստարկները: Հետևաբար, համապատասխան ճգնաժամի սոցիալական ազդեցության տարածման փոխանցման ուղին՝ ազդելով տնտեսական ցուցանիշների վրա, հանգեցնում է տնային տնտեսությունների բարեկեցության փոփոխության, որի հետևանքով տեղի է ունենում եկամուտների և ծախսերի փոփոխություն և/կամ աղքատություն դեպքերի աճ (ուղղակի սոցիալական ազդեցություն): Եկամուտների փոփոխությունը, իրեն հերթին հանգեցնում է նրան, որ տնային տնտեսությունները ճգնաժամի հաղթահարման տարբեր ռազմավարություններ են որդեգրում, ինչ էլ բերում է տնային տնտեսությունների անդամների սնուցման, առողջության և կրթության մակարդակի անկման (ուղղակի սոցիալական ազդեցությունից բխող ածանցյալ ազդեցություն):

Չնայած մեծ տնտեսական անկմանը, որն արձանագրվել էր ՀՀ-ում, կարևոր է հետևել աշխատուժի արտադրողականությունը՝ ճգնաժամից առաջ, այդ տարում և դրանից հետո, որպես բնակչության բարեկեցությունը որոշող ցուցանիշ՝ բարձր աշխատավարձի մակարդակ ապահովելու տեսանկյունից (Պորտեր և Քեթելս, 2003թ.): Սակայն զեկույցն անդրադառնում է հիմնական համարվող երկրի տնտեսության մրցունակությանը բնութագրող որոշ ցուցանիշներին (արտադրողականություն, աշխատուժի մասնակցության մակարդակ, զբաղվածության մակարդակ)[7], պարզելու թե բացահայտված միտումներն ինչպես կարող են մեղմել ճգնաժամի սոցիալական ազդեցության հետևանքները:

Տվյալներ և վերլուծություն

Ազդեցության գնահատման ժամանակ կիրառվել է «նախքան-հետո» սկզբունքը, երբ նախքան ճգնաժամն արձանագրված արդյունքները համեմատվում են ճգնաժամից հետ գրանցված արդյունքների հետ[8]: Դիտարկվող ժամանակահատվածը 2006-2010թթ. (ինչպես մարզային կտրվածքով, այնպես էլ եռամսյակային կտրվածքով, որտեղ առկա են եռամսյակային և մարզային տվյալներով): Իսկ որպես ճգնաժամի տարին համարվում է 2009թ.: Տնային տնտեսությունների վրա սոցիալական ազդեցության գնահատման ժամանակ երկրորդային տվյալները վերցվել են ՀՀ ԱՎԾ-ի տարբեր տարիների տարբեր հրապարակումներից, ինչպես նաև ՕԷՄԷՔՍ Հայաստանից: Իսկ ընկերությունների ֆինանսական վիճակի վերաբերյալ տվյալները վերցվել են ինչպես ՀՀ ԱՎԾ-ից, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության վրա ճգնաժամի ազդեցությունը և հաղթահարման ռազմավարությունները և քաղած դասերն առաջնային տվյալների հիման վրա՝ Վ. Խաչատրյանի կողմից ՀՀ մարզերում 80 ձեռնարկատերերի հարցման արդյունքների հիման վրա:

[7] Հայաստանի մրցունակությունը լավագույնս ներկայացվում է «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի կողմից պատրաստված տարեկան ազգային մրցունակության զեկույցներում, որն անդրադառնում է մրցունակության ինչպես առաջնային այնպես էլ միջանկյալ ցուցանիշներին, ինչպես նաև երկրի մրցունակության 12 սյուներին, թեմատիկ ամեն տարի անդրադառնում է երկրի մրցակցային առավելությունն ստեղծելու տեսանկյունից որևէ խնդրի (www.ev.am):

[8] Նախքան ուղղակի սոցիալական ազդեցության տարածման փոխանցման ուղիների դիտարկումը, սկզբում ներկայացվում են տվյալ ուղու ազդեցության պատճառ հանդիսացող իրավիճակի նկարագիրը (համապատասխան ցուցանիշների փոփոխությունը), այնուհետև դրանից բխած համապատասխան տնտեսական ցուցանիշները:

Գծապատկեր 1

Ճգնաժամի փոխանցման մեխանիզմները և սոցիալական ազդեցությունները տնային տնտեսությունների վրա



Աղբյուր՝ հեղինակներ, 2011թ.:

ԲԱԺԻՆ I ՃԳՆԱԺԱՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Փոխանցման ուղի 1 Ներքին աշխատանքի շուկա

Ընկերությունների ֆինանսական վիճակը ճգնաժամի պարագայում

Ճգնաժամի ժամանակ ՀՀ կազմակերպությունների գործունեության արդյունքների իրական պատկերը ստանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել դրանց ֆինանսական հիմնախնդիրները, ֆինանսական գործունեության տարածքային անհամաչափ բաշխվածությունը մարզերում և Երևան քաղաքում, կազմակերպությունների հասույթի փոփոխության միտումները, շահութաբերության նորմայի փոփոխությունները, կրեդիտորական պարտքերի դինամիկան և այլն:

Հարկ են համարում նշել, որ ՀՀ կազմակերպությունները 2007թ. ապահովել են 212.9 մլրդ դրամի, 2008թ. գրեթե 208.2 մլրդ դրամի զուտ շահույթ, այն 2009թ. նվազել է մոտ 4-5 անգամ, որի պատճառով այն կազմել է 47.4 մլրդ դրամ, ինչ վերաբերում է խոշոր և միջին կազմակերպություններին, ապա 2008թ. դրանք ունեցել են 121.6 մլրդ դրամի զուտ շահույթ, որը կրճատվել է մոտ 110.2 մլրդ դրամով և կազմել է 10.9 մլրդ: Իսկ եթե հարցը դիտարկում են փոքր կազմակերպությունների կտրվածքով, ապա նկատում ենք, որ 2008թ. փոքր կազմակերպությունների մասնաբաժինը զուտ շահույթի կազմել է 86.5 մլրդ դրամ, որը 2009թ. կազմել է 36.4 մլրդ դրամ, այսինքն՝ մեկ տարվա անկումը փոքր կազմակերպությունների մոտ 50 մլրդ դրամ է: Վերջինս բավականին խոշոր և ահազանգող ցուցանիշ է: Ստացվում է, որ փոքր կազմակերպություններն իրենց զուտ շահույթի ցուցանիշով 2009թ.-ին գտնվել են ավելի լավ դիրքում, քան միջին և խոշոր կազմակերպությունները, այսինքն՝ 47.3 մլրդ դրամից 10.9 մլրդ դրամը խոշոր և միջին կազմակերպություններին է պատկանել, իսկ 36.4-ը փոքրերին, որը խոսում է փոքր կազմակերպությունների առավել կենսունակ լինելու մասին:

Ոլորտային առումով 2009թ. բացասական զուտ շահույթով կամ վանսով աշխատող են եղել՝ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման (-45.2 մլրդ դրամ), մշակող արդյունաբերություն (-17.5 մլրդ դրամ), հանքագործական արդյունաբերության (-7.9 մլրդ դրամ) և գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսության, ինչպես նաև ձկնորսության, ձկնաբուծության ոլորտները: Վերոնշյալ ոլորտները 2008թ. աշխատել են զուտ շահույթով: Իսկ 2009թ. զուտ շահույթի ցուցանիշը բարձր է եղել առևտրի ոլորտում (35.6 մլրդ դրամ), տրանսպորտի և կապի ոլորտում (36.0 մլրդ դրամ), շինարարության ոլորտում (20.3 մլրդ դրամ), որն ի դեպ 2008թ. համանուն ցուցանիշից մոտ 2 անգամ ավելի է, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում (11.7 մլրդ դրամ):

Մարզային կտրվածքով կազմակերպությունների զուտ շահույթի ցուցանիշի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զուտ շահույթի 75%-ից ավելին կենտրոնացած է Երևանում, այսինքն՝ կազմակերպությունները նախընտրում են իրենց գործունությունն իրականացնել Երևանում, իսկ մարզերի զարգացվածությունը մնում է ցածր մակարդակի վրա: 2008թ. իր զուտ շահույթի (նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը) ցուցանիշով, մարզերից առաջինն է եղել Արագածոտնը, իր 21151.4 մլն դրամ ցուցանիշով, իսկ 2009թ.-ին այս մարզի կազմակերպությունները բավականին մեծ կորուստներ են ունեցել և ցուցանիշն իջել է մինչև 442.4 մլն դրամ: Երկրորդ տեղում է գտնվում Կոտայքի մարզը, որի հաջորդում է Արարատը, իսկ վերջինիս էլ հաջորդում է Սյունիքը:

2008թ. ամենածանր վիճակում են հայտնվել Վայոց Ձորի և Գեղարքունիքի կազմակերպությունները, որտեղ կազմակերպությունները տարին փակել են զուտ շահույթի բացասական ցուցանիշով, ունենալով համապատասխանաբար՝ -301.9 և -22.5 մլն դրամի անկում: 2009թ. ամենամեծ վնասը զուտ շահույթի ցուցանիշի գծով կրել են Արմավիրի և Սյունիքի մարզի կազմակերպությունները: Իսկ մարզերից ամենալավ դիրքում 2009թ. գտնվել է Արարատի մարզը 7079.3 մլն դրամ ցուցանիշով: Խոշոր և միջին կազմակերպություններից 2009թ. ամենաշատ տուժել են Սյունիքի մարզի կազմակերպությունները, որտեղ զուտ շահույթը եղել է բացասական կազմելով -9470.6 մլն դրամ: Այս ցուցանիշի վերլուծությունը ցույց է տալիս, որ արդեն 2008թ. տարեվերջի դրությամբ մի շարք հայաստանյան կազմակերպություններ զգացել են տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունները, իսկ որոշ մարզերում դա արդեն խիստ արտահայտված բնույթ է կրել սկսած 2009թ.-ից:

Ամբողջ Հայաստանում 2009թ. շահութաբերության մակարդակն իջել է 3%-ով և կազմել է 10.7%: Սա ցույց է տալիս, որ հայաստանյան կազմակերպությունները լուրջ կորուստ են ունեցել: Կորուստի տոկոսային մակարդակն ավելի բարձր է եղել միջին և խոշոր կազմակերպություններում և 2009թ.-ին 2008թ. համեմատությամբ իջել է 1.7%-ով կազմելով՝ 9.6%:

Երևան քաղաքում շահութաբերության մակարդակը 2008թ. շատ մոտ է եղել հանրապետական միջինին կազմելով 13.8%, իսկ 2009թ. 0.8%-ային կետով ցածր է եղել հանրապետական միջինից, ստացվում է այնպես, որ Երևան քաղաքում շահութաբերության մակարդակն ունեցել է միջին հաշվով ավելի բարձր անկման տեմպեր, քան՝ մարզերում: Սա խոսում է նաև մարզերի ներուժի մասին:

Մարզերի կտրվածքով շահութաբերության ամենաբարձր մակարդակը 2008թ. ունեցել է Արագածոտնի մարզը՝ 30.8%, որին 16.5% ցուցանիշով հաջորդել է Արարատի մարզը, իսկ այնուհետև՝ Լոռին և Կոտայքը՝ 12.4% և 11.5% ցուցանիշներով: 2009թ. բավականին բարձրացել է շահութաբերության մակարդակը Տավուշում, հասնելով՝ 22.6%-ի, ինչպես նաև Սյունիքում՝ 26.7%, որոնց հաջորդել են Լոռու և Արագածոտնի մարզերը 17.6% և 16.6% ցուցանիշներով: Ամենավատ կամ վնասաբերության ցուցանիշով առաջին տեղում է Արմավիրի մարզը 2009թ. -2.6% ցուցանիշով:

Հայաստանում արտադրանքի շահութաբերության մակարդակով առաջին տեղում է գտնվել 2008թ. ֆինանսական գործունության ոլորտը, որտեղ շահութաբերության մակարդակը կազմել է 87.6%, սա բավականին լուրջ ցուցանիշ է, դա է նաև պատճառը, որ աշխատուժի մեծամասնությունը ձգտում է իր գործունեությունն իրականացնել ֆինանսական ոլորտում: Կարելի է ասել ֆինանսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների հաջողությունները թեկուզ և համաշխարհային տնտեսության մեջ սկիզբ առած ճգնաժամին եղել են աննախադեպ: Բացատրությունները կարծում եմ կարելի է փնտրել ծառայությունների մատուցման գների բարձր լինելու, բարձր տոկոսադրույքների առկայության, ինչպես նաև ՀՀ տնտեսության մեջ առկա թանկ փողերի քաղաքականությամբ, հակառակ պարագայում ակնկալել այդ ոլորտում նման բարձր շահութաբերության մակարդակ գրեթե անհնար է:

Արտադրանքի շահութաբերության բարձր մակարդակ ունեցող ոլորտներից է ՀՀ-ում նաև տրանսպորտի և կապի ոլորտը, որտեղ 2008 և 2009թ.-ին վերոնշյալ ցուցանիշը կազմել է 33.4% և 29.1% համապատասխանաբար: Այս ոլորտում կազմակերպությունները բավականին խոշոր են, ինչպես նաև, օրինակ կապի ոլորտի կազմակերպությունները ՀՀ հարկային համակարգում գտնվում են առաջատար տասնյակում, որը և խոսում է նրանց շահութաբերության բարձր մակարդակի մասին:

Մյուս ոլորտը, որտեղ բավականին բարձր է արտադրանքի շահութաբերության մակարդակն անշարժ գույքի հետ կապված գործառնությունների, վարձակալման և սպառողներին ծառայությունների մատուցման ոլորտն է, որտեղ 2008թ. շահութաբերությունը կազմել է 28.3%, իսկ 2009թ.՝ 23.5%: Բավականին փոփոխություններ են նկատվել նաև 2008 և 2009թթ. միջև, քանի որ որոշ ոլորտներում արտադրանքի շահութաբերության մակարդակն իջել է, իսկ որոշներում էլ ընդհակառակն աճ է արձանագրվել: Օրինակ՝ շինարարության ոլորտում 2008թ. 9%-ից 2009թ. շահութաբերությունը հասել է 20.3%, անհասկանալի է դա այն պարագայում, որ ամբողջ շինարարության ոլորտի անկումը ՀՀ տնտեսության ՀՆԱ-ի մեջ եղել է ամենաբարձրը՝ 27%, ստացվում է այնպես, որ անկախ ամեն ինչից շահութաբերությունն աճել է: Կրթության ոլորտի կազմակերպություններում ևս նկատվել է նման միտում 2008թ. 16.6%-ից 2009թ.-ին արտադրանքի շահութաբերությունը հասել է 30.3%-ի: Այստեղ կա որոշ կրթական հաստատությունների փակվելու խնդիրը և բնականաբար առանձին կազմակերպությունների շահույթի ավելացումը, սակայն ճգնաժամային տարիներին սովորաբար բնակչության եկամուտները նվազում են և կրթական ծառայությունների սպառման մակարդակն էլ իջնում է, այնինչ՝ Հայաստանում նման միտումներ չեն գրանցվել: Մոտ 10% արտադրանքի շահութաբերության աճ են արձանագրել հյուրանոցներն ու ռեստորանները 17.1%-ից հասնելով 26.8% մակարդակի: Աննախադեպ աճ է նկատվել նաև հանքագործական արդյունաբերության բնագավառում, որտեղ կազմակերպությունների արտադրանքի շահութաբերությունը 2009-ին հասել է 31.7%-ի նախորդ տարվա 12.7%-ի փոխարեն, իհարկե այստեղ բացատրությունները պետք է փնտրել համաշխարհային հումքի շուկաներում մի շարք մետաղական հանածոների հումքի գների անկման և միայն 2009թ. դրանց որոշակի վերականգնման մեջ:

Ինչ վերաբերում է վնասներ կրած ոլորտներին, ապա դրանց թվին են պատկանում առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման, ինչպես նաև կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտները:

Ակտիվների շահութաբերության բնագավառում պատկերն այլ է, քանի որ ակտիվներն արտադրանքի համեմատությամբ ոչ շահութաբեր են, բացառություն են կազմում ֆինանսական գործունեության ակտիվների շահութաբերությունը, որը 2008թ. կազմել է 31.7%, այսինքն՝ եղել է ամենաբարձրը մյուս ոլորտների համեմատությամբ:

ՀՀ կազմակերպությունների միջոցների կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք 2008-2009թթ. ընկած ժամանակահատվածում ունեցել են աճի միտում, քանի որ դրանք 3581949.0 մլն դրամից հասել են 3815250.0 մլն դրամի, այսինքն՝ աճը կազմել է մոտ 230.0 մլրդ դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աճը տեղի է ունեցել ճգնաժամային տարում կարելի այս երևույթը գնահատել դրական: Կազմակերպության միջոցների կազմում առաջանային նշանակություն ունեն ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվները: Այս ասպարեզում կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ հոդվածներում մեկ տարվա կտրվածքով արձանագրվել են նվազեցումներ, առաջին հերթին նվազել են կազմակերպությունների հիմնական միջոցները, որոնք գտնվում են նրանց հաշվեկշռում, այն կազմել է 1443253.2 մլն դրամ և 2008թ.-ի համեմատությամբ պակասել է մոտ 114.0 մլրդ դրամով: Սա բավականին լուրջ անկում է հայաստանյան կազմակերպությունների համար, որը բացատրվում է ճգնաժամի ժամանակահատվածում կազմակերպությունների կողմից վարված ոչ արդյունավետ ֆինանսական քաղաքականությամբ և հիմնական միջոցների կազմի փոփոխությամբ և նվազմամբ: Այսինքն՝ կազմակերպությունները չկարողանալով գործել ճգնաժամի պայմաններում ստիպված վաճառել են իրենց հիմնական միջոցները, որպեսզի կարողանան ապահովել իրացվելիության բարձր մակարդակ, կամ էլ կատարեն իրենց առջև ծառացած պարտավորությունները: Հետաքրքիր է նաև, որ մյուս հատվածները նախ այնքան էլ մեծ տեսակարար կշիռ չունեն ոչ ընթացիկ ակտիվների կազմում և էական փոփոխությունների, որոնք այդքան մեծ կամ ակնառու կլինեն ինչպիսին հիմնական միջոցների կազմի փոփոխությունն է չեն կրել:

Ընթացիկ ակտիվների կազմի փոփոխությունը 2008-2009թթ. ընթացքում կազմել է մոտ 162.0 մլրդ դրամ: Սա ևս լուրջ բացասական տեղաշարժ է, որի պարագայում մի շարք կազմակերպություններ կորցրել են իրենց ակտիվների մեծ մասը: Կրճատվել են կազմակերպությունների պաշարները մոտ 70.0 մլրդ դրամով, սա նշանակում է, որ ճգնաժամի հաղթահարման համար կազմակերպությունները ստիպված են եղել սպառել իրենց ունեցած պաշարները: Վաճառքի գծով դեբիտորական պարտքերն ունեցել են որոշակի ավելացում, սակայն էական համարել այդ փոփոխությունը չի կարելի: Նույն վիճակում են գտնվել նաև ընթացիկ ֆինանսական ներդրումները, որոնք 2009թ. կազմել են 83245.4 մլն դրամ և այնքան էլ չեն տարբերվում 2008թ. համանուն ցուցանիշից: Դրամական միջոցների կառավարման բնագավառում փոփոխությունները եղել են ի օգուտ արտարժութային հաշիվներում առկա միջոցների ավելացման, բանկային այլ հաշիվներում եղած դրամական միջոցների դրամարկղում առկա միջոցների կրճատման ուղղություններով: Սա ևս իր տրամաբանական բացատրությունն ունի և 2009թ. տեղի ունեցած դոլարի արժևորման և դրամի արժեզրկման փաստով է պայմանավորված:

Կազմակերպությունների միջոցների կազմի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանց մեծ մասը տնօրինում են միջին և խոշոր կազմակերպությունները և 2009թ. մոտ 500.0 մլրդ դրամով ավելացել է այդ կազմակերպությունների միջոցները, իսկ փոքր կազմակերպություններն ունեցել են կորուստներ, քանի որ 2008թ. նրանց մասնաբաժինը կազմել է մոտ 1070.0 մլրդ դրամ, իսկ 2009թ. մոտ 800.0 մլրդ դրամ: Այսինքն՝ ճգնաժամային տարում փոքր կազմակերպությունների ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրները ևս խիստ կրճատվել են: 2009թ. կազմակերպությունների մոտ աճել է սեփական կապիտալի ցուցանիշը, որը 1892349.2 մլն դրամից հասել է 2015638.3 մլն դրամի: Նկատվում է նաև կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումարի աճ, նվազման միտումներ կան էմիսիոն եկամուտների հարցում: Բացասական է այն, որ գրեթե կիսով չափ մեկ տարվա ընթացքում կրճատվել կազմակերպությունների կողմից կուտակված շահույթի ցուցանիշը, քանի էր 508335.6 մլն դրամից 2009թ.-ին այն իջել է մինչև 249678.4 մլն դրամ:

Բացասական միտումներ են նկատվել նաև ընթացիկ պարտավորությունների ավելացման գծով, քանի որ դրանք ավելացել են մոտ 150.0 մլրդ դրամով, հատկապես նկատելի են եղել երկարաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների գծով պարտավորությունների աճ, 2008թ. 689947.0 մլն դրամից 2009թ.-ին դրանք հասել են 796420.4 մլն դրամ: Սա փաստում է այն, որ կազմակերպություններն ավելացրել են իրենց վարկերը, ինչպես նաև ստիպված են եղել վճարել ավելի շատ տոկոսներ: Մյուս կողմից աճ է արձանագրվել նաև հետաձգված հարկային պարտավորությունների բնագավառում, իսկ սա խոսում է այն մասին, որ հարկային վճարումների մեջ կազմակերպությունները թերացել են: Այսինքն՝ կա՛մ պետք է գործունեության ընդլայնում տեղի ունենա, որ համամասնական աճեն

պարտավորությունները, կա՛մ կազմակերպությունների ֆինանսական վիճակի վատթարացում, որի հետ էլ բախվել են ՀՀ կազմակերպությունները: Ոչ ընթացիկ պարտավորությունների համեմատությամբ ընթացիկ պարտավորությունները 2009թ. նվազել են, այսինքն՝ կազմակերպությունների կողմից իրագործվել է մի ռազմավարություն, որի պարագայում պարտավորությունները չեն ցանկացել թողնել ընթացիկ ժամանակահատվածի վրա և երկարաժամկետ միջոցներն ուղղել են ընթացիկ խնդիրները լուծելուն:

Կրեդիտորական պարտքերը 2008 և 2009թթ. ՀՀ ամբողջ տնտեսության մեջ 2008թ.-ին եղել են 526286.1 մլն դրամ, իսկ 2009թ.-ին՝ 471333.8 մլն դրամ, այսինքն՝ տեղի է ունեցել նվազեցում, ճգնաժամային տարվա կտրվածքով այս նվազեցումը կամ պայմանավորված է պարտքերի մարմամբ, կամ պարզապես միջոցների պակասով, որոնք նաև հնարավոր չի եղել տրամադրել, որի պատճառով դրանք նվազել են: Կրեդիտորական ամենամեծ պարտքերը եղել են Երևան քաղաքում 373241.0 մլն դրամ, իսկ մարզերից 2008թ. դրանք ամենաբարձրն են եղել Կոտայքի և Սյունիքի մարզերում: Կրեդիտորական ժամկետանց պարտքեր ամենաշատը եղել են Կոտայքի և Տավուշի մարզերում:

Ինչ վերաբերում է դեբիտորական պարտքերին, ապա 2008թ. դրանք գերազանցել են կրեդիտորական պարտքերին, իսկ 2009թ. պատկերը փոխվել է՝ դեբիտորական պարտքերն ավելի քիչ են եղել: Այս պարտքերի գծով ամենաբարձր ցուցանիշն է արձանագրվել Սյունիքի մարզում՝ 45042.8 մլն դրամ, իսկ ամենացածրը եղել է Գեղարքունիքի մարզում՝ 808.9 մլն դրամ: Ժամկետանց դեբիտորական պարտքերի գծով Երևան քաղաքից հետո առաջատար է եղել Կոտայքի մարզը 391.4 մլն դրամ ցուցանիշով: Հետաքրքիրն այն է, որ կան մարզեր, որոնց կրեդիտորական պարտքերը գերազանցում են դեբիտորականին, որոնցից են՝ Արարատը, Արմավիրը, Կոտայքը և այլն, իսկ հակառակ պատկերն է տիրում՝ Արագածոտնում, Սյունիքում, Շիրակում:

Վերը շարադրածից կարելի էր ենթադրել, որ ՀՀ մարզերի ձեռնարկությունները, և հատկապես փոքրերն ավելի շահութաբեր են եղել, քան Երևանի ձեռնարկությունները, և հատկապես խոշորները, մյուս կողմից, փոքր ձեռնարկություններն ավելի ճկուն են եղել ճգնաժամին համապատասխան արձագանք մշակելու գործում: Իրական պատկերը պարզելու նպատակով հեղինակները փոքր հարցում են կազմակերպել ՀՀ մարզերում ՓՁ-ների շրջանակում պարզելու, թե ինչպես են փոխվել իրենց եկամուտները ճգնաժամի և հաղթահարման ռազմավարությունները:

Մարզերի և փոքր ձեռնարկատիրության ֆինանսական վիճակը և հաղթահարման ռազմավարությունները ճգնաժամի տարում և դրանից բաղած դասերը

Ընտրանքի նկարագիր

Հարցմանը մասնակցել են 80 ձեռնարկություն ՀՀ մարզերի 15 քաղաքներից, որոնք ներկայացնում են տարբեր ոլորտներ (տե՛ս, հավելված Գ) բացառությամբ գյուղատնտեսության, սակայն հեղինակները ընկերությունները դասակարգել են առևտրի և այլ ոլորտի ընկերությունների[9], ելնելով վերլուծության նպատակներից: Իսկ քաղաքների ընտրությունը հիմնականում պայմանավորած է եղել տվյալ քաղաքում ՓՄՁ ԶԱԿ-ի տեղական գրասենյակների առկայությամբ: Հարցումներն անց են կացվել 2011թ. մայիս-հուլիս ամիսներին:

2009թ. արդյունքներ

Ճգնաժամային տարին, ընդհանուր առմամբ, ընկերությունների մեծամասնության գործունեության վրա խիստ բացասաբար է ազդել, իսկ այն ընկերությունները, որոնց մոտ աճ է արձանագրվել, հիմնականում պայմանավորված է եղել սեփական միջոցներով և հաճախորդների հավատարմությամբ հաղթահարելու հետ:

Գործազրկություն, աշխատավարձեր[10] և զբաղվածություն

Ճգնաժամի սոցիալական ազդեցության առաջին փոխանցման ուղին կարելի է ասել յուրաքանչյուր երկրում դիտարկվում է աշխատանքի շուկան և շատ երկրներ 2008թ.-ի վերջից

[9] Ըստ ոլորտների բաժանման և հատկապես ամեն ոլորտի ընտրանքի փոքր լինելու պարագայում այն չի կարող համարվել ներկայացուցչական, սակայն այն թույլ է տալիս պարզել որոշ միտումներ:

[10] Աշխատավարձերին առնչվող հարցերն ուսումնասիրվել են զեկույցի մրցունակության հիմնահարցերի շրջանակներում, այդ իսկ պատճառով, չնայած որպես փոխանցման ուղի աշխատավարձերն ունեն մեծ կարևորություն, այնուամենայնիվ դրանք կդիտարկվեն հետագայում՝ ամբողջականությունը չխախտելու համար:

սկսած բախվել են և դեռևս բախվում են այս ոլորտի խնդրիրների լուծման դժվարությունների հետ: Եվ անգամ այնպիսի երկիր ինչպիսին Ճապոնիան է, որի ընկերությունների քաղաքականությունն աշխատանքի ցմահ ընդունման գաղափարի վրա է հիմնված և երբեք աշխատանքից չազատելու սկզբունքի՝ ստիպված էր մասսայական կրճատումներով զբաղվել: Հայաստանում զբաղվածության և գործազրկության բնագավառներում կան մի շարք նուրբ հարցեր, որոնք առնչվում են հասկացությունների ձևակերպումից մինչև վիճակագրական առանձին տվյալների վերաբերյալ թերահավատ մոտեցումները: Սակայն ոչ ֆորմալ գործազրկության հարցերը շրջանցելով և հիմք ընդունելով փաստացի վիճակագրական տվյալները՝ փորձենք ներկայացնել այն պատկերը, որը կար մինչճգնաժամային իրավիճակը և արդեն 2008թ.-ի վերջից հետո ընկած ժամանակահատվածում:

ՀՀ տնտեսության մեջ զբաղվածության ցուցանիշի եռամսյակային կտրվածքով ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սեզոնայնությունը 2006-2010թթ. ընթացքում պահպանվել է և զբաղվածության անկումը նկատվում է յուրաքանչյուր տարվա 1-ին և 4-րդ եռամսյակներում: ՀՀ տնտեսության մեջ, ինչպես մյուս ցուցանիշների առումով այնպես էլ զբաղվածության առումով առավելագույն ակտիվությունը արձանագրվել է 2008թ. 3-րդ եռամսյակում, և կազմել է 1141.6 հազար զբաղված, իսկ ամենացածր կետը զբաղվածության գրանցվել է 2009թ. 1-ին եռամսյակում 1062 հազար զբաղված, որն ավելի ցածր է քան 2006թ. 1-ին եռամսյակում գրանցված 1065.3 հազար զբաղված ցուցանիշը: Այսինքն՝ զբաղվածության առումով ՀՀ տնտեսության մեջ ամենավատ վիճակն արձանագրվեց հենց ճգնաժամի առաջին հարվածի փուլում: Իսկ եթե հաշվի ենք առնում այն տարբերությունը, որը կա առավելագույն և նվազագույն զբաղվածության մեջ և կազմում է 80 հազար մարդ, դա արդեն խոսում է բավականին մեծ բացասական ազդեցության մասին: Չնայած 2009թ. 2-րդ եռամսյակում արդեն իսկ միտումները վերականգնվել են և զբաղվածությունը հասել է մինչև 1104.9 հազար մարդ: Այստեղ դրական միտումն այն է, որ ռեցեսիա չնկատվեց զբաղվածության ոլորտում, քանի որ 3 եռամսյակ անընդմեջ անկում չգրանցվեց, այլ ընդամենը 2 եռամսյակ, սակայն դա ևս իր բացասական սոցիալական ազդեցություն թողեց ՀՀ ազգաբնակչության վրա: Գրեթե նույն սեզոնային բաշխվածության վիճակն է տիրել նաև 2010թ., և կրկին ամենացածրը եղել է 1-ին եռամսյակը 1074.6 հազար զբաղված: Պետք է նշել նաև, որ դեռևս 2010թ.-ին 2008թ.-ի 3-րդ եռամսյակի զբաղվածության մակարդակը չի վերականգնվել, այսինքն՝ 20-25 հազար մարդով ավելի զբաղվածություն ունենալու պարագայում կարելի է հասնել նախկին մակարդակին:

Զբաղվածության հիմնախնդիրները կարևորվում են երեք ենթահարցերի շրջանակներում՝ զբաղվածների մարզային բաշխվածության, ըստ տնտեսության առանձին ճյուղերի և սեռատարիքային բաշխվածության:

Զբաղվածության մարզային բաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երևան քաղաքին հաջորդում են Արմավիրի և Արարատի մարզերը, իսկ վեջին հորիզոնականը զբաղվածների թվով Վայոց Ձորի մարզն է: Հետաքրքիրն այն է, որ ՀՀ ամբողջ տարածքում զբաղվածությունը չունի համաչափ դինամիկա և ստացվում է այնպես, որ ամենաշատ զբաղված ունեցող տարիներն ըստ մարզերի 2006թ.-ից սկսած եղել են տարբեր: Եվ չնայած այն հանգամանքին, որ 2008թ.-ն է համարվում ՀՀ տնտեսության ամենազարգացած տարին, այնուամենայնիվ որոշ մարզերում զբաղվածության առավելագույն ցուցանիշ ողջ դիտարկվող ժամանակահատվածի համար 2006թ.՝ գրանցվել է Արմավիրում (121.4 հազ. մարդ), Լոռիում (92.8 հազ. մարդ), Կոտայքում (78.4 հազ. մարդ) և Վայոց Ձորում (27 հազ. մարդ), 2007թ.՝ Շիրակում (87.4 հազ. մարդ) և Գեղարքունիքում (103.5 հազ. մարդ), 2008թ.՝ Երևանում (328 հազ. մարդ), Արարատում (118 հազ. մարդ), Արագածոտնում (65.8 հազ. մարդ), Սյունիքում (53.3 հազ. մարդ) և Տավուշում (50.5 հազ. մարդ): Այս ցուցանիշներից կարելի է եզրակացնել, որ մարզերի համար արդյունք ստեղծելու կամ համախառն արտադրանք թողարկելու առումով զբաղվածների թվաքանկը եղել է տարբեր և դեռևս մինչև 2008թ. շատ մարզերում զբաղվածության մակարդակը սկսել է անկում ապրել, իսկ արդեն 2009թ. այն ունեցել է համատարած բնույթ և ամբողջ Հայաստանում տարեկան կտրվածքով զբաղված է եղել 1089.0 հազար մարդ, որը 3 հազարով պակաս է 2006թ. ցուցանիշից: Սա նշանակում է, որ համակարգված մարզային զբաղվածություն գոյություն չունի, որի արդյունքում լուծումները իրավիճակային են ստացվում և լուծումները կամ քաղաքականությունը, որը ենթադրվում է պետք է արդյունավետ գործի ամբողջ հանրապետության տարածքով իրականում ունի խիստ անհամաչափ և անկանոն բաշխվածություն կամ էլ լուծումները տրվում են տեղային կտրվածքով այլ ոչ թե բոլորին նույն սկզբունքով աջակցելով: Իհարկե, այս խնդիրը չի կարելի դիտարկել առանց հաշվի առնելու ճյուղային զբաղվածության խնդիրները, քանի որ տնտեսության մեջ առանձին ճյուղերում տեղի ունեցող փոփոխությունները նաև իրենց

մարզային կտրվածքով ազդեցությունն են թողնում, սակայն վերջնական արդյունքում դրանք սոցիալական սուր արտահայտված խնդիրների են հանգեցնում: Այսինքն՝ կարելի մշակել կոնկրետ մարզի կտրվածքով կոնկրետ զբաղվածության քաղաքականություն, որը կարծեք թե գրված կամ իրագործվող որևէ փաստաթղթի կամ կյանքի կոչված միջոցառումների տեսքով չկա:

Զբաղվածության ճյուղային բաշխվածությունն ուսումնասիրելով նկատում ենք, որ տնտեսության մեջ ամենամեծ զբաղվածություն ունեցող ճյուղը գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության ճյուղն է, որտեղ 2006թ.-ից սկսված զբաղված են եղել զբաղվածների ընդհանուր թվաքանկի 44.1-46.2%-ը՝ 493-506.7 հազար մարդ, այսինքն՝ տնտեսության առաջատար զբաղվածություն ապահովող ճյուղը, որն, ի դեպ, ՀՆԱ-ի մեջ իր տեսակարար կշռով առաջատարը չէ: Մյուս երկու խոշոր ոլորտներն են առևտրի ոլորտը 9.6-10.1% տեսակարար կշռով և կրթության ոլորտը 9-9.2% տեսակարար կշռով, որը վերջին երկու տարիներին է կարողացել գերազանցել մշակող արդյունաբերության ոլորտի զբաղվածությանը, որը կազմել է 7.7-10.1%, այսինքն՝ հարաբերականորեն կայուն կրթության ոլորտը և մյուս կողմից իր դիրքերը թուլացնող մշակող արդյունաբերությունը հայտնվել է 4-րդ զբաղվածություն ապահովող ոլորտի դիրքում: Տնտեսության մյուս ոլորտներն առանձին-առանձին վերցրած չեն գերազանցում զբաղվածության 5%-ի շրջանակը, բացառություն է կազմում շինարարության ոլորտը, որտեղ զբաղվածությունը 2008թ. կազմել է ընդհանուրի 5.4%-ը, սակայն հետաքրքիրն այն է, որ այս ոլորտը ՀՆԱ-ի մեջ կազմել է ամենամեծ մասնաբաժինը: Այսինքն՝ զուտ զբաղվածության տեսանկյունից ՀՀ տնտեսության մեջ դիվերսիֆիկացիա կարելի է ասել գրեթե չկա և տնտեսության մեջ զբաղվածության արդյունավետ դիվերսիֆիկացիոն քաղաքակա-նություն չի տարվում: Իսկ եթե դա փորձենք զուգակցել նաև արդյունավետության կատեգոր-իայի և արտադրողականության հիմնահարցերի հետ, որը պետք է ապահովեն տնտեսության առանձին ոլորտներ, ապա պատկերն ավելի մեծ խայտաբղետություն է ստանում:

Զբաղվածության գենդերային հիմնահարցերի կամ սեռային բաշխվածության ուսումնա-սիրությունից ակնհայտ է դառնում, որ օրինակ 2006թ. տղամարդ և կին զբաղվածների միջև հարաբերակցությունը եղել է ի օգուտ տղամարդկանց 54.3% և 45.7% հարաբերակցությամբ, սակայն 2009թ. արդեն հարաբերակցության փոփոխության դինամիկան տարել է նրան, որ այն կազմել է 50.7% և 49.3%, այսինքն՝ հարաբերակցությունը փոխվում է ի օգուտ կանանց և չի բացառվում, որ կգա ժամանակ, երբ տղամարդկանց և կանանց զբաղվածության հարաբերակցությունը կհավասարվի: Իսկ եթե հաշվի առնենք նաև ուսումնառության և կրթական համակարգում կանանց մեծ տեսակարար կշիռ կազմելու հանգամանքը, ապա որոշ ժամանակ անց կանայք կլինեն զբաղվածների ավելի մեծ տեսակարար կշիռ կազմող սեռը: Այսինքն՝ ստացվում է, որ պետք է նաև ուշադրություն դարձնել այս հիմնահարցերին, որոնք սոցիալական ազդեցության տեսանկյունից կարող են ունենալ ևս մի շարք բացասական ազդեցություններ, հատկապես՝ տղամարդու և կնոջ դերային փոփոխությունների առումով:

Տնտեսության մեջ ամենամեծ խնդիրներից մեկը գործազրկությունն է, քանի որ գործազրկության ավելացումը, հատկապես ճգնաժամային պայմաններում նվազեցնում է ՀՆԱ-ի արտադրության գործընթացը՝ Ա. Օուքենի օրենքի համաձայն, որի պարագայում տնտեսու-թյունը հայտնվում է ավելի վատ պայմաններում: Ելնելով այս ամենից կարևոր նշանակություն է ստանում գործազրկության տոկոսային փոփոխությունների ուսումնասիրությունը:

Եռամսյակային կտրվածքով 2006-2010թթ. ընթացքում գործազրկության մակարդակի միջին միտումների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ գործազրկության ամենաբարձր մակարդակը ՀՀ-ում եղել է 2006թ. 7.5%, իսկ ամենացածր մակարդակը գրանցվել է 2008թ.՝ 6.3%, այնուհետև ճգնաժամային 2009թ. արձանագրվել է 0.7%-ային կետով աճ և արդեն 2009թ. 4-րդ եռամսյակի դրությամբ հասել է 7%-ի, իսկ 2010թ. 1-ին եռամսյակում 7.3%-ի: Ստացվում է այնպես, որ 2009թ.-ը 2010թ.-ի համեմատությամբ ավելի մեղմ է եղել և գործազուրկները կամ աշխատանքը կորցնողները շատացել են 2010թ.-ին:

Առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում գործազրկության բաշխվածությունը Երևան քաղաքի և առանձին մարզերի միջև: Գործազրկության ամենաբարձր մակարդակ ունեցող երեք մարզերը 2006-2010թթ. տարբեր եռամսյակների եղել են Լոռին, Սյունիքը և Շիրակը, քանի որ այս մարզերում գործազրկությունը գերազանցել է 10%-ի մակարդակը: Առավելագույն գործազրկության մակարդակ եղել է Լոռիում 2006թ.՝ 17.5%, սակայն հարցը նրանում է, որ այս մարզերը մինչև 2010թ.-ը 2006թ. 15-17% գործազրկության մակարդակի փոխարեն արդեն ունեին 10%-ին մոտ գործազրկություն, որը նշանակում է գործազրկության հաղթահարման լուրջ միտումներ են նկատվել: Գործազրկության մակարդակով ամենալավ վիճակում գտնվում է արագածոտնի մարզը, որտեղ գործազրկությունը կազմել է 2006-2010թթ.

տարբեր եռամսյակներում 1.9-2.4%: Պետք է նշել նաև, որ այստեղ ևս ընդհանուր միտումները բացակայում են, քանի որ կան մարզեր, որտեղ գործազրկության մակարդակը յուրաքանչյուր տարի նվազում է կամ գոնե կայուն է, իսկ որոշ մարզերում այն աճում է: Ինչ վերաբերում է Երևան քաղաքին, ապա այստեղ գործազրկության ստորին կետը գտնվել է 2008թ. 2-րդ եռամսյակում 5.4%, իսկ առավելագույնը 2010թ.-ի 2-րդ եռամսյակում 8.2%: Դրական միտումներից է այն, որ տարբեր մարզերի միջև գոյություն ունեցող գործազրկության մակարդակների էական տարբերությունն է նվազել, քանի որ եթե 2006թ.-ին կար 17.5% և 1.9% ցուցանիշներ արձանագրած մարզեր, ապա 2010թ. ամենամեծ շեղումը գտնվում է 11% և 2.1% արձանագրված գործազրկության մակարդակների միջև: Սա կարելի է ասել համահարթեցման նման մի երևույթ է, որի պարագայում սոցիալական այս ոլորտում խիստ էական տարբերություններ և խնդիրների սրության ավելի բարձր մակարդակ ունեցող մարզերը նվազել են:

Նպատակային քաղաքականություն է հարկավոր մշակել և իրագործել այս ասպարեզում, այսինքն՝ այն ինչ կար զբաղվածության պարագայում հակառակ տեսանկյունից կիրառելի է գործազրկության առումով, քանի որ եթե տեղի չունենա ըստ մարզերի գործազրկության մակարդակով ըստ առաջնայնության բաժանում և մարզ առ մարզ ամենաբարձր գործազրկություն ունեցողից մինչև ամենացածրը մշակված նպատակայն քաղաքականություն, ապա խնդիրը մնալու է շատ դանդաղ լուծվող խնդիրների շարքում:

Մյուս խնդիրը, որը կապված է գործազրկության հաղթահարման հետ աշխատանք փնտրող մարդկանց հետ է պայմանավորված: 2006-2010թթ. ընթացքում Հայաստանի աշխատաշուկայում մոտ 100 հազար մարդ աշխատանք են փնտրել, որից 77-91 հազարը եղել են չզբաղվածներ, իսկ առաջին անգամ աշխատանք փնտրողները կազմել են 4-15 հազար մարդ: Հետաքրքիրն այն է, որ աճի միտում է նկատվում առաջին անգամ աշխատանք փնտրողների շրջանակում: Դա նշանակում է, որ եթե միտումը շարունակվի, ապա կաճեն նոր աշխատանք ունենալ ցանկացողները, քանի որ շուկան համալրվում է նոր մասնագետներով և այդ արագացող տեմպերին տնտեսությունը համարժեք չի արձագանքում, սա ևս մտահոգության տեղիք է տալիս և հարցը տեղափոխվում է կրթության ոլորտ ու ըստ առանձին մասնագիտությունների տնտեսության համար մասնագետներ պատրաստելու խնդիր է առաջանում, որն, ի դեպ, ՀՀ կրթական համակարգում բավականին սուր է արտահայտված մասնագիտությունների չդիվերսիֆիկացվածության պատճառով:

Գործազրկության մյուս նեղ հիմնախնդիրը պայմանավորված են ըստ կրթական մակարդակի գործազրկության և սեռատարիքային բաշխվածության հետ: Այստեղ նպատակային քաղաքականությունը պետք է ուղղորդվի ամեն մի տարիքային խմբի համար, քանի որ չունենալ յուրաքանչյուր սեռատարիքային խմբի համար նպատակային քաղաքականություն, նշանակում է խնդրի կարգավորումը թողնել միայն շուկայի վրա, իսկ շուկան որպես այդպիսին չի կարող կատարյալ կարգավորել նմանատիպ հիմնահարցերը:

Փոխանցման ուղի 2. Գներ

<u>Սպառողական գների ինդեքս</u>

Ճգնաժամի սոցիալ-տնտեսական ազդեցությունների ամենախոցելի ոլորտներից մեկը գնագոյացման և ընդհանրապես գների ու սակագների համակարգն է, որն իր բացասական ազդեցությունն է թողնում գրեթե ողջ բնակչության վրա: Իսկ այդ բացասական ազդեցությունն ավելի ծանր են զգում բնակչության աղքատ խավերը, որոնք իրենց պարենային ապրանքների գնման համակարգում գրեթե այլընտրանք չունեն:

ՀՀ-ում սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) վերջին տարիներին կապված ճգնաժամի հետ ունեցել է տարբեր միտումները, ամենաբարձրն այն եղել է 2008թ. և կազմել է 109.0%, կարելի է նաև այդ տարին որպես ճգնաժամի սկիզբ համարել նաև «ինֆլյացիոն տարի», քանի որ կրճատվող ապրանքների վաճառքի պարագայում ձեռնարկատերերի առաջին արձագանքը եղել է ոչ թե արտադրության ծավալների ընդլայնումը, այլ գների բարձրացումը: Այնուհետև 2009թ. պայմանականորեն կարելի է անվանել «դեֆլյացիոն տարի», արդեն 2009թ. բնակչության գնողունակության անկման պարագայում ապրանքների գներն իջնում էին, իսկ պետությունը ելնելով 2008թ. արձանագրված ինֆլյացիայի բարձր տեմպերից տնտեսության մեջ փողի քանակությունը չէր ավելացնում, որի պարագայում ՍԳԻ-ն կազմեց 103.4%, իսկ արդեն 2010թ. տնտեսության աշխուժացման, ինչպես նաև տնտեսության մեջ առկա փողի քանակության աստիճանական ավելացման համատեքստում ՍԳԻ-ի աճը կազմեց 108.2%: Այս հիմնահարցն առկա է նաև աշխարհի մի շարք երկրներում, սակայն հայաստանյան իրականությունն ավելի լավ

հասկանալու համար ուսումնասիրենք ՍԳԻ-ի կառուցվածքն ըստ՝ պարենային ապրանքների, (ներառյալ՝ ոգելից խմիչքը և ծխախոտը), ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև ծառայությունների:

Դիտարկելով այս երեք խմբերի վիճակագրական տվյալները սկսած 2006թ. նկատում ենք, որ այս խմբերից որևէ մեկը հստակ առավելություն մյուսների նկատմամբ չունի, կան տարիներ, որտեղ գերակշռում է պարենային ապրանքների գների աճը 2008թ.՝ 110.0%, նույն ցուցանիշն այս երեք խմբում ամենացածրն է եղել 2009թ. կազմելով 99.3%, իսկ ոչ պարենային ապրանքները իրենց աճի տեմպերով ամենաբարձրն են եղել 2010թ.՝ 109.6% ցուցանիշով, իսկ ամենացածրը՝ 2007թ. 99.5%: Ծառայությունների ոլորտում ամենաբարձր գների աճի միտում նկատվել է 2009թ.՝ 110.4%, իսկ ամենացածրը դրանք եղել են 2006թ.՝ 104.0% մակարդակով:

Պարենային ապրանքների գների կառուցվածքի վերլուծությունից երևում է, որ ոգելից խմիչքը և ծխախոտը գների աճի մեջ մեծ տեսակարար կշիռ չունեն, բացառություն է կազմում 2009թ., երբ պարենային ապրանքների գների անկում է գրանցվել 99.1%, իսկ ոգելից խմիչքի և ծխախոտի գների աճ 101.4%, որից կարելի է եզրակացնել, որ ճգնաժամային տարում մարդիկ չարաշահել են այս երկու տեսակի առողջությանը վնասող ապրանքատեսակները:

Պարենային ապրանքների առանձին տեսակների ապրանքախմբերի ինդեքսների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ 2008թ. 128.1% աճել են ***հացամթերքի*** գները, իսկ 2009թ. դրանք անկում են ապրել՝ կազմելով 94.4%, հետաքրքիրն այն է, որ ճգնաժամային տարվա սկզբում այդ ապրանքատեսակի գները պարենային ապրանքներից ամենաշատն են աճել, իսկ 2010թ. այս ապրանքատեսակի գների ինդեքսը կազմել է 104.7%, որը կրկին փաստում է սոցիալական լարվածության խորացման մասին: Այս խմբին պատկանող առանձին ապրանքատեսակների գնային փոփոխությունները դիտարկելով նկատում են, որ 1-ին տեսակի հացի 1 կգ-ի գները 2006թ. կազմել են 248 դրամ, իսկ արդեն 2010թ. վերջին դրանք հասել են 362 դրամի: Գրեթե նույնն է տեղի ունեցել նաև բարձր տեսակի հացի հետ, 2006-2010թթ. գներն աճել են 297-417 դրամի, իսկ 2008թ. 2-րդ եռամսյակում դրանք եղել են 428 դրամ: Բարձր տեսակի ալյուրի գները 2009թ. հասել են 329 դրամի, և կրկին ռեկորդային է եղել 2008թ. 2-րդ եռմասյակը 345 դրամ:

Ինչ վերաբերում է այս բնագավառի հիմքը կազմող գյուղացիական տնտեսությունների կողմից իրացվող ցորենի գները, ապա դրանք 2006թ. կազմել են 88 դրամ, իսկ 2010թ. հասել են 121 դրամի, իսկ առավելագույնը գինը 2008թ. 2-րդ եռամսյակում գրանցվել է 145 դրամ: Կարելի է ասել, որ 2008թ. գնային առումով հացամթերքի համար եղել է բեկումնային և ամենաբարձր գների ժամանակաշրջանն է արձանագրվել, որ կարելի է կապել Վրաստանում տեղի ունեցած պատերազմական իրադարձությունների և ներմուծվող ապրանքների ժամանակավոր դադարեցման գործընթացի հետ: Ինչ վերաբերում է մակարոնեղենի գների աճին, ապա այն 2006թ. կազմել է 379 դրամ, իսկ 2010թ. հասել է 428 դրամի: Հատիկ լոբու գները 2006թ. կազմել են 662 դրամ, իսկ 2010թ. 4-րդ եռամսյակում 1037 դրամ, բրնձի գները 2006թ. կազմել են 354 դրամ, իսկ 2010թ. 648 դրամ, այսինքն՝ այստեղ կարելի է արձանագրել, որ 30-45% գնային բարձրացում է տեղի ունեցել վերջին 5 տարիների ընթացքում, որը ևս բացասական է ազդել բնակչության սննդակարգի վրա:

Մսամթերքի գների ինդեքսը 2006-2010թթ. տարբեր եռմասյակների ընթացքում տատանվել է 98.7-116.9%, դրանք ամենաշատն աճել են 2010թ. 4-րդ եռամսյակում, սա ևս խոսում է այն մասին, որ լուրջ դժվարություններ կան անասնապահության բնագավառում, որի արդյունքում այս ապրանքատեսակի գներն աճում են: Մսամթերքի գներն ուսումնասիրելով միջին մանրածախ գների և գյուղացիական տնտեսությունների կողմից բոլոր ուղիներով իրացված գների հիման վրա նկատում ենք, որ ***տավարի մսի*** միջին մանրածախ գինը 2006թ կազմել է 1534 դրամ, իսկ 2010թ կազմել է 2067 դրամ, ռեկորդային է եղել 2010թ. 4-րդ եռամսյակը 2197 դրամ: Գյուղացիական տնտեսություններն այն իրացրել են 2006թ. 1200 դրամ, իսկ 2010թ. 4-րդ եռամսյակում 1953 դրամով: Այսինքն՝ վերջին 5 տարիներին մսամթերքի այս տեսակը դինամիկ կերպով գնային աճ է արձանագրել: ***Ոչխարի մսի*** մանրածախ գները 2006թ. 1-ին եռամսյակում եղել են 1258 դրամ, իսկ 2010թ. 4-րդ եռամսյակում կազմել են 3112 դրամ, իսկ ռեկորդային աճը գրանցվել է 2010թ. 2-րդ եռամսյակում 3271 դրամ: Գյուղացիական տնտեսությունների կողմից այն 2006թ. սկզբում վաճառվել է 1205 դրամով, իսկ 2010թ. 4-րդ եռամսյակում 2177 դրամով: Այստեղից կարելի է եզրակացնել, որ տավարի մսի միջնորդային շուկան ավելի թույլ է քան ոչխարի մսի միջնորդային շուկան, քանի որ գյուղացու կողմից վաճառվող և մանրածախ գների միջև տարբերությունը ոչխարի մսի շուկայում ավելի մեծ է, այն էլ այն պարագայում, որ արտահանման պատճառով ՀՀ-ում դրանց գլխաքանակը բավականին կրճատվել է և լուրջ մտահոգություններ կան ոլորտի զարգացումն ապահովելու և գների

հետագա աճը կանխելու առումներով: ***Խոզի մսի*** գները 2006թ. կազմել են 1816 դրամ, իսկ 2010թ. 2350 դրամ: Գյուղացիական տնտեսությունները այն 2006թ. վաճառել են 1288 դրամով, իսկ 2010թ. տարեվերջին 1932 դրամով, ստացվում է այստեղից այն, որ ոչխարի մսի գների աճի տեմպերը եղել են ավելի արագ և անգամ 2010թ. 2-րդ եռամսյակում մոտ 500 դրամ գերազանցել են խոզի մսի գներին, և դա այն պարագայում, որ այս երկու մսամթերքի 2006թ. սկզբնական գներն իրար գրեթե հավասար են եղել: Խոզի մսի գների գագաթնակետը եղել է 2008թ. 4-րդ եռամսյակում 2952 դրամ: Որը կարելի է բացատրել Նոր տարվա գործոնով, խոզի ժանտախտով, ինչպես նաև արդեն 2008թ. 4-րդ եռամսյակում ի հայտ եկած ճգնաժամային երևույթներով, որոնց գյուղացին փորձել է արձագանքել գների բարձրացմամբ, այսինքն՝ այստեղ բազմագործոնային է ազդեցությունը: ***Թռչնի մսի*** գները 2006թ. եղել են 1 կգ-ի համար 1232 դրամ, իսկ 2010թ. 4-րդ եռամսյակում կազմել են 1446 դրամ, կարելի է փաստել, որ մյուս երեք մսատեսակների համեմատ թռչնի մսի գներն էական փոփոխությունների չեն ենթարկվել: Ի տարբերություն վերջինիս գյուղացիական տնտեսությունների կողմից թռչնի մսի 1 կգ-ն իրացվել է ավելի բարձր գնով այն 2010թ. միջին հաշվով կազմել է 1707 դրամ, իսկ 2010թ. 4-րդ եռամսյակում 2072 դրամ: Վերջինս կարելի է բացատրել գյուղացիների կողմից վաճառվով թռչնի մսի ավելի բարձր որակական հատկանիշներով և, ըստ այդմ, էլ գների բարձր լինելով:

Ձկնամթերքի գների ինդեքսը 2006-2010թթ. տարբեր եռմասյակների ընթացքում տատանվել է 64.9-207.3%-ի շրջանակներում 5 տարիների եռամսյակային միտումներն ունեն անկանոն բաշխվածություն, քանի որ ամենացածր միտումները նկատվում են 2008թ. վերջում և 2009թ. սկզբում, իսկ ամենաբարձրը 2007թ. վերջում, կարելի է ասել գների անկման պատճառներից մեկը նա է, որ մարդիկ իրենց սննդակարգում բավականին կրճատել են այս սննդատեսակը:

Կաթնամթերքի գների ինդեքսը 2006-2010թթ. տարբեր եռմասյակների ընթացքում տատանվել է 99.8-115.2%-ի շրջանակներում, գների անկման ստորին կետը գտնվում է 2010թ. 2-րդ եռամսյակում, իսկ աճի գագաթնակետը 2010թ. 4-րդ եռամսյակում, իսկ 2009թ. ընթացքում գների հավելաճը տատանվել է 1.6-4.2%-ի միջակայքում: Այստեղ կարելի է ասել կա հարաբերական կայունություն և տատանման միջակայքն էլ այնքան էլ մեծ չէ, ինչպես օրինակ ձկնամթերքի շուկայի պարագայում էր: ***Կաթի*** մանրածախ գները 2006-2010թթ. տարբեր եռամսյակներում տատանվել են 286-332 դրամի շրջանակներում և ամենաբարձրն էլ արձանագրվել է 2010թ. վերջում: Մեծածախ գները կամ գյուղացիական տնտեսությունների կողմից իրացվող գները տատանվել են 1 լիտրի դիմաց 100-135 դրամի շրջանակներում: Գյուղացիական տնտեսությունների կողմից առաջարկվող ***պանրի*** գները տատանվել են 880-1347 դրամի շրջանակներում և կրկին դրանք ամենաբարձրն են եղել 2010թ. վերջին եռամսյակում: Ստացվում է այնպես, որ 2010թ. վեջին եռամսյակը սոցիալական լարվածության առումով կարող է բեկումնային լինել, իսկ եթե միտումները նույն կերպ շարունակվեն նաև 2011թ. վերջում կարող է բնակչության բարեկեցությունը խիստ անկում ապրել: Չանախ պանրի գինը տատանվել է 1330-1866 դրամի շրջանակներում, այստեղ ևս ամենաբարձրը 2010թ. վերջին եռամսյակն է: Տնական պանրի գները տատանվել են 1074-1380 դրամի շրջանակներում և կրկին նկատվում են նույն միտումները:

Ձվի գների ինդեքսը 2006-2010թթ. տարբեր եռամսյակների ընթացքում տատանվել է 84.4-119.4%-ի շրջանակներում, հետաքրքիրն այն է, որ դրանք թռիչքաձև աճել են 2007թ. 2-րդ եռամսյակում 119.4%, ինչպես նաև 2010թ. 4-րդ եռամսյակում 116.1%, իսկ ամբողջ 2009թ. ընթացքում դրանք անկում են ապրել գտնվելով 89.3-96% միջակայքում: Ձվի մեկ տասնյակի գինը 2006թ. եղել է 543 դրամ, այն իր առավելագույնին է հասել 2007թ. առաջին եռամսյակում 616 դրամ, իսկ նվազագույն կետում է գտնվել 2010թ. 3-րդ եռամսյակում 399 դրամ, որը բացատրվում է նաև որոշ սպեկուլյատիվ և դեմպինգային գործոններով: Իսկ 2010թ. 4-րդ եռամսյակում այն կրկին բարձրացավ մինչև 561 դրամ, այս տատանումների բացատրության հիմքում ընկած է նաև անառողջ մրցակցային դաշտի առկայությունը:

Կենդանական և բուսական յուղի գների ինդեքսը սկսել է կտրուկ բարձրանալ 2007թ. 4-րդ եռամսյակից մինչև 2008թ. 3-րդ եռամսյակը, իր առավելագույնին հասնելով 2008թ. 2-րդ եռամսյակում 140.5%, աճի տեմպերը դանդաղել են 2009թ. 2-րդ եռամսյակից, սակայն մոտ 30-40% այդ թանկացումը էականորեն հարվածել է աղքատ բնակչության գրպանին և կարելի է ասել ճգնաժամային տարին մարդիկ ստիպված են եղել բավականին բարձր գներով ձեռք բերել այս ապրանքատեսակը: ***Կենդանական յուղի (կարագի)*** գները 1 կգ-ի համար 2006-2010թթ. տարբեր եռամսյակներում տատանվել են 1568-2812 դրամի շրջանակներում և կրկին ամենաբարձրը դրանք եղել են 2010թ. վեջին եռամսյակում, իսկ թռիչքաձև աճ արձանագրվել է 2007թ. 4-րդ եռամսյակում մոտ 600 դրամի սահմաններում: ***Մարգարինի*** գները տատանվել են 724-

1017 դրամի շրջանակներում, իսկ ամենաբարձը դրանք եղել են 2009թ. 1-ին եռամսյակում: ***Բուսական յուղի (արևածաղկի)*** մեկ լիտրի գինը տատանվել է 607-969 դրամի շրջանակներում և պիկը նկատվել է 2007թ. վերջում և ամբողջ 2008թ.-ին, այնուհետև մինչև 2010թ. վերջ այն իջել է մինչև 769 դրամ:

Մրգերի գների ինդեքսն իր առավելագույն աճի տեմպն է դրսևորել 2007թ. 1-ին եռամսյակում, որից հետո 2008թ. դրանք գտնվել են 91.7-107.0%-ի շրջանակներում 2009թ. դրանք միայն ցածր են եղել 1-ին եռամսյակում 91.3%, իսկ այնուհետև աճել են տարեվերջին կազմելով 108.2%: Բավականին ծանր է եղել 2010թ. 3-րդ և 4-րդ եռամսյակները, քանի որ մրգի գներն աճել են 126.1% և 125.5% համապատասխանաբար: ***Ձմերուկի*** մեծածախ գները տատանվել են 36-105 դրամի շրջանակներում, իսկ դրանց մանրածախ գները գտնվել են 126-674 դրամի շրջանակներում, իհարկե այստեղ կա սեզոնայնության խնդիր և դրանով ճիշտ որոշել միտումները բավականին դժվար է: Նույնը կարելի է ասել նաև ***սեխի*** շուկայի համար այստեղ մանրածախ գները տատանվել են 244-1520 դրամի շրջանակներում և ամենաբարձրն էլ եղել են 2010թ. 2-րդ եռամսյակում: Խնձորի մեծածախ գները տատանվել են 120-290 դրամի շրջանակներում, իսկ մանրածախ գները 360-630 դրամի շրջանակներում: Ավելի թանկ մանրածախ գներ են եղել տանձի շուկայում դրանք տատանվել են 477-1167 դրամի շրջանակներում: Պատկերը գրեթե նույնն է խաղողի շուկայում այստեղ գներն առանձին եռամսյակներում տատանվել են 381-1107 դրամի շրջանակներում: Վերջինս նշանակում է, որ հասարակության մի ամբողջ ստվար հատված հնարավորություն չի ունեցել ձեռք բերել այդքան բարձր գներով մրգեր:

Բանջարեղենի և կարտոֆիլի գների ինդեքսի փոփոխությունը 2006-2010թթ. տարբեր եռամսյակներում տատանվել է 77.5-168.4% միջակայքում, որը հսկայական մեծ միջակայք է և նշանակում է շուկայում առկա է խիստ անհամաչափ զարգացվածություն: Իհարկե, նախաճգնաժամային 2008թ. և ճգնաժամային 2009թ. դրանք եղել են ամենացածր մակարդակի վրա, իսկ ռեկորդային և թռիչքաձև աճ է գրանցվել 2010թ. 3-րդ եռամսյակում 164.8%, որը պայմանավորված է գյուղատնտեսական ոչ ճիշտ քաղաքականության իրականացման և կարտոֆիլի մշակման ծավալների կրճատման հետ: ***Կարտոֆիլի*** գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված գները տատանվել են 113-172 դրամի շրջանակներում, ամենաբարձրը դրանք եղել են 2007թ. 1-ին և 2010թ. 3-րդ եռամսյակներում, իսկ միջին մանրածախ գները տատանվել են 155-258 դրամի շրջանակներում կրկին առավելագույն արդյունքները գրանցվել են նույն եռամսյակներում: ***Կաղամբի*** միջին մանրածախ գները գտնվել են 105-243 դրամի շրջանակներում կրկին ամենաբարձրը 2010թ. 3-րդ եռամսյակում: ***Գլուխ սոխի*** գները տատանվել են 210-425 դրամի շրջանակներում, իսկ ամենաբարձրն է եղել 2010թ. առաջին եռամսյակում: Այստեղ, իսկապես, հստակ մշակված հաշվարկների իրականացման և առանձին մշակաբույսերի գծով տարվող գյուղատնտեսական խթանման քաղաքականություն է հարկավոր իրագործել, նման գնային տատանումներից խուսափելու, ինչպես նաև ավելորդ սոցիալական լարվածություն չառաջացնելու համար:

Շաքարավազի գների ինդեքսի փոփոխությունը 2006-2010թթ. տարբեր եռամսյակներում տատանվել է 79.1- 132.9% միջակայքում, որը ևս խոսում է ոլորտում առկա մրցակցային հիմնախնդիրների մասին, 2008թ. վերջում այս ապրանքատեսակի գներն անկում են ապրել, որը կազմել է 90.8%, իսկ արդեն 2009թ. վերջին 4-րդ եռամսյակում գների ինդեքսի աճը կազմել 132.9%: Սա աննախադեպ աճ է այն էլ ճգնաժամային տարում, այսինքն՝ տարեցտարի մենք գործ ունենք այս ապրանքատեսակի վաճառքի գների կտրուկ ավելացման խնդրի հետ: Դա բացատրվում է նաև համաշխարհային շուկայում շաքարավազի գների բարձրացման հետ, որն արտադրության ծավալների կրճատման էր հանգեցրել: Շաքարավազի մանրածախ գները 2006-2010թթ. տարբեր եռամսյակներում 1 կգ-ի համար տատանվել են 274-362 դրամի շրջանակներում, իսկ ամենաբարձրը դրանք եղել են 2010թ. 2-րդ եռամսյակում և դա այն պարագայում, երբ Հայաստանում կառուցվել և գործարկվել է շաքարավազի պատրաստման գործարան:

Սուրճի, թեյի և կակաոյի գների ինդեքսը մեծ էական տատանումների չի ենթարկվել և 2006-2010թթ. տարբեր եռամսյակներում գտնվել է 101.9-120.6% միջակայքում, այն ամենաբարձրն է եղել 2008թ. վերջում՝ 120.6%, իսկ ամենացածրը՝ 2010թ. 4-րդ եռամսյակում 101.9%:

Առավել կայուն գների ինդեքսի միտում է ունեցել ***հրուշակեղենի*** ոլորտը, որտեղ միտումները գտնվում են 100.5-108.2% միջակայքում, իսկ ճգնաժամային տարում դրանք 1-2% միջակայքում են տատանվել: Նույնը կարելի է ասել նաև ***ոչ ոգելից խմիչքների*** համար, որտեղ ամենաբարձր աճի ինդեքսը գրանցվել է 2008թ. 3-րդ եռամսյակում 116.6%, իսկ ամենացածրը 2010թ. 3-րդ եռամսյակում՝ 99.5%:

Վառելիքի գների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2006-2010թթ. տարբեր եռամսյակներում բենզինի գները տատանվել են 301-411 դրամի շրջանակներում, և առավելագույն գին գրանցվել է 2008թ. 3-րդ եռամսյակում, որը պայմանավորված է եղել ռուս-վրացական հարաբերությունների սրացմամբ, այստեղից կարելի է եզրակացնել, որ գնային ոչ ճիշտ և կայուն քաղաքականության արդյունքում, ինչպես նաև համապատասխան պահուստներ չունենալու պատճառով գներն ունեցել են թռիչքաձև աճ: Սա խոսում է այն մասին, որ պետք է ձևավորել նաև պետական և մասնավոր վառելիքաէներգետիկ ռեսուրսների պահուստներ նման խնդիրներից խուսափելու համար: Այս երևույթն առկա էր նաև դիզվառելիքի բնագավառում, որտեղ գները տատանվել են 281-423 դրամի շրջանակներում, այսինքն՝ գրեթե բենզինին հավասար դեռ ավելի բարձր գներ են ձևավորվել նույն 2008թ. 3-րդ եռամսյակում, քանի որ կա նաև գյուղատնտեսական աշխատանքների խնդիրը:

Էլեկտրաէներգիայի գների փոփոխությունը տեղի է ունեցել 2009թ. ցերեկային սակագինը 25-ից հասել է 30 դրամի, իսկ գիշերայինը՝ 15-ից 20 դրամի, որը ևս ունեցավ սոցիալական բացասական ազդեցություն:

Ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ դրանք սկսած 2006թ. ունեցել են դինամիկ աճի միտում, քանի որ 104.0%-ից 2009թ. դրանք հասել են 110.4%: *Կենցաղային բնույթի ծառայությունների* գներն ամենաշատ աճել են 2010թ. կազմելով 113.7%, դրանք բարձր են եղել նաև 2008թ. 110.0%, իսկ 2009թ. 108.6%: *Բնակարանային-կոմունալ ծառայություններն* առավելագույն աճ են արձանագրել 2009թ. 117.1%, իսկ ամենացածրն են եղել 2007թ. 99.6%, այսինքն՝ գներն անկում են ապրել: *Բուժսպասարկման* գների աճ գրանցվել է դիտարկվող ողջ ժամանակահատվածում, հատկապես աճը բարձր է եղել 2008թ. 116.3% և 2009թ. 111.6, իսկ 2010թ. դրանք իջել են կազմելով 106.4%: Այսինքն՝ ճգնաժամային տարում մարդիկ ստիպված են եղել ավելի թանկ վճարել բուժսպասարկման համար: *Տրանսպորտային ծառայությունների* սակագները 2009թ. աճել են 109.6%, իսկ 2008թ. 107.1%, ստացվում է, որ և նախաճգնաժամային և ճգնաժամային տարում ունեցել են տրանսպորտային ծառայությունների գների աճ, որը կարելի է կապել նաև թանկացող բենզինի գների հետ: Տրանսպորտին առնչվող գներից մետրոպոլիտենի գները 2006-2010թթ. մնացել են անփոփոխ 50 դրամ, և դրանք վերանայվել են 2011թ.՝ դառնալով 100 դրամ: *Ներքաղաքային ավտոբուսների* գները տատանվել են 60-81 դրամի շրջանակներում: *Կապի* ոլորտի սակագներն ունեն անկման միտում, այս ոլորտը դինամիկ զարգացող է և անընդհատ առաջարկվում են նոր ծառայություններ և վերանայվում են նաև սակագները, որի պատճառով 2009թ. սակագների անկումը կազմել է՝ 97.2%, իսկ 2010թ. 98.9%: *Կրթական համակարգի ծառայությունների* սակագներն ունեցել են աճի միտում, անգամ ճգնաժամային 2009թ. դրանք աճել են 105.4%, իսկ արդեն 2010թ. 106.5%: Այսինքն՝ գնային առումով կրթական ծառայությունները թանկանում են, քանի որ դրանք բավականին հետ են միջազգային գներից և աճի միտում բնականաբար պետք է նկատվի: *Հանգստի կազմակերպման* սակագները 2006թ. մնացել են նախորդ տարվա համեմատությամբ անփոփոխ, դրանք բարձր աճ են արձանագրել 2009թ.՝ 107.5%, աճի բարձր տեմպերը շարունակվել են նաև 2010թ.՝ 107.9%, ստացվում է այնպես, որ Հայաստանում տարեցտարի ավելի է թանկանում հանգստի կազմակերպումը, որը պայմանավորված է տուրիստների հոսքի աճով, իսկ վերջինս ավելի է դժվարացնում Հայաստանում ապրող սոցիալական թույլ խավերի հանգստի ծառայություններից օգտվելու հնարավորությունները, քանի որ նրանց եկամուտների մեջ հանգստին հատկացվող մասնաբաժինն այնքան էլ մեծ չէ և մյուս կողմից եկամուտների աճն այդ հնարավորությունը չի ընձեռում:

Այսպիսով՝ եթե ՀՀ կառավարությունը որդեգրում է գնաճի զսպման և ինֆլյացիայի ցածր մակարդակի ապահովման քաղաքականություն, այն պետք է իրագործի ելնելով *յուրաքանչյուր ապրանքատեսակի գների փոփոխության* հետ կապված տարվող լուրջ քաղաքականությամբ և խթաններ ստեղծելու գնաճի մեջ մեծ մասնաբաժին ունեցող ապրանքերի արտադրությունն ապահովելու և գների բարձրացում թույլ չտալու համար, այլ ոչ թե լինելով կախված արտաքին շուկաներից միշտ սպասի արտաքին տնտեսական ցնցումների արդյունքում ի հայտ եկող գնային փոփոխություններին:

Փոխանցման ուղի 3. Ակտիվներ

<u>Բնակարանների և առանձնատների հետ կապված գործարքներ և դրանց գները</u>

Անշարժ գույքի շուկայում տեղի ունեցած գործարքների փոփոխության, վաճառվող բնակելի տների, բազմաբնակարան շենքերի բնակարանների և գյուղատնտեսական նշանա-

կության հողերի վաճառքի խնդիրները, դրանց առանձին մարզերում տարածաշրջանային գնային փոփոխությունները մնում են տարբեր մասնագետների ուշադրության կենտրոնում:

Մյուս կողմից այն հիպոթեզը, թե արդյոք տեղի է ունեցել «ակտիվների փուչիկի» պայթյուն ՀՀ անշարժ գույքի շուկայում դեռ պետք է բացահայտել: Ինչպես նաև կարևոր նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, թե արդյոք Հայաստանում անշարժ գույքի գները ճկուն են, թե ոչ ճկուն, որոնք վիճակագրական տվյալների հիման վրա անգամ շեղվում են առաջարկի և պահանջարկի դասական օրենքներից: Կարևոր հարցադրումներից է նաև բանկերի ներգրավվածությունն անշարժ գույքի շուկայում, ինչպես նաև այդ շուկայի փոխկապվածության խնդիրը բանկային ճգնաժամի առաջացման հետ: Սրանք կարևոր հարցադրումներ են, որոնք փորձենք վերլուծել ՀՀ ԱՎԾ անշարժ գույքի շուկային առնչվող տվյալների բազայի հիման վրա:

Բազմաբնակարան շենքերի բնակարանների վաճառքի գների և կատարված գործարքների քանակին առնչվող ՀՀ ԱՎԾ տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2006-2010թթ. ընթացքում դրանց գները կայուն կերպով աճել են, իսկ գնային անկում նկատվել է 2009 և 2010թթ. այն էլ միայն որոշ մարզերում և Երևան քաղաքում: Բազմաբնակարան շենքերի բնակարանների 1 քառ. մետրի գինը գրեթե բոլոր մարզերում 2006-2010թթ. ընթացքում կրկնակի և անգամ որոշ դեպքերում եռակի աճ է արձանագրել: Մարզերից ամենացածր գնով 1 քառ. մետրը 2006-2010թթ. ընթացքում վաճառվել է Լոռու մարզում 21313-40800 դրամ, իսկ ամենաբարձր գները եղել են Արմավիրի մարզում 60467-124300 դրամ: Հարկ ենք համարում նշել, որ Երևանում բազմաբնակարան շենքերի բնակարանների գները եղել են ամենաբարձրը, դրանք 2006-2010թթ. ընթացքում տատանվել են 196700-296300 դրամի շրջանակներում: Երևանում բազմաբնակարան շենքերի բնակարանների գների անկումը սկսել է 2009թ. 1-ին եռամսյակից և շարունակվել ամբողջ 2009թ. ընթացքում և անկումը կազմել է ընդամենը 30500 դրամ, որի պարագայում արձանագրվել է 10.29% գների անկում, միջազգային պրակտիկայում այն անվանում են «ակտիվների փուչիկի» պայթյուն, եթե այն գերազանցում է 10% անկման մակարդակը և 3 եռամսյակ շարունակ տեղի է ունենում գների անկում: Կոնկրետ բազմաբնակարան շենքերի վերաբերյալ առկա փաստացի ՀՀ ԱՎԾ տվյալներից կարելի է եզրակացնել, որ Երևանում 4 եռամսյակ այս շուկայում անընդհատ գներն անկում են ապրել, այսինքն՝ տեղի է ունեցել ռեցեսիա, ինչպես նաև 10%-ից ավելի էլ կազմել է գների անկումը, այսինքն՝ կոնկրետ շուկայի այս սեգմենտում եղել է նաև «ակտիվների փուչիկի» պայթյուն: Սակայն հարցը կարող է մեղմվել, եթե մենք խնդիրը դիտարկենք բնակելի տների և բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկան միասնականացնելով: Հարկ ենք համարում նշել, որ բնակելի տների գների ռեցեսիան շարունակվել է 8 եռամսյակ սկսած 2009թ. 1-ին եռամսյակից մինչև 2010թ. 4-րդ եռամսյակ 318200 դրամից հասնելով 286100 դրամ, իսկ տոկոսային անկումը կազմել է -5.42%, կարելի է եզրակացնել, որ Երևանում մոտ 8%-անոց բնակարանների բոլոր տեսակների գների անկում է արձանագրվել սկսած 2009թ. առաջին եռամսյակից:

Եվ չնայած այն հանգամանքին, որ բազմաբնակարան շենքերի գների կայունացում է տեղի ունեցել ու աճ 2010թ., այնուհանդերձ առանձնատների շուկան դեռ ուշքի չի գալիս, որը մտահոգության տեղիք է տալիս: Իհարկե, խնդիրը մենք դիտարկում ենք ամենամեծ բնակարանային ֆոնդ ունեցող Երևան քաղաքի օրինակով, սակայն հանրապետական միջին ցուցանիշներն այլ են և պատկերն այնքան էլ մտահոգիչ չէ:

Փորձենք հարցը դիտարկել բնակարանների գների և կատարված գործարքների քանակական փոփոխության համատեքստում: 2006թ. կատարվել է առանձնատների 5474 վաճառք, 2007թ. այն ավելացել է և հասել 6759-ի, իսկ 2008թ. կրկին անկում է ապրել և կազմել է 5774, այսինքն՝ առանձնատների վաճառքի բումը եղել է 2007թ., իսկ 2009թ. անկումը խորացել է 4268 գործարք, իսկ 2010թ. 5174 գործարք: 2009թ. ճգնաժամային տարում գրանցվել են առանձնատների ամենաբարձր գները, իսկ գործարքների ամենացածր քանակը, այսինքն՝ տեղի է ունենում ճգնաժամ, իսկ մարդիկ չեն կարողանում առանձնատներ գնել, որի պատճառով գործարքները նվազում են, իսկ այդ պարագայում հարց է առաջանում, ինչու չեն իջնում գները: Այստեղ կան մի քանի պատասխաններ, նախ այն որ մարդիկ անտարբեր են գների փոփոխության նկատմամբ և իրենք չեն ցանկանում հրաժարվել իրանց առանձնատան բարձր գնից և մյուս կողմից նրանք պոտենցիալ վաճառող չեն և ժամկետները շուտ վաճառվելու նրանց չի հետաքրքրում, մյուս կողմից գործարքները հնարավոր է անկում են ապրել այն պարզ պատճառով, որ որոշ բանկեր անշարժ գույքի գրավի դիմաց որոշ ժամանակահատվածում 2009թ. հրաժարվել էին վարկեր տրամադրել, որն էլ գործարքների անկման հիմք է հանդիսացել:

Գրեթե նույն պատկերն է տիրում նաև բազմաբնակարան շենքերի բնակարանների հետ կապված առք ու վաճառքի գործարքների բնագավառում, քանի որ 2006թ. դրանք կազմել են 16083-ը, իսկ 2007թ. գրանցվել է ամենաբարձր նիշը 16478 գործարք, իսկ 2008թ. կտրուկ անկում մինչև 12886 գործարք, այս միտումը շարունակվում է նաև 2009թ. 11257 գործարք և, վերջապես 2010թ. 12635 գործարք: Ստացվում է, որ լավագույն և վատագույն տարիների գործարքների տարբերությունը կազմում է մոտ 5200-ը, իսկ միթե մոտ 30% շուկայում գործարքների քանակի անկումը չէր հանգեցնի գների կտրուկ անկման, սակայն այդ ընթացքում ոչ միայն գները չեն իջել այլ հասել են իրենց գագաթնակետին: Այս միտումներն ավելի խոր են եղել հատկապես Երևանում, քանի որ 2007թ. իրականացվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների 10330 գործարք, իսկ 2008թ. 7903, այսինքն՝ տեղի է ունեցել մոտ 2400 գործարքի անկում, 2009թ. միտումը չնչին է տատանվել և կազմել է 7648 գործարք, իսկ 2010թ. արդեն շուկան ակտիվացել է կատարելով 8630 գործարք: Իհարկե, բավականին դժվար հաշվարկ է իր մեջ պարունակում այն, թե ընդհանուր բազմաբնակարան շենքերի բնակարանների և բնակելի տների շուկաների կորուստն ինչքան է կազմել ՀՀ-ում, սակայն մի բան պարզ է, որ այս շուկայում զգալի տեղաշարժեր գործարքների կրճատումը բերել է, իսկ եթե հնարավոր լիներ վաճառված մակերեսների ընդհանուր ծավալի, գների և գործարքների արտադրյալը կազմել և շուկայի տարողությունը գնահատել ու դրա անկման միտումները, ապա տոկոսային ցուցանիշով կարելի էր ցույց տալ անկման իրական սահմանները: Օրինակ. Երևանում 2007-2008թթ. ընթացքում եթե գործարքները կրճատվել են մոտ 2400-ով, իսկ գործարքների գներն աճել են 15.25%-ով, ապա պարզ թվաբանական հաշվարկներով կարելի է ստանալ, որ շուկայի տարողությունը կրճատվել է մոտ 10%-ով[11]:

Բանկերն այս ոլորտում այնքան էլ ներգրաված չէին, որի պատճառով հիփոթեքային ճգնաժամը Հայաստանում բանկային ճգնաժամի չվերածվեց, այսինքն՝ հնարավոր էր նաև, որ ավելի բացասական զարգացումներ լինեին, սակայն բացասական երևույթներից էր նաև այն, որ 2009թ. կային ավելի մեծ դժվարին և հրատապ խնդիրներ և այս խնդիրը կարծեք թե մնաց ստվերում, սակայն իր բացասական ազդեցությունը թեկուզ չբարձրաձայնված այն ունեցավ:

Տնային տնտեսությունների ավանդներ

Տնտեսության մեջ կարևոր նշանակություն ունեն և վարկերը և ավանդները, որոնք կարող են, հատկապես, ճգնաժամային իրավիճակներում սոցիալական խնդիրների լուծման հիմնական ֆինանսական միջոց հանդիսանալ: Այս համատեքստում փորձենք վերլուծել 2006-2010թթ. ընթացքում ՀՀ տնտեսության մեջ ավանդների ունեցած միտումները, ինչպես նաև պարզել արդյո՞ք տեղի է ունեցել երկրորդ սերնդի «արտարժութային ճգնաժամ» կամ կարելի է ասել նաև սպեկուլյատիվ արժութային ճգնաժամ պայմանավորված ավանդների կազմի փոփոխության հանգամանքով:

Նախ և առաջ՝ փորձենք ներկայացնել ավանդների տոկոսադրույքները, որոնք 2006-2010թթ. ընթացքում տատանվել են 5.17-9.64%-ի շրջանակներում, դրանք բավականին ցածր են եղել 2006-2008թթ. ընթացքում, իսկ ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2009թ. մարտին, այսինքն՝ 1-ին եռամսյակում՝ 9.64%: Ավանդների տոկոսադրույքների բարձրացումը ձեռնտու է ավանդներ ունեցող տնային տնտեսություններին, սակայն խանգարող հանգամանքն այստեղ ինֆլյացիան է, որն իջեցնում է ավանդների իրական տոկոսադրույքը և բարձր է երևում միայն անվանականը: Մյուս կողմից խնդրահարույց է նաև առևտրային բանկերի կողմից միջոցների ներգրավման առումով, այսինքն՝ մարդիկ չունեն դրամական ազատ միջոցներ, որի պարագայում բանկերն առաջարկում են ավելի բարձր տոկոսադրույքներ, որպեսզի ներգրավեն միջոցներ: Վերջինս համամասնական ճնշում է ներքևից գործադրում նաև վարկերի տոկոսադրույքների բարձրացման վրա, իսկ դա հանգեցնում է տնտեսության իրական հատված միջոցների հոսքերի նվազեցմանը և բանկային համակարգ ավանդների մուտք գործելու ընդլայնմանը: Ինչքան բարձր են ավանդների տոկոսադրույքները, այնքան գործարարության միջոցով փող վաստակելու ցանկությունը պակասում է:

Կարևոր նշանակություն ունի նաև ներգրավող ավանդների դրամային և արտարժութային տոկոսադրույքները և դրանց միջև առկա տարբերությունը, ինչպես նաև ըստ ժամկետայնության տոկոսադրույքների փոփոխությունը, քանի որ այդ ցուցանիշների միջոցով

[11] Ենթադրենք կատարվել է 10 գործարք 100 միավոր արժողությամբ և շուկայի տարողությունը կազմում է 1000 միավոր: Մյուս կողմից գործարքներն այս պարագայում կրճատվել են 22%-ով (10330-ից իջել են մինչև 7903), իսկ գներն աճել են 15%-ով: Վերջինս նշանակում է, որ շուկայի տարողությունը կրճատվել է մոտ 100 միավորով (7.8 * 115 = 897), այսինքն՝ 10%-ով, որը տեղի է ունեցել հենց Երևան քաղաքում 2007-2008թթ.:

հնարավոր է պատկերացնել նաև բանկային համակարգում դրամական միջոցների փոփոխության հարաբերակցության, ինչպես նաև արտարժույթի կամ դրամի պահանջարկի մասին:

2006-2010թթ. ընթացքում ՀՀ բանկային համակարգում անընդհատ կերպով ավանդներն աճել են 2006թ. դրանք կազմել են 306.8 մլրդ դրամ, իսկ 2010թ. դեկտեմբերին 702.3 մլրդ դրամ, իսկ ճգնաժամային 2009թ. 656.9 մլրդ դրամ: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ ավանդների տոկոսադրույքներին համահունչ աճում է նաև ավանդների մեծությունը ՀՀ բանկային համակարգում: Ընդհանուր ավանդների մեջ կարևոր նշանակություն ունի նաև դրամով և արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը, ինչպես նաև ավանդների ցպահանջ և ժամկետային լինելու հանգամանքը:

2006թ. տնային տնտեսությունների կողմից տրված բոլոր տեսակի ավանդները կազմել են 114.1 մլրդ դրամ, իսկ 2008թ.՝ 201.8 մլրդ դրամ, որից 97.3 մլրդ դրամ դրամով, իսկ 104.5 մլրդ դրամի արտարժույթով: Այնուհետև, 2009թ. ճգնաժամի ժամանակ տնային տնտեսությունները դրամով ունեցել են 67.1 մլրդ դրամի ավանդ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է մոտ 30.2 մլրդ դրամով, իսկ արտարժույթով ունեցել են 224.5 մլրդ դրամի ավանդներ, այսինքն՝ 124%-ից ավելի արտարժութային ավանդների աճ է գրանցվել: Վերջինս նշանակում է, որ կամ ՀՀ տնային տնտեսությունները մեկ տարվա մեջ կտրուկ հարստացել են ու կարողացել են կուտակել հսկայական արտարժութային ավանդներ, կամ տեղի է ունեցել զուտ սպեկուլյատիվ խաղ, որի արդյունքում արտարժութային ավանդները կրկնապատկվել են, իսկ դրամով ավանդները 30%-ով նվազել: 2010թ. տնային տնտեսությունների դրամով ավանդները կազմել են 92.7 մլրդ դրամ, որը պայմանավորված է նաև դրամով ավանդներին տրվող բարձր տոկոսադրույքով, իսկ արտարժութային ավանդները կազմել են 263.5 մլրդ դրամ:

Այնուհանդերձ ցանկանում ենք բարձրաձայնել մի կարևորագույն խնդրի վերաբերյալ, որը պայմանավորված է ավանդների հոսքերի ցուցանիշի հետ, այսինքն՝ զուտ ավանդների հետ, որոնք ձևավորվում են դրված և վերցված ավանդների տարբերությամբ: Եվ այս խնդիրը ցանկանում ենք դիտարկել եռամսյակային կտրվածքով, չնայած ճգնաժամային 2009թ. տեղի ունեցած իրադարձություններն անգամ ամսեկան, շաբաթական և օրեկան կտրվածքով են աննախադեպ միտումներ նկատվել այս բնագավառում:

Տնային տնտեսությունների ավանդների զուտ հոսքերի եռամսյակային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2006թ. սկսած դրամով ժամկետային ավանդների ամենամեծ հոսք գրանցվել է 2007թ. 4-րդ եռամսյակում 15.5 մլրդ դրամ, իսկ ամենաշատ ժամկետային ավանդ ետ են վերցվել 2008թ. 4-րդ եռամսյակում -13.1 մլրդ դրամ և 2009թ. 1-ին եռամսյակում -34.3 մլրդ դրամ: Դիտարկելով արտարժութային ժամկետային ավանդների միտումները նկատում ենք, որ 2008թ. նույն 4-րդ եռամսյակում 15.7 մլրդ դրամի արտարժութային ավանդներ են դրվել, իսկ 2009թ. 1-ին եռամսյակում գրանցվել է արտարժույթով ավանդների ռեկորդային աճ 54.4 մլրդ դրամ, դա էլ այն պարագայում, երբ դրամն արժեզրկվեց մոտ 22.3%-ով: Բավականին մեծ են եղել նաև արտարժույթով ավանդների աճը 2009թ. 3-րդ եռամսյակում 19.7 մլրդ դրամի:

Ելնելով ավանդ դնելու և ավանդ վերցնելու դրամից արտարժույթի անցնելու միտումներից կարելի է եզրակացնել, որ կամ ՀՀ տնային տնտեսությունները հստակ կանխատեսել են թե ինչ է սպասվելու 2009թ. մարտին և արդեն 2008թ. 4-րդ եռամսյակից սկսել են նախապատրաստական աշխատանքներ տանել, այն է՝ հանել են բանկերից իրենց դրամով պահվող ավանդները դրանք վերածել արտարժույթի և կրկին պահ տվել բանկերին, իսկ 2009թ. արդեն դիտվում է մի այնպիսի երևույթ, որ ավելի շուտ նման է սպեկուլյատիվ խաղի, որը տեղի է ունեցել արտարժույթ դրամ հարաբերակցության փոփոխության առումով:

Ստացվում է այնպես, որ 2009թ. 1-ին եռամսյակում դրամային ավանդների 50%-ից ավելին տնային տնտեսությունները հանել են և փոխարկել արտարժութային ավանդների, որոնք ավելի են մեծացրել մոտ 54.4 մլրդ դրամի չափով արտարժութային ավանդները՝ դրանք հասցնելով 224.5 մլրդ-ի:

Այս երևույթն, իսկապես Հայաստանում տեղի ունեցած արտարժութային ճգնաժամի բացասական սոցիալական ազդեցություն ունեցող երևույթներից մեկն է, որը ստիպել է տնային տնտեսություններին վերանայել իրենց վարքագիծը, սակայն այդքան խելացի վարքագիծ ավանդներ ունեցողների կողմից կորուստներ չունենալու համար դժվար էր ակնկալել, այստեղ ավելի ճիշտ երևույթի վերաբերյալ եղել է ներքին կարգով տեղեկատվության արտահոսք, որն էլ հասցրել է նմանատիպ վարքագծի, հակառակ պարագայում այդքան մեծ տեղաշարժեր և դրամից արտարժույթի անցման գործընթացներ դժվար թե տեղի ունենար, քանի որ հակառակ պարագայում տոկոսադրույքների կրճատման միջոցով բանկերի կողմից կկանխվեր դա:

Ապագա քաղաքականությունն այս բնագավառում պետք է լինի այնպիսին, որ թույլ չտա նման սպեկուլյատիվ վարքագիծ, ինչպես նաև բանկերի կողմից պետք է լինի համարժեք արձագանք՝ կանխելու համար նման բացասական ազդեցությունների լայն շրջանակը:

Փոխանցման ուղի 4. Վարկեր

Տնտեսության մեջ ամենակարևոր ազդեցություն ունեցող տարրերից մեկը ֆինանսական շուկային տոկոսադրույքներն են և պետության կողմից այդ ոլորտում վարվող «թանկ» կամ «էժան» փողերի քաղաքականությունը, որի միջոցով կամ տեղի է ունենում տնտեսության ակտիվացում կամ սառեցում:

Վարկերի և ավանդների տոկոսադրույքներից է մեծամասամբ կախված նաև տնտեսության մեջ տեղի ունեցող հիմնական զարգացումները, իսկ այդ համատեքստում կամ դրա հիմքում նաև ՀՀ ԿԲ-ի ռեպո գործառնությունների տոկոսադրույքները, որոնք 2006-2010թթ. ընթացքում տատանվել են 4.00-7.75% միջակայքում, դրանք շատ ցածր են եղել 2006թ. առաջին կիսամյակում, իսկ իրենց գագաթնակետին են հասել 2008թ. տարեվերջին և 2009թ. առաջին եռամսյակում՝ 7.75%: Դրանք բավականին բարձր են եղել նաև 2010թ. տարեվերջին և կազմել են 7.25%: Այսինքն՝ ՀՀ ԿԲ-ն նախընտրում է իրականացնել թանկ փողերի քաղաքականությունը, կամ տնտեսության ակտիվության թուլացման կամ սառեցման քաղաքականություն: Որի արդյունքում բարձրանում են և՛ վարկերի, և՛ ավանդների տոկոսադրույքները, իսկ դրա արդյունքում էլ տուժում են տնային տնտեսությունները, ձեռնարկությունները և ընդհանրապես տնտեսությունն ամբողջությամբ: 2006-2010թթ. ընթացքում վարկերի տոկոսադրույքները, որոնք սահմանվել են առևտրային բանկերի կողմից տատանվել են 15.56-19.22% միջակայքում, որը նշանակում է, վարկեր ունեցող տնային տնտեսությունները, ձեռնարկությունները և այլն դժվարին վիճակում են հայտնվել, սա լուրջ սոցիալական մտահոգության հիմքեր կարող է ստեղծել, ինչպես նաև առաջացնել տնտեսական ոչ համաչափ զարգացումներ:

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկերի հանրագումարը 2006թ. կազմել է մոտ 260.0 մլրդ դրամ, որից տնային տնտեսություններին վարկ է տրամադրվել 129.4 մլրդ դրամը, այսինքն՝ համարյա կեսը: 2007թ. ընդհանուր վարկերը կազմել են 464.8 մլրդ դրամ, որից տնային տնտեսություններին[12] են հատկացվել 247.7 մլրդ դրամը, այսինքն՝ կեսից էլ ավելին: 2008թ. նախաճգնաժամային տարում ընդհանուր բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերը կազմել են 692.9 մլրդ դրամ, որից տնային տնտեսություններին է տրվել 367.8 մլրդ դրամը: Ճգնաժամային 2009թ. ընդհանուր վարկերը կազմել են 785.5 մլրդ դրամ, իսկ տնային տնտեսությունների մասնաբաժինը եղել է 341.0 մլրդ դրամ, այսինքն՝ արդեն 2009թ. տնային տնտեսությունների վարկեր վերցնելու տեսակարար կշիռը կեսից ավելի քիչ է սկսել կազմել ամբողջական վարկերի կազմում: 2010թ. ընդամենը վարկերը հատեցին մեկ տրիլիոն դրամի սահմանագիծը և կազմեցին 1009.4 մլրդ դրամ, որից տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմում է 411.9 մլրդ դրամ:

2006թ. ՀՀ տնտեսությունում բանկերի կողմից տրվող վարկերը կազմել են 243.6 մլրդ դրամ, որոնք 2010թ. հասել են 941.5 մլրդ դրամ, դա բավականին մեծ առաջընթաց է, 2008թ. դրանք կազմել են 635.8 մլրդ դրամ, իսկ ճգնաժամային 2009թ. 746.8 մլրդ դրամ: Միջին հաշվով դրանք յուրաքանչյուր տարի սկսած 2006թ. աճել են 200.0 մլրդ դրամով, բացառություն է կազմում 2008-2009թթ. ընկած ժամանակահատվածը, երբ աճը վարկերի կազմել է 100 մլրդ դրամ, որը մոտ 100 մլրդ դրամով քիչ է նախորդ տարիների դրամական արտահայտությամբ աճի տեմպերից, այսինքն՝ մոտ 50% վարկերի տրամադրման կրճատման հետ գործ ունենք:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև տրամադրվող վարկերի տարադրամով և դրամով տրված հարաբերակցությունը: 2006թ. 50.12% վարկերը տրվում էին տարադրամով, իսկ 47.31%-ը դրամով: 2007թ. հարաբերակցությունը փոխվում է ի օգուտ դրամի 39.11%-ը տարադրամով վարկեր, իսկ 59.70%-ը դրամով, այսինքն՝ 2007թ. կարելի է համարել դրամի կայունացման կամ դիրքերի ուժեղացման ժամանակաշրջան: Այս միտումը շարունակվել է նաև 2008թ. 38.04% տարադրամով տրամադրվող վարկեր և 60.84% դրամով տրամադրվող վարկեր: Կտրուկ փոփոխություն տեղի է ունեցել ճգնաժամային 2009թ. տարադրամով վարկերը կազմել են 49.78%, իսկ դրամով վարկերը 47.28%, դա նշանակում է, որ մոտ 10%-ով արտա-

[12] Առևտրային բանկերի կողմից տրված դրամային և արտարժութային վարկեր, դրանց ավելացրած վարկային կազմակերպությունների կողմից դրամային և արտարժութային վարկեր:

րժույթով տրամադրվող վարկերի տեսակարար կշիռն ավելացել է, իսկ դրամով տրամադրվող վարկերի տեսակարար կշիռը մոտ 13%-ով նվազել: Բացասական միտումները շարունակվել են 2010թ. տարադրամով վարկերը կազմել են 54.00%, իսկ դրամով վարկերը 40.72%, այս պարագայում պետք է նշել, որ բանկային համակարգում արտարժույթն իր վարկային դիրքերն ամրապնդել է մոտ 15%-ով, իսկ դրամն իր դիրքերը կորցրել է մոտ 20%-ով:

Կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերի հարաբերակցության հետ կապված հարցերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ բոլոր դեպքերում աճել են երկարաժամկետ վարկերը, որը բացատրվում է կարճաժամկետ վարկերի բարձր տոկոսադրույքներով և ավելի մեծ ռիսկայնությամբ: Փորձելով խուսափել նման իրավիճակներից մարդիկ ռիսկերը բաշխել են ավելի երկար ժամանակահատվածի վրա: Բանկերի երկարաձգված և ժամկետանց վարկերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2006թ. երկարաժամկետ երկարաձգված և ժամկետանց վարկեր գրեթե չեն եղել, իսկ երկարաձգված կարճաժամկետ վարկերը կազմել են 1.89%, իսկ կարճաժամկետ ժամկետանց վարկերը 0.67%: 2007թ. վիճակն այս ցուցանիշների որոշ բարելավում է արձանագրել: 2008թ. երկարաժամկետ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել են 0.02 և 0.03% համապատասխանաբար, իսկ երկարաձգված կարճաժամկետ վարկերը կազմել են 0.57%, իսկ կարճաժամկետ ժամկետանց վարկերը 0.50%: 2009թ. բանկերի երկարաձգված վարկերը կազմել են 2.26%, իսկ ժամկետանց վարկերը՝ 0.69%: Վիճակն ավելի է վատացել երկարաձգված վարկերի առումով 2010թ. այն կազմել է 4.87%, իսկ ժամկետանց վարկերը բարելավում են արձանագրել չնչին 0.40%, սա կարելի է համարել 2006թ. սկսած ամենավատ ժամանակահատվածը ՀՀ բանկերի վարկերի տրամադրման առումով, քանի որ այդքան մեծ տեսակարար կշռի վարկային երկարաձգումներ չեն եղել, այսինքն՝ աճում է բանկերի վարկային պորտֆելը, միաժամանակ աճում են նաև երկարաձգված վարկերը և դա այն պարագայում, որ չեն իջնում վարկերի տոկոսադրույքները: Ստացվում է այնպես, որ վարկերը ավելանում են, երկարաձգում են դրանց մարումը, տոկոսադրույքները մնում են բարձր մակարդակի վրա և դրանք չվճարելու ռիսկերն անընդհատ ավելանում են, իսկ դրա հետևանքները կարող են լինել շատ վատ և անկանխատեսելի:

Տնային տնտեսությունների կողմից ստացված վարկերի վերլուծությունը կարող ենք տանել երկու ուղղությամբ, առաջին ուղղությունը պայմանավորված է առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրամադրած դրամով և տարադրամով վարկերի հետ, իսկ մյուս ուղղությունը վարկային կազմակերպությունների կողմից տրամադրած վարկերի հետ: 2006թ. տնային տնտեսություններին տրամադրված դրամով վարկերը կազմել են 55.7 մլրդ դրամ, իսկ 2010թ. դրանք կազմել են 237.3 մլրդ դրամ, այսինքն՝ դրանք աճել են մոտ 4 անգամ, իսկ տարադրամով տրված վարկերը 2006թ կազմել են 62.5 մլրդ դրամ, իսկ 2010թ. դրանք հասել են 131.9 մլրդ դրամ, այսինքն՝ մոտ 2 անգամ: Ստացվում է այնպես, որ տնային տնտեսություններն ավելի հակված են դրամով վարկ վերցնել այլ ոչ թե արտարժույթով: Հարկ ենք համարում նշել, որ դրամով վարկավորման պիկը տնային տնտեսությունների համար եղել է 2008թ.՝ 261.2 մլրդ դրամ, որն անգամ գերազանցում է 2010թ. ցուցանիշը, իսկ 2009թ. այն անկում է ապրել մոտ 50.0 մլրդ դրամով, որը հսկայական կորուստ է ՀՀ տնտեսության համար: Տնային տնտեսությունների կողմից ամենաքիչ արտարժույթով վարկեր վերցվել են 2007թ.՝ 52.5 մլրդ դրամ, իսկ այդ անկումից հետո արտարժույթով վարկերը յուրաքանչյուր տարի աճել են 2008թ. նախաճգնաժամային տարում կազմել են 71 մլրդ դրամի, իսկ 2009թ. 96.4 մլրդ դրամի, այսինքն՝ տնային տնտեսությունների վակային միջոցների կազմը մոտ 25 մլրդ դրամով փոխվել է ի օգուտ արտարժութային վարկերի:

Վարկային կազմակերպությունների մասնակցությունը տնային տնտեսությունների վարկավորմանը 2006-2010թթ. ընթացքում բավականին աճել է: Սակայն այս դրական միտումը նպաստել է նրան, որ այս կազմակերպություններն իրենց կողմն են կարողացել ներգրավել տնային տնտեսություններին և ինչ-որ չափով վարկավորման մեջ փորձել լրացնել բանկերի կողմից տրվող վարկերի մի մասը: Վարկային կազմակերպությունների դրամով տրվող վարկերը տնային տնտեսություններին 2006թ. կազմել են 7.0 մլրդ դրամ, իսկ արդեն 2010թ. 29.9 մլրդ դրամ, ճգնաժամային 2009թ. դրանք կազմել են 21.2 մլրդ դրամ և մոտ 3.0 մլրդ դրամով պակաս են եղել 2008թ.-ից: Արտարժույթով վարկային կազմակերպությունների տրամադրած վարկերը տնային տնտեսություններին 2006թ. կազմել են 4.3 մլրդ դրամ, իսկ 2010թ. 12.9 մլրդ դրամ: 2009թ. ճգնաժամի ժամանակ դրանք հասել են մինչև 11.8 մլրդ դրամ, թռիչքաձև դրանք աճել են 2008թ.-ին 2007թ. 5.9 մլրդ դրամից հասնելով 11.0 մլրդ դրամ:

Փոխանցման ուղի 5. Պետական եկամուտներ

<u>Պետական բյուջեի եկամուտներ</u>

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտները 2008-2010թթ. ընթացքում ամենաբարձր են եղել 2008թ. կազմելով 759.2 մլրդ դրամ, որից հետո սկսված ճգնաժամի արդյունքում դրանք նվազել են՝ կազմելով 676.4 մլրդ դրամ, իսկ արդեն 2010թ. դրանք վերականգնվել են՝ հասնելով 755.8 մլրդ դրամի, սակայն 3.4 մլրդ դրամով պակաս են եղել 2008թ. ցուցանիշից: Ստացվում է այնպես, որ նախաճգնաժամային արդյունքային ցուցանիշներին պետական եկամուտների բնագավառում ՀՀ տնտեսությունը կհասնի միայն 2011թ.-ին: 2009թ. պետական բյուջեի եկամուտների տոկոսային միտումներն ուսումնասիրելիս նկատում ենք, որ դրանք 2008թ. նկատմամբ կրճատվել են մոտ 10.9%-ով, իսկ վատագույն եռամսյակն է եղել 2009թ. 3-րդ եռամսյակը 86.5% անկման ցուցանիշով: Եկամուտների առավելագույն աճի եռամսյակն է եղել 2010թ. 2-րդ եռամսյակը 121.9% ցուցանիշով, այսինքն՝ կարելի է դրանից ելնելով 2009թ. ընդունել որպես ստորին կետ բյուջեի եկամուտների ձևավորման առումով, իսկ 2010թ. 2-րդ եռամսյակը վերականգնման գագաթնակետ: Հետաքրքիր է նաև, որ ՀՆԱ-ի մեջ պետական բյուջեի եկամուտները տոկոսային առումով ունեն նվազման միտում ըստ եռամսյակների, քանի որ սովորաբար ամենաբարձրը դրանք լինում են 1-ին եռամսյակում, իսկ ամենացածրը 4-րդ եռամսյակում, առավելագույն տեսակարար կշիռ արձանագրվել է 2008թ. 1-ին եռամսյակում 31.8%, իսկ նվազագույն 2008թ. 4-րդ եռամսյակում 20.8%: ՀՆԱ-ն ևս ունի սեզոնային բնույթ և այն առաջին եռամսյակում ձևավորվում է տարեկան ՀՆԱ-ի 10-12%-ի սահմաններում, որի պարագայում համամասնական եկամտային ձևավորում կամ բաշխվածություն ունենալու գործոնով կարող է բացատրվել ըստ եռամսյակների ՀՆԱ և պետական բյուջեի եկամուտներ հարաբերակցության տարբերությունները: 2009թ. վերջում այս ցուցանիշը կազմել է 21.8%, որը խոսում է ՀՆԱ-ի մեջ բյուջեի եկամուտների զգալի անկման մասին:

Հարկերի և տուրքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2008թ. դրանք կազմել են 621.0 մլրդ դրամ, իսկ 2009թ. 522.4 մլրդ դրամ, իսկ 2010թ. 594.1 մլրդ դրամ, այսինքն՝ ճգնաժամային 2009թ. դրանք կրճատվել են մոտ 100 մլրդ դրամով, որը հսկայական գումարային մուտքերի անկում է ՀՀ պետական բյուջեի համար, իսկ 2010թ. վերականգնում դեռևս տեղի չի ունեցել քանի 2008թ. համեմատությամբ այն 27 մլրդ դրամով պակաս է: Հարկերի և տուրքերի տոկոսային անկումը 2009թ. կազմել է 84.1%, իսկ ամենաստորին կետում այն գտնվել է 2009թ. 2-րդ եռամսյակում 81.8% ցուցանիշով: Հետագայում արդեն 2010թ. տնտեսության առողջացման հետ մեկտեղ նկատվում է 13.7-22.8% հավելաճ, որը բավականին դրական է ազդել տնտեսության վերականգնման տեմպերի վրա, իսկ աճի գագաթնակետը կրկին 2010թ. 2-րդ եռամսյակն է 122.8% աճի ցուցանիշով: Հարկերի և տուրքերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տարբեր եռամսյակներում ունեցել է տատանողական բնույթ և գտնվել է 16.8-22.4% միջակայքում: Ամենացածր ցուցանիշը եղել է 2009թ. տարեվերջին 16.8%, իսկ ամենաբարձրը 2010թ. տարեսկզբին 22.4%: Այս ցուցանիշի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջետային եկամուտներում տատանվել է 76.3-82.6% միջակայքում, և ընդհանրապես ճգնաժամի ազդեցությունը եղել է այնպիսին, որ խիստ մեծ շեղումներ են առաջացել ցուցանիշների միտումներում, որը տնտեսական անկայունության գնահատականներից է: Առանձին վերցրած պետական տուրքերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ 2008թ. այն կազմել է 22.3 մլրդ դրամ, 2009թ. 19.0 մլրդ դրամ, իսկ 2010թ. 20.0 մլրդ դրամ: Ի տարբերություն հարկային եկամուտների տուրքերն ընդհանուր բյուջետային եկամուտների մեջ ունեն շատ փոքր տեսակարար կշիռ և կազմում են 2.1-3.1%: Իսկ ճգնաժամային տարում բնակչության կողմից տուրքերի մուծմամբ պայմանավորված գործարքների թիվը նվազում է, որի պատճառով էլ դրանք անկում են ապրել: Տուրքերի ամենամեծ անկումը գրանցվել է 2009թ. 3-րդ եռամսյակում և կազմել է 81.8%: Իսկ առավելագույն աճ նկատվել է 2010թ. 3-րդ եռամսյակում 106.6%: Հարկային եկամուտները 2008թ. կազմել են 598.8 մլրդ դրամ, իսկ 2009թ. դրանք նվազել են մինչև 503.3 մլրդ դրամ, իսկ 2010թ. դրանք ավելացել են նախորդ տարվա համեմատությամբ և կազմել են 574.1 մլրդ դրամ: 2009թ. եղել է հարկային եկամուտների կրճատման ստորին կետը և տոկոսային առումով կազմել է 84.1%, իսկ այդ նույն տարվա 2-րդ եռամսյակում կազմել է 81.8%: Ստացվում է այնպես, որ մոտ 18 տոկոսանոց անկումը կարող էր խիստ բացասական ուղենիշ հանդիսանալ ողջ բյուջեի եկամտային քաղաքականության համար: Հարկային եկամուտների աճի գագաթնակետը եղել է 2010թ. 2-րդ եռամսյակում 123.4% մակարդակով, իսկ ընդհանուր տարեկան աճը կազմել է 114.1%:Հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տատանվել է 16.2-25.3% միջակայքում, անկման ստորին կետում գտնվել է 2009թ. 4-րդ եռամսյակում 16.2%, իսկ առավելագույն մակարդակ գրանցվել է 2008թ. առաջին

եռամսյակում 25.3%: Հարկային եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր պետական բյուջեի եկամուտներում ամենամեծն է և կազմել է տարբեր եռամսյակներին 73.4-79.8%, ընդ որում 73.4%-անոց արդյունքը գրանցվել է 2009թ. 1-ին եռամսյակում: Հարկատեսակներից ամենամեծ տեսակարար կշիռը հարկային եկամուտներում ունի ԱԱՀ-ն, որը 2008թ. կազմել է 318.3 մլրդ դրամ, 2009թ. այն կրճատվել է կազմելով 254.1 մլրդ դրամ, իսկ 2010թ. 301.7 մլրդ դրամ: Այսինքն՝ ճգնաժամային տարում ԱԱՀ-ն կրճատվել է մոտ 63 մլրդ դրամով, որը հսկայական կորուստ է ՀՀ պետական բյուջեի համար, սա նշանակում է, որ այդ գումարի հնգապատիկի չափով արտադրանք և ծառայություններ ՀՀ տնտեսությունն ավելի քիչ է ստեղծել կամ ներմուծել 2009թ.: ԱԱՀ-ի անկման ամենաստորին կետը տոկոսային արտահայտությամբ գտնվել է 2009թ. 2-րդ եռամսյակում 74%, իսկ հետագայում 2010թ. 2-րդ եռամսյակում այդ նույն հարկատեսակի աճի տեմպերը ռեկորդային էին և կազմել են 136.1%: ԱԱՀ-ի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 8.3-13.1%, իսկ ճգնաժամի ժամանակահատվածում ամենացածր մակարդակի վրա է գտնվել 2009թ. 3-րդ եռամսյակում:

Հաջորդ հարկատեսակը, որն իր տեսակարար կշռով ամենամեծն է շահութահարկն է, այն 2008թ. կազմել է 86.2 մլրդ դրամ, 2009թ. այն նվազել է մինչև 80.8 մլրդ դրամ, իսկ 2010թ. անկման միտումը շարունակվել է և այն կազմել է 77.8 մլրդ դրամ: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում շահութաբերության անկումը խիստ բացասական է ազդել այս հարկատեսակի գծով կատարվող հավաքագրումների վրա: Շահութահարկի գծով տոկոսային անկումը բարձր է եղել 2009թ. 1-ին եռամսյակում և կազմել է 79.2%, այնուհետև հավաքագրումները վերականգնվել են և դրանք տարեվերջին մոտեցել են 94.9% մակարդակի, իսկ 2010թ. աննախադեպ աճ է նկատվել 1-ին եռամսյակում 118.0%, որը կարելի է ասել պայմանավորված էր նախորդ տարվա նույն եռամսյակի կտրուկ անկման ֆոնով: ՀՆԱ-ի մեջ շահութահարկի տեսակարար կշիռը տատանվել է 2.2-4.1% միջակայքում, իսկ ամենացածրը եղել է 2010թ. 4-րդ եռամսյակում՝ 2.2%, այսինքն՝ գնալով այն անկում է ապրում և խիստ մտահոգիչ պետք է լինի Կառավարության համար, թե ինչով է պայմանավորված շարունակական շահութաբերության անկումը, քանի որ առանց շահույթի մակարդակ ապահովելու մեկ ճգնաժամը չհաղթահարած կազմակերպությունները կհայտնվեն մյուսի մեջ: Եկամտահարկն այն հարկատեսակներից է, որ և նախաճգնաժամային և հետճգնաժամային, ինչպես նաև բուն ճգնաժամի ժամանակահատվածում չի կրճատվել 2008թ. այն կազմել է 53.7 մլրդ դրամ, 2009թ. 60.2 մլրդ դրամ, իսկ արդեն 2010թ. 73.9 մլրդ դրամ: Համադրելով շահութաբերության և եկամտաբերության ցուցանիշները, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց գործունեությունը կարելի է եզրակացնել, որ իրավաբանական անձինք, որոնք շահույթով են հարկվում ավելի շատ են տուժել, քան ֆիզիկական անձիք, որոնք եկամտահարկի հարկման տիրույթում են: Այս երևույթը նկատելի էր նաև խոշոր ու միջին և մյուս կողմից փոքր կազմակերպությունների տվյալների ուսումնասիրության ժամանակ: Եկամտահարկի աճի միտումներից նկատելի է դառնում, որ այն 2009թ. գրեթե բոլոր եռամսյակներում ունեցել է 10% հավելաճ, իսկ առավելագույն աճ է գրանցվել 2-րդ եռամսյակում՝ 112.6%: Այս միտումները շարունակվել են նաև 2010թ. և 1-ին եռամսյակում արձանագրվել է 135.4% աճ, իսկ տարին ամփոփվել է 122.8%-անոց աճով: Այս հարկատեսակի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տատանվել է 1.5-2.9% միջակայքում և ստորին կետում է գտնվել 2008թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում, իսկ ընդամենը պետական բյուջեի եկամուտներում դրա տեսակարար կշիռը տատանվել է 6.9-9.9% միջակայքում:

Ակցիզային հարկը նախաճգնաժամային 2008թ. կազմել է 45.9 մլրդ դրամ, իսկ 2009թ. այն նվազել է՝ կազմելով 42.8 մլրդ դրամ, իսկ 2010թ. վերականգնվել և գերազանցել է 2008թ. մակարդակը հասնելով 48.1 մլրդ դրամի: Ակցիզային հարկի նվազման ստորին կետը եղել է 2009թ. 3-րդ եռամսյակը, իսկ անկումը կազմել է 89.6%, իսկ 2010թ. սկսած սկսել են նկատվել աճի միտումներ տարեսկզբին 103.4%, իսկ տարեվերջին դրանք կազմել են 112.6%: ՀՆԱ-ում այս հարկատեսակի տեսակարար կշիռը տատանվել է 1.3-2.1% միջակայքում և ամենաբարձրն է եղել 2008թ. 1-ին եռամսյակում: Առանձին ուղղակի և անուղղակի հարկատեսակների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ անուղղակի հարկերի (ԱԱՀ, ակցիզային հարկ) դիրքի թուլացում է տեղի ունեցել ճգնաժամի արդյունքում, իսկ շահութահարկը և եկամտահարկը, հատկապես ամրապնդել են իրենց դիրքերը, այսինքն՝ դրական կառուցվածքային տեղաշարժ է նկատվել հարկատեսակների մեջ: Իսկ այն հանգամանքը, որ տնտեսության վրա առավել մեծ ազդեցություն ունեն ուղղակի հարկերը դա ընդունված է ամբողջ աշխարհում, սակայն Հայաստանում հակառակ երևույթն է, որի բացասական արդյունքներն էլ նկատելի դարձան ճգնաժամի արդյունքում:

Հաջորդ խոշոր եկամտային խումբը դրանք մաքսատուրքերն են, որոնք 2008թ. կազմել են 37.3 մլրդ դրամ, 2009թ. դրանք նվազել են հասնելով 25.1 մլրդ դրամի, իսկ 2010թ. կազմել են 29.4

մլրդ դրամ: Մաքսատուրքերի մեծ լինելու դեպքում տուժում է երկրի արտաքին առևտուրը, իսկ քանի որ ՀՀ-ում ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը 3-4 անգամ գերազանցում է արտահանվող ապրանքներին, ստացվում է այնպես, որ վճարված մաքսատուրքերին և ներմուծման հարկերի համամասնական աճում են նաև ներմուծվող ապրանքների գները, որոնք մոտավոր հաշվարկներով կազմում են 32-33%, ստացվում է այնպես, որ միջազգային ապրանքների գներից բավականին բարձր գներով են ՀՀ-ում ապրանքները վաճառվում, այստեղ պետությունը կարող է սահմանել ցածր մաքսատուրքեր և ունենալ բյուջեի եկամուտների կորուստ, իսկ մյուս կողմից կշահի բնակչությունն ունենալով ցածր գներով ներմուծված ապրանքներ: Մաքսատուրքերի անկման ստորին կետը 2009թ. տարեվերջն է 67.3% մակարդակով, իսկ աճի գագաթնակետը 2010թ. երկրորդ եռամսյակը 128.8% աճի մակարդակով: ՀՆԱ-ի մեջ մաքսատուրքերի տեսակարար կշիռը տարբեր եռամսյակներում կազմել է 0.8-1.3%, ամենաբարձրը եղել է նախաճգնաժամային 2008թ. առաջին եռամսյակում, իսկ ամենացածրը՝ 2009թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում: Այստեղից կարելի է հետևություն անել, որ արտաքին առևտրաշրջանառության գագաթնակետը ՀՀ տնտեսության համար 2008թ. 1-ին եռամսյակն է:

Հաստատագրված վճարների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2008թ. դրանք կազմել են 20.3 մլրդ դրամ, իսկ 2009թ. աճել են և հասել 23.8 մլրդ դրամի, իսկ 2010թ. 21.9 մլրդ դրամ: Ստացվում է, որ ճգնաժամային տարում հաստատագրված վճարով աշխատող կազմակերպությունների թիվն ավելի մեծ է եղել, քանի որ անորոշության պայմաններում հաստատագրված վճարները կարող են որոշակի հստակություն մտցնել գործունեության իրականացման դաշտում: Հաստատագրված վճարների աճի գագաթնակետը եղել է 2009թ. 1-ին եռամսյակում 124.5%, իսկ անկման ստորին կետը 2010թ. վերջում 92.3%: ՀՆԱ-ի մեջ դրանց տեսակարար կշիռը կազմել է 0.6-1.1%: Այստեղ ևս նկատվում, որ կա տատանման լայն միջակայք և բավականին մեծ շեղումներ: Հարկային մյուս եկամտատեսակները նպատակահարմար չենք գտնում ուսումնասիրել ՀՀ պետական բյուջեի եկամուտներում դրանց ունեցած փոքր տեսակարար կշռի պատճառով:

<u>Պետական բյուջեի սոցիալական ուղղվածության ծախսեր</u>

2008-2010թթ. ընթացքում ՀՀ կառավարությունը նախընտրել է իրագործել բյուջեի ծախսերի ընդլայնման քաղաքականություն, որի արդյունքում 2008թ. 760.6 մլրդ դրամ ընդհանուր ծախսերը 2010թ. կազմում էին արդեն 856.8 մլրդ դրամ: Ուսումնասիրվող ժամանակահատվածում պետական բյուջեի ընդհանուր ծախսերի ամենաբարձր աճի միտումը նկատվել է 2009թ. 1-ին՝ 110.4% և 2010թ. առաջին և երկրորդ եռամսյակներում 110.9% և 110.3% համապատասխանաբար: Այս ցուցանիշը ՀՆԱ-ի մեջ ամենամեծ տեսակարար կշիռն է ունեցել 2009թ. 1-ին եռամսյակում՝ կազմելով 31.4%, այսինքն՝ տնտեսական անկման ամենախոր կետում պետության կողմից բյուջետային ծախսերը կազմել են ՀՆԱ-ի մոտ 1/3-ը, իսկ արդեն 2010թ. վերջում դրանք մոտեցել են 24.4% մակարդակի: Այս համատեքստում կարևոր նշանակություն է ներկայացնում սոցիալական ուղղվածություն ունեցող ծախսերի խոշորացված խմբերի ուսումնասիրությունը, համապատասխան արժեքային ցուցանիշների, աճի միտումների, ընդհանուր բյուջետային ծախսերի մեջ դրանց տեսակարար կշիռների և ՀՆԱ-ի մեջ դրանց ունեցած մասնաբաժինների հիման վրա:

Դիտարկվող 3 տարիների ընթացքում ՀՀ պետական բյուջեի ծախսային հոդվածներից ամենամեծ մասնաբաժինն ունեցել են սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը, որոնք 2008թ. կազմել են 212.1 մլրդ դրամ, իսկ 2010թ. դրանք հասել են 244.1 մլրդ դրամի, իսկ հետաքրքրականն այն է, որ դրանք ընդամենը 1 մլրդ դրամով են ավելացել 2009թ. համեմատությամբ: Այս ցուցանիշի համամասնական աճի միտումների ուսումնասիրությունն ըստ եռմասյակների ցույց է տալիս, որ դրանք ամենաշատ աճել են 2009թ. 2-րդ եռամսյակում 116.3%, իսկ այնուհետև աճի բարձր տեմպեր չեն նկատվել 2010թ. ընթացքում, քանի որ դրանք տատանվել են 100.3-104.1% միջակայքում: Այսինքն՝ կարելի է հետևություն անել, որ պետության կողմից սոցիալական քաղաքականության ակտիվության գագաթնակետը գտնվում է 2009թ. 3-րդ եռամսյակում: Այս ցուցանիշի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում դիտարկվող ժամանակահատվածում տատանվել է 5.8-11.5% միջակայքում, իսկ առավելագույնը եղել է 2009թ. 1-ին եռամսյակում, իսկ ամենացածրը՝ 2008թ. 4-րդ եռամսյակում: Իսկ ընդհանուր բյուջետային ծախսերում դրանք ամենամեծ տեսակարար կշիռն են ունեցել 2008թ. 1-ին եռամսյակում:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունները 2008-2010թթ. ընթացքում դինամիկ աճել են 103.2 մլրդ դրամից հասնելով 141.8 մլրդ դրամի: Այս ծախսերի ամենացածր անկման տեմպեր են նկատվել 2008թ. համապատասխան եռամսյակների նկատմամբ 2009թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներին՝ կազմելով 98.2% և 95.8%, իսկ առավելագույն աճի տեմպեր են եղել 2010թ. 2-

րդ և 3-րդ եռամսյակներին, կազմելով՝ 139.8% և 133.3% համապատասխանաբար: Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների տեսակարար կշիռը 2008-2010թթ. ընթացքում տարբեր եռամսյակներում ՀՆԱ-ի մեջ ունեցել է 2.8-5.3% մասնաբաժին, ամենաբարձրը՝ 2010թ. 1-ին եռամսյակում և ամենացածրը՝ 2008թ. 4-րդ եռամսյակում: Նույն ցուցանիշի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում տատանվել է 12.8-17.6% միջակայքում, իսկ ամենաբարձր մակարդակը կրկին գրանցվել է 2010թ. առաջին եռամսյակում, իսկ ամենացածրն արդեն 2009թ. 3-րդ եռամսյակում: *Հետաքրքիրն այն, որ այդքան մեծ տատանման միջակայքը ծախսային ոչ արդյունավետ քաղաքականության կամ ֆինանսական անկայունության փաստարկ կարող է հանդիսանալ: Այսինքն՝ հստակ ծախսային քաղաքականության միտումները ոչ միշտ են նկատելի:*

Կրթության ոլորտում 2008թ. պետական ծախսերը կազմել են մոտ 100.0 մլրդ դրամ, որոնք ճգնաժամային 2009թ. ավելացել են՝ կազմելով 105.8 մլրդ դրամ, իսկ 2010թ. դրանք կրճատվել են կազմելով 95.3 մլրդ դրամ: Կրթական ծախսերի աճի գագաթնակետը եղել է 2008թ. 1-ին եռամսյակում 131.0%, իսկ արդեն 2010թ. կրթության ոլորտում արված ծախսերի կտրուկ անկում է սկսվել դրանք կրճատվել են 10-13%-ով: Կրթական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2008թ. վերջի դրությամբ կազմել է 2.7%, իսկ 2009թ. 3-րդ եռամսյակում 4.3%, որը համընկնում է ճգնաժամի անկման ստորին կետի հետ, իսկ արդեն 2010թ. վերջում այն մոտեցել է նախկին 2.7% մակարդակին: Կառավարությունն այստեղ իրականացրել է լուրջ պետական աջակցություն, քանի որ կրթության ոլորտը, որպես սոցիալական ոլորտ ճգնաժամի ընթացքում հայտնվել է խոցելի դիրքում, սակայն 2010թ. միտումները փաստում են, որ աջակցությունն այս ոլորտին պետք է շարունակել:

Առողջապահության ոլորտում կատարվող ծախսերը 2008թ. կազմել են 48.4 մլրդ դրամ, իսկ 2009 և 2010թթ. մոտ են եղել 52.6 մլրդ դրամի: Այս ոլորտում ծախսերի աճի տեմպերն ավելի բարձր են եղել 2009թ. իսկ 2010թ. դրանք հարաբերականորեն իջել են: ՀՆԱ-ի մեջ այս ծախսերի տեսակարար կշիռը տատանվել է 1.2-1.8%-ի շրջանակներում և հիմնականում բարձր են եղել ծախսերը 2009թ. առաջինից մինչև 2010թ. 2-րդ եռամսյակ ընկած ժամանակահատվածում, գտնվելով 1.6-1.8%-ի միջակայքում:

Հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառում կատարվող ծախսերը գրեթե անփոփոխ են մնացել 2008-2010թթ. ընթացքում տատանվելով 16.0-16.3 մլրդ դրամի շրջանակներում չնչին աճ է նկատվել միայն ճգնաժամի տարում: ՀՆԱ-ի մեջ այն ունեցել է 0.4-0.7%, իսկ ընդհանուր ծախսերի մեջ 1.9-2.1% տեսակարար կշիռ: Հետաքրքիրն այն է, որ այս ոլորտում ևս ծախսերն ընդլայնվել են և ՀՆԱ-ի մեջ իրենց մասնաբաժնով 2009թ. 1-ին եռամսյակում: Այսինքն՝ ճգնաժամին տարվա սկզբում դեռ ճգնաժամի հետևանքները չէին երևում և խնայողական ծախսային քաղաքականություն դեռևս չէր իրականացվում:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառում գրանցվել է աննախադեպ ծախսերի աճ: 2008թ. այն կազմել է 8.7 մլրդ դրամ, 2009թ. 10.6 մլրդ դրամ, իսկ արդեն 2010թ. 31.2 մլրդ դրամ: Անկման տեմպերից ամենացածր եռամսյակը եղել է 2009թ. 1-ին եռամսյակը 59.8% մակարդակով, իսկ ամենաբարձրը աճի տեմպը՝ 2010թ. 1-ին եռամսյակը՝ 819.7% մակարդակով, իսկ 2010թ. ընթացքում գրանցվել է նաև 2-րդ եռամսյակում 508.2%, 3-րդում՝ 410.9% և վերջին եռամսյակում 294.1% աճ: Այս ոլորտում կատարված ծախսերն ուղղված են եղել սոցիալապես թույլ խավերին բնակարաններով ապահովմանը, ինչպես նաև առանձին ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծախսերի ավելացմանը և ծառայությունների որակի բարձրացմանը, որի շնորհիվ դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 0.2%-ից հասել է 1.6%-ի: Սա նշանակում է գերապատվություն ճգնաժամի սոցիալական ծախսերի ավելացման տեսանկյունից տրվել է այս ծախսերի խմբին:

Բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև պետական բյուջեի ծախսերի տնտեսագիտական առանձին հոդվածների ուսումնասիրությունը: Ընթացիկ ծախսերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որոնք 2008թ. կազմել են 208.0 մլրդ դրամ, իսկ ճգնաժամային տարում դրանք աճել են հասնելով 240.2 մլրդ դրամի, իսկ 2010թ. 244.0 մլրդ դրամի, այսինքն՝ 2009թ. 32.2 մլրդ դրամի աճի միտումը պահպանել 2010թ. չի հաջողվել, իսկ 2009թ. դա արվել է ճգնաժամի բացասական ազդեցությունները մեղմելու համար: 2009թ. սոցիալական նպաստների և կենսաթոշակների ցուցանիշն ամենաբարձ աճի տեմպեր է ունեցել 2009թ. 3-րդ եռամսյակում, որը կազմել է 116.4%, իսկ ՀՆԱ-ի մեջ տեսակարար կշիռն այս ցուցանիշի տատանվել է 5.7-11.4% միջակայքում, իսկ 2009թ. առաջին եռամսյակից սկսված դրանց տեսակարար կշռի ավելացումն ամբողջ 2009թ. ընթացքում նախանշում է, որ ՀՀ կառավարության կողմից այս բնագավառում իրականացվել է ուժեղ սոցիալական աջակցության քաղաքականություն:

Հաջորդ խոշոր ծախսային ուղղությունը ծառայությունների և ապրանքների ձեռքբերման վրա կատարված ծախսերն են, որոնք 2008թ. կազմել են 134.5 մլրդ դրամ, իսկ 2009թ. ավելացել են՝ հասնելով 152.7 մլրդ դրամի, իսկ 2010թ. կազմել են 160.0 մլրդ դրամ: Ստացվում է այնպես, որ 2009թ. ճգնաժամային տարում Կառավարության կողմից իրականացված քաղաքականությունն ունեցել է պետական գնումների ընդլայնման ուղղվածություն, դրանով իսկ խթանելով ամբողջական պահանջարկը մոտ 28 մլրդ դրամով, այստեղ կա նաև սոցիալական ցանցերով արդյունավետ քաղաքականության իրականացման ուղղվածություն, որը հնարավոր է բացահայտել միայն այս ծախսերի առանձին հատվածների և ուղղությունների արդյունքում: Այս ցուցանիշը 2009թ. տարբեր եռամսյակներում աճել է 112.1-114.3%-ի շրջանակներում, իսկ արդեն 2010թ. եռամսյակային աճի միտումները տատանվել են 100.8-104.8%-ի շրջանակներում, իսկ ՀՆԱ-ի մեջ դրանց տեսակարար կշիռը տարբեր եռամսյակներում կազմել է 3.7-5.8%: Այսինքն՝ այսպիսի քաղաքականությունն ունի ինֆլյացիոն ռիսկեր, որոնցից խուսափելու համար 2010թ. իրականացվել է առավել զսպված պետական գնումների քաղաքականություն:

Դրամաշնորհների ցուցանիշի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանք 2008թ. կազմել են 82.9 մլրդ դրամ, 2009թ. դրանք նվազել են հասնելով 79.7 մլրդ դրամի, իսկ արդեն 2010թ. դրանք կազմել են 94.5 մլրդ դրամ: 2009թ. դրանց տոկոսային անկումը կազմել է 96%, իսկ արդեն 2010թ. արձանագրվել է տոկոսային աճ 118.6%-ի շրջանակներում: Կարելի է ասել նաև, որ Կառավարության համար 2009թ. եղել է նպատակների հստակեցման ժամանակահատված, իսկ 2010թ. դրանց քաղաքականության վերածելու և իրագործման: Տարբեր եռամսյակներում 2008թ. սկսած դրամաշնորհների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տատանվել է 2.3-3.6%-ի շրջանակներում: Դրանք ամենաբարձրն են եղել 2010թ. 1-ին եռամսյակում կազմելով 3.6%, իսկ ամենացածրը 2008թ. 3-րդ եռամսյակում, այսինքն՝ ճգնաժամի հենց սկզբնական փուլում դրամաշնորհների պակաս զգացվել է:

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերում ընդգրկված դրամաշնորհներից բացի պետական բյուջեի ցուցանիշների մեջ կա նաև պաշտոնական դրամաշնորհներ հոդվածը, որն ավելի փոքր է իր տեսակարար կշռով, այն 2008թ. կազմել է 3.8 մլրդ դրամ, 2009թ. 8.1 մլրդ դրամ, իսկ 2010թ. 6.1 մլրդ դրամ: Ստացվում է այնպես, որ պետության կողմից պաշտոնական դրամաշնորհները ճգնաժամի տարում ի տարբերություն մյուս դրամաշնորհների աճել են: 2009թ. դրանց աճը կազմում է 210.4%, իսկ 2010թ. 103.9%, որը փաստում է Կառավարության կողմից դրամաշնորհների միջոցով ճգնաժամի հաղթահարման հստակ ուղղվածություն ունեցող քաղաքականության մասին: Չնայած այն, որ դրանք կազմում են ՀՆԱ-ի 0.1-0.3%-ը այնուհանդերձ նպատակայնությունը դրանք ճիշտ օգտագործելու զգացվում է:

Պետական բյուջեի շրջանակներում տրվող աշխատավարձերը 2008թ. կազմել են 59.2 մլրդ դրամ, ճգնաժամային տարում դրանք աճել են և հասել 70.8 մլրդ դրամ, իսկ 2010թ. դրանք հասել են 73.1 մլրդ դրամի: Այստեղ նկատելի է, որ աշխատավարձերի բնագավառում պետական քաղաքականությունը չի ունեցել «գոտիներ ձգելու» ուղղվածություն, այլ ընդհակառակը՝ այստեղ ևս փորձ է արվել ամբողջական պահանջարկ խթանող քաղաքականություն իրականացնել: 2009թ. աշխատավարձերի աճը կազմել է 119.5%, որը նշանակում է նաև պետության կողմից հստակ խրախուսում իր ծառայողներին, սակայն այդ հանգամանքը կապելով արտադրողականության, ՀՆԱ-ի աճի, կամ տնտեսական և ֆինանսական իրավիճակը բնութագրող ցուցանիշների հետ կարծում ենք, որ աշխատավարձերի նման աճը տնտեսապես հիմնավորված չէ: Սա շատ նման է ամերիկյան սնանկացող բանկերի կառավարիչների վարքագծին, որոնք ճգնաժամի ամենախոր անկման փուլում հսկայական պարգևատրումներ (bonus) էին տալիս իրենք իրենց, որի դեմ էր ուղղված 90%-անոց բոնուսների հարկման քաղաքականությունը: Հետաքրքիր է նաև այն, որ պետական աշխատավարձերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տատանվել է 1.5-2.8%-ի շրջանակներում և իր առավելագույն մակարդակին է հասել 2009թ. 1-ին եռամսյակում՝ 2.8%:

Սուբսիդիաները 2008թ. կազմել են 22.1 մլրդ դրամ, 2009թ. դրանք կրճատվել են կազմելով 19.0 մլրդ դրամ, իսկ 2010թ. 17.8 մլրդ դրամ, որն արդյունք է նպատակային հատկացվող դրամական միջոցների կրճատման, այսինքն՝ բացակայում են հստակ նախագծերը, որոնք կարելի է սուբսիդավորել, իսկ միջոցների բացակայության կամ ճգնաժամային երևույթների առկայության պարագայում, դրանց ֆինանսավորման նկատմամբ պայմանները խստացվում են, իսկ ակնկալվող արդյունքների հավաստիությունը բարձրացվում է, որն էլ պատճառ է հանդիսացել դրանց նվազման: Սուբսիդիաների եռամսյակային աճի միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2009թ. սկսած դրանք ունեցել են 100%-ից ցածր մակարդակ, բացառությամբ 2010թ. 1-ին եռամսյակի 104.2%, նվազագույն անկման մակարդակ նկատվել է 2009թ. 3-րդ եռամսյակում 79.3%, որը կարելի է ասել ճգնաժամի անկման մեծ տիրույթում է գտնվում:

Փոխանցման ուղի 6. Օտարերկրյա աշխատանքի շուկաներ

ՀՀ տնտեսության մեջ տրանսֆերտներն ու դրսից ներհոսող դրամական միջոցներն արտարժույթի տեսքով ունեն կարևոր տնտեսական խթանիչ նշանակություն: Եվ մյուս կողմից դրանք աղքատության կրճատման գործում ունեն շատ մեծ կարևորություն:

Ուսումնասիրելով տրանսֆերտների և դրամական միջոցների հոսքերը Հայաստան՝ նկատում ենք, որ դրանք սովորաբար ունեն սեզոնային բաշխվածություն և ամենափոքրն են 1-ին եռամսյակներում, իսկ գագաթնակետին են հասնում տարվա 3-րդ որոշ դեպքերում էլ 4-րդ եռամսյակներում: Վերլուծելով ընդհանուր դրամական հոսքերի ցուցանիշը, որի մեջ պայմանականորեն ներառել ենք աշխատողների (ներառյալ սահմանային, սեզոնային և այլն) եկամուտները, աշխատողների դրամական փոխանցումները, այլ տրանսֆերտները (սփյուռքից ստացված միջոցները) նկատում են, որ դրանք 2006թ. կազմել են 1.286 մլրդ ԱՄՆ դոլար, 2007թ. դրանք ավելացել են մոտ 380 մլն ԱՄՆ դոլարով, այս միտումները շարունակվել են նաև 2008թ. և դրանք հասել են 2.090 մլրդ ԱՄՆ դոլարի: 2009թ. դրանք անկում են ապրել մոտ 600 մլն ԱՄՆ դոլարով, 2010թ. ավելացել են կազմելով 1.613 մլն ԱՄՆ դոլար:

2006-2010թթ. ընդհանուր տրանսֆերտների և դրամական միջոցների ներհոսքի եռամսյակային միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ամենացածրն են եղել 2006թ. 1-ին եռամսյակում 226.0 մլն ԱՄՆ դոլար, իսկ ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է 2008թ. 3-րդ եռամսյակում, որը պայմանականորեն համարում ենք նաև ՀՀ տնտեսության գագաթնակետ և կազմել է 650.7 մլն ԱՄՆ դոլար: 2008թ. 4-րդ եռամսյակում ընդհանուր ներհոսքը կազմել են 578.5 մլն ԱՄՆ դոլար, որից հետո 2009թ. 1-ին եռամսյակում նկատվում է ամենակտրուկ անկումը մոտ 480 մլն ԱՄՆ դոլար, հետագայում, իհարկե, աճի տեմպերը վերականգնվում են, սակայն 2009թ. տարեվերջի 448.7 մլն ԱՄՆ դոլար մուտքերը Հայաստան նախորդ տարվա համեմատությամբ մոտ 200 մլն ԱՄՆ դոլարով քիչ են:

Դիտարկելով 2006թ.-ից աշխատողների (ներառյալ սահմանային, սեզոնային և այլ) եկամուտները նկատում ենք, որ 2006թ.-ին դրանք ամենաբարձրն են եղել 3-րդ եռամսյակում 168.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2007թ. դրանք աճել են և վերջին 4-րդ եռամսյակում հասել են 233.9 մլն ԱՄՆ դոլարի: Այս ցուցանիշը աճ է արձանագրել նաև նախաճգնաժամային 2008թ.-ին և կազմել է 3-րդ եռամսյակում 291.4 մլն ԱՄՆ դոլար, իհարկե նախաճգնաժամային Հայաստանի համար, իսկ օրինակ՝ ՌԴ-ում բավականին ծանր է եղել նաև 2008թ., իսկ ՀՀ-ում տրանսֆերտներ հիմնականում ուղարկվում են ՌԴ-ից: 2009թ. անկման տեմպերը խիստ ակնհայտ են պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցություններով, քանի որ արդեն 2009թ. 1-ին եռամսյակում այս ցուցանիշը կազմել է 119.7 մլն ԱՄՆ դոլար, որը 2006թ.-ից սկսած ամենացածր մակարդակն է, իսկ 2009թ. 4-րդ եռամսյակում այն կազմել է 202.9 մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ տարվա նույն եռամսյակից ցածր է 52 մլն ԱՄՆ դոլարով: 2010թ. այս ցուցանիշի աճի տեմպերը սկսել են վերականգնվել:

Հայաստանից դուրս աշխատողների դրամական փոխանցումները 2006-2010թթ. ընթացքում տատանվել են 11.5-40.6 մլն ԱՄՆ դոլարի շրջանակներում, իսկ ամենաբարձրը դրանք եղել են 2008թ. 3-րդ եռամսյակում: Այլ տրանսֆերտներ ՀՀ տնտեսություն 2006-2010թթ. ընթացքում ամենաշատ մուտք գործող միջոցներն են, որոնք ամենացածրը եղել են 2006թ. 1-ին եռամսյակում՝ 80.2 մլն ԱՄՆ դոլար, դրանք առավելագույն կետին են հասել իրենց 2008թ. 3-րդ եռամսյակում՝ 318.8 մլն ԱՄՆ դոլար: Ճգնաժամային 2009թ. դրանք ամենաբարձն են եղել 2009թ. 4-րդ եռամսյակում 219.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը 2009թ. 1-ին եռամսյակում 124.5 մլն ԱՄՆ դոլար: Ինչ վերաբերում է 2010թ., ապա նվազման միտումները ևս շարունակվում են: Կարևոր ենք համարում նշել, որ ՌԴ տնտեսության մեջ նկատված անկման պատճառով են հիմնականում ՀՀ տնտեսություն ուղարկվող դրամական միջոցները նվազել, և քանի որ հայ միգրանտները հիմնականում զբաղված են ՌԴ շինարարության և առևտրի ոլորտներում, այդ իսկ պատճառով փորձենք ներկայացնել այդ ոլորտների զարգացման կամ անկման հիմնական միտումները:

ՌԴ ՀՆԱ-ն սկսած 2006թ. յուրաքանչյուր եռամսյակ նախորդ եռամսյակի նկատմամբ աճ է արձանագրել և իր ամենաբարձր կետին է հասել 2008թ. 3-րդ եռամսյակում 5,036.9 մլրդ ռուբլի, որից հետո անկում է ապրել, իսկ 2009թ. 1-ին եռամսյակում, այն գրեթե հավասարվել էր 2006թ. 2-րդ եռամսյակի ցուցանիշին և անգամ 2010թ. վերջին 4-րդ եռամսյակի դրությամբ դեռ ՌԴ տնտեսությունը չէր վերադարձել 2008թ. 3-րդ եռամսյակի մակարդակին: Այս պայմաններում կարևոր է նշել, որ ՌԴ տնտեսության մեջ շինարարության ոլորտն իր իներցիոն աճի տեմպերը շարունակել է նաև 2008թ. 4-րդ եռամսյակում ևս, իսկ արդեն սկսած 2009թ. 1-ին եռամսյակից շինարարության ոլորտը կտրուկ անկում է ապրել և չնայած եռամսյակային աճի տեմպերին

յուրաքանչյուր նախորդ եռամսյակի նկատմամբ, այնուամենայնիվ նախորդ տարվա նույն եռամսյակների նկատմամբ անկման տեմպերն ակնհայտ են: Հարկ ենք համարում նաև նշել, որ ի տարբերություն 2009թ.-ի 2010թ. շինարարության ոլորտի անկման տեմպերը խորացել են, այսինքն՝ ավելի բարենպաստ էր շինարարության համար 2009թ. քան 2010թ.-ը:

Համաշխարհային Բանկի փորձագետ էրսադոյի (2010) կողմից կատարված հետազոտության համաձայն ՀՀ միգրանտների զբաղվածությունն արտասահմանում 2009թ. ունեցել է այնպիսի պատկեր, որ շինարարության ոլորտում են եղել զբաղված միգրանտների 79%-ը, իսկ դա նշանակում է, որ ՀՀ տնտեսության արտասահմանյան շինարարական ընկերություններում և, հատկապես, ՌԴ-ում աշխատող հայ միգրանտները զրկվել են միջոցներ ուղարկելու հնարավորությունից, կամ կորցրել են իրենց աշխատանքը: էրսադոյի վերլուծություններից կրկին ակնհայտ է դառնում, որ հայ միգրանտների շարժը դեպի Ռուսաստան 2008թ. կազմել է ամբողջ հայ միգրանտների 83%-ը, իսկ արդեն 2009թ. այն իջել է մինչև 72%: Իսկ եթե հաշվի առնենք ՌԴ տնտեսության մեջ տեղի ունեցած անկումը և շինարարության ոլորտում հայ միգրանտների զբաղվածության տեսակարար կշիռը, ապա միանգամից ակնհայտ է դառնում, թե ինչո՞ւ ՀՀ տնտեսության մեջ 2009թ. նկատվեց այդքան մեծ դրամական հոսքերի անկում: Կարելի է նաև ենթադրել, չնայած տվյալների բացակայությանը, որ ՌԴ շինարարության ոլորտում 2010թ. անկման պատճառով դրամական մուտքերը Հայաստան այս ոլորտից շարունակել են կրճատվել, իսկ 2009թ.-ի համեմատությամբ 2010թ. 125 մլն ԱՄՆ դոլարի ներհոսքի ավելացումն ապահովել է այլ ոլորտների հաշվին:

ՌԴ-ի առևտրի ոլորտում, որն իր մեջ ընդգրկում է մանրածախ առևտուրը, ավտոմեքենաների վերանորոգումը և այլն ևս անկում է ապրել և ամենավատ վիճակում է հայտնվել 2009թ. կարելի է ասել 2009թ. առաջին 3 եռամսյակներում անկման տեմպերը եղել են բավականին մեծ, վերականգնում սկսել է միայն 2009թ. 4-րդ եռամսյակից, անկման միտումներ են նկատվել նաև 2010թ. 2-րդ եռամսյակում, այնուհետև աճի տեմպերն ընդլայնվել են և իրենց մաքսիմումին են հասել 2010թ. 4-րդ եռամսյակում: Հարկ ենք համարում նշել, որ արտերկրում հայ միգրանտների 8%-ը զբաղված է առևտրի ոլորտում, վերջինս նշանակում է, որ այս ոլորտի դրամական միջոցների ներհոսքի կրճատման ժամանակահատվածը եղել են 2009թ. երեք եռամսյակները, որից հետո նկատվել է ակտիվություն:

2008 և 2009թթ. ընթացքում փոխվել է նաև միգրացիոն հոսքերի աշխարհագրությունը մարզերի և Երևան քաղաքի միջև: 2009թ. միգրացիոն հոսքերը ավելացել են և՛ Երևանում, և՛ մարզերում, Երևանում դրանք 2009թ. աճել են 6%-ից հասնելով մինչև 11%, այսինքն՝ մարդիկ փորձել են մայրաքաղաքում հաղթահարել ճգնաժամը, իսկ մարզերում 3%-ից հասել է 9%-ի, այսինքն՝ կարելի է նաև ասել, որ ՌԴ-ում միգրանտները, որոնք չեն մեկնել 2009թ. գրեթե նույն կրճատման համամասնությամբ բաշխվել են Երևանի և մարզերի միջև:

Արտասահմանից դրամական փոխանցումների և տրանսֆերտների ազդեցությունն աղքատության կրճատման գործում բավականին մեծ է եղել, քանի որ տարբեր տարիների սկսած 2004թ. այն 4-7% է եղել: Այսպիսով, եթե 2006թ. փաստացի աղքատությունը կազմել է 27% այն մարդկանց մոտ ովքեր դրսից ունեցել են փոխանցումներ կամ ընթացիկ տրանսֆերտներ, ապա այն մարդկանց մոտ ովքեր զրկված են եղել այդ հնարավորությունից աղքատությունը կազմել է 31%: 2009թ. տրանսֆերտներ չստացողների մոտ աղքատությունը հասել է 34%-ի, իսկ ստացողների մոտ եղել է 27% մակարդակի վրա, այսինքն՝ սոցիալական դրական ազդեցությունը տրանսֆերտների կամ դրամական փոխանցումների կազմում է 7%-ային կետ: 2008թ.-ին, այն է՝ նախաճգնաժամային տարում իրավիճակը փոքր-ինչ ավելի դրական էր և աղքատությունը փաստացի 24% մակարդակի վրա էր այն մարդկանց մոտ, ովքեր ունեին աջակցություն դրսից, իսկ մյուս խմբի մոտ 30%, այսինքն՝ կար մոտ 6 միավորի տարբերություն: Սա խոսում է այն մասին, որ աղքատության ընդգրկվածության մակարդակի նվազման գործում տրանսֆերտները և միգրանտ հայերի կողմից ուղարկվող դրամական միջոցները բավականին մեծ դրական սոցիալական ազդեցություն ունեն: Եվ հետաքրքիրն այն է, որ թեկուզ ճգնաժամի առկայությանը, Համաշխարհային Բանկի փորձագետ էրսադոն գալիս է այն եզրակացության, որ աղքատությունը շարունակում է նվազել, որից կարելի է հետևություն անել, որ հայերն ունեն ճգնաժամային իրավիճակներին դիմակայելու մեծ ունակություն: Հետաքրքիր է նաև այն, որ այն տնային տնտեսությունները, որոնք ստանում են դրսից դրամական միջոցներ, ավելի մեծ հակվածություն ունեն խնայել, որն էլ նրանց օգնում է նաև դուրս գալ ավելի բարդ տնտեսական իրավիճակներից, անգամ դրամական հոսքերը պակասելու իրավիճակում: Մյուս կողմից նրանք հակված են այդ միջոցները ծախսել կրթական, առողջապահական և այլ ծառայությունների վրա, որն էլ ուղղված է նրանց բարեկեցության բարձրացմանը և սոցիալական վիճակի լավացմանը:

ԲԱԺԻՆ II ՃԳՆԱԺԱՄԻ ՈՒՂԱԿԻ (ԱՆՄԻՋԱԿԱՆ) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր առմամբ իրական դրամական եկամուտները և դրամային արտահայտությամբ սննդամթերքի սպառումը սեփական տնտեսությունից աճեց, իսկ դրամային եկամուտների կառուցվածքում սոցիալական նպաստների և կենսաթոշակների և այլ եկամուտների (պարտք, խնայողությունների օգտագործում և այլն) խմբերի մասնաբաժինների մեծացումը մատնանշում է սոցիալական ապահովության համակարգի և տնային տնտեսությունների որդեգրած ռազմավարությունների կարևորությունը ճգնաժամի հաղթահարելու գործում: Քաղաքային, ինչպես նաև գյուղական բնակավայրերում դրամական արտահայտությամբ սննդամթերքի սպառումը սեփական տնտեսությունից (ներառյալ օգնություն) աճեց ճգնաժամային տարում: Իրական դրամական եկամուտների աճ է արձանագրվել բոլոր դեցիլային խմբերում: Ընդհանուր առմամբ դրամական եկամուտների կառուցվածքում բոլոր դեցիլային խմբերում աճել է սոցիալական ապահովության և նպաստների, ինչպես նաև այլ եկամուտների աղբյուրների դերը (բացառությամբ VI դեցիլային խմբի): «Եկամուտներ աշխատանքից» աղբյուրից ստացվող իրական եկամուտների աճ է արձանագրվել IV-IX դեցիլային խմբերում, մինչդեռ I-III դեցիլային խմբերում այս աղբյուրից ստացվող իրական եկամուտների անկում է արձանագրվել: Իսկ ինչ վերաբերում է ՀՀ-ից դուրս ստացվող բարեկամներից ստացվող եկամուտներին, ապա, ընդհանուր առմամբ, միջինից բարձր և բարձր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունները սկսել են դոլարային արտահայտությամբ ավելի շատ գումարներ ստանալ (VII-X դեցիլային խմբեր): Սննդամթերքի իրական սպառումը, ընդհանուր առմամբ, ճգնաժամի տարում բոլոր դեցիլային խմբերում աճեց, իսկ ոչ պարենային ապրանքների իրական սպառումը կրճատվեց, սակայն այն հիմնականում պայմանավորված է եղել V-X դեցիլային խմբերով: Ծառայությունների իրական սպառման աճ է արձանագրվել աղքատ I-II, ամենահարուստ և VI դեցիլային խմբերում: Իսկ որոշ խմբերի իրական ծախսերի ավելացումը կամ կրճատումը արտացոլել է ՀՀ տնային տնտեսությունների կողմից որդեգրած ճգնաժամը հաղթահարելու ռազմավարությունները: Աղքատությունն աճեց, սակայն կտրուկ աճ չնկատվեց ճգնաժամի ժամանակ, Կառավարության հատկացրած տրանսֆերտների շնորհիվ:

Եկամուտներ (դրամական և ոչ դրամական)

Դրամական եկամուտներ

Ընդհանուր առմամբ ՀՀ բնակչության մեկ շնչի դրամական եկամուտների կառուցվածքում 2009թ. նախորդ տարվա նկատմամբ կենսաթոշակներից և նպաստներից, վարձու աշխատանքից, ինչպես նաև այլ եկամուտներից մասնաբաժինների աճ է արձանագրվել, մինչդեռ ՀՀ-ից դուրս գտնվող բարեկամներից ստացվող տրանսֆերտները պահպանեցին իրենց մասնաբաժինը հիմնականում, մեծ գումարներ ստացողները: Տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով իրական դրամական եկամուտները[13] (միջին ամսեկան), ընդհանուր առմամբ, 2009թ. աճել են 9.1%՝ կազմելով 27,116 դրամ[14]: Գյուղական բնակավայրերում մեկ շնչի հաշվով իրական դրամական եկամուտների (միջին ամսեկան) աճը կազմել է 10.8%, իսկ քաղաքայինում՝ 8.2%, սակայն քաղաքային բնակավայրում մեկ շնչի հաշվով եկամուտները գերազանցնում էին գյուղականին 1.4 անգամ (21,342 դրամը 30,162 դրամի համեմատ): Եկամուտների իրական աճ է արձանագրվել կենսաթոշակներից և նպաստներից (17.7%), այլ եկամուտների (50.8%) և վարձու աշխատանքից ստացվող (10.3%) եկամուտների աղբյուրներից *(տե՛ս, գծապատկեր 2)*, որոնց մասնաբաժինների ընդհանուր եկամուտների կառուցվածքում աճեց: Թեպետ տրանսֆերտներից ստացվող եկամուտների իրական աճ է արձանագրվել (4.3%), սակայն այս աղբյուրի մասնաբաժինն ընդհանուր եկամուտների մեջ նվազել է, որը հիմնականում պայմանավորված է եղել ՀՀ-ում ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտների ծավալների իրական կրճատմամբ (-20.3%): Չնայած նրան, որ տրանսֆերտները դեպի ՀՀ 2009թ. նախորդ տարվա նկատմամբ (աշխատողների դրամական փոխանցումներ, սփյուռքից տրանսֆերտներ, աշխատողների (ներառյալ՝ սահմանային, սեզոնային

[13] Իրական դրամական եկամուտների հաշվարկի հիմքում ընկած է ՍԳԻ-ին, մինչդեռ, ոչ դրամական եկամուտներ (սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից) պարագայում՝ պարենային ապրանքների ինդեքսը (բացառած ոգելից խմիչք և ծխախոտ):

[14] Նշում՝ հետայսու եկամուտ ասելով ի նկատի ունեն տնային տնտեսության մեկ շնչի հավով միջին ամսեկան դրամական եկամուտը, եթե այլ բան չի նշվում:

և այլ) եկամուտներ) կրճատվեցին 29.8%-ով՝ ԱՄՆ դոլարով արտահայտված, սակայն գումարային առումով ՀՀ-ից դուրս գտնվող բարեկամներից ստացվող տրանսֆերտներից իրական եկամուտները դրամական արտահայտությամբ, ընդհանուր առմամբ, 8.1% աճ արձանագրեցին (տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով), իսկ մասնաբաժինը եկամուտների կառուցվածքում մնաց նույնը (8.3%), մինչդեռ ՀՀ-ում ապրող բարեկամներից ստացվող մասնաբաժինը կազմեց՝ 1.3%: ՀՀ-ից դուրս գտնվող բարեկամներից ստացված տրանսֆերտների դրամային արտահայտությամբ աճը, հիմնականում պայմանավորված է նրանով, որ բավականին բարձր գումարներ ստացողները սկսել են ավելի շատ գումարներ ստանալ, մինչդեռ փոքր գումարներ ստացողներն են տուժել 2009թ. նախորդ տարվա նկատմամբ[15]: Հետաքրքրական է նշել, որ 2007թ.-ից սկսած վարձու աշխատանքից մասնաբաժինը, ընդհանուր առմամբ, էական փոփոխության չի ենթարկվել (54.7% 2009թ.): Իսկ ինքնազբաղվածությունից մասնաբաժինը 2006թ.-ից նվազել է և 2009թ. կազմել է 5.5% (2006թ. 14.4%-ի փոխարեն), ինչը փաստում է այն մասին, որ նախքան ճգնաժամը (2007-2008թթ.) աճել է եկամտի այլ աղբյուրների դերը: Եթե կախվածությունն այլ եկամտի աղբյուրներից (պարտք, խնայողությունների օգտագործում, և այլն) 2006թ.-ից սկսել է նվազել, ապա ընդհանուր առմամբ, 2009թ. նախորդ տարվա համեմատ այս աղբյուրի մասնաբաժինը եկամուտների կառուցվածքում աճել է, ինչը խոսում է այն մասին, որ այլ եկամուտների աղբյուրներից ստացվող իրական եկամուտների կրճատմանը զուգընթաց տնային տնտեսություններն արտաքին աղբյուրներից ստացվող եկամուտների և սեփական խնայողությունների օգտագործման օգնությամբ կկարողանային հաղթահարել ճգնաժամը: 2006թ. ի վեր աճել է կենսաթոշակների և նպաստների դերը դրամական եկամուտների կառուցվածքում, իսկ 2008թ. նկատմամբ 2009թ. այս աղբյուրից ստացվող եկամուտների իրական աճ է գերազանցել է 50%-ը: Այս եկամտի խումբը կազմել է դրամական եկամուտների 20% ընդհանուր կառուցվածքի մեջ (2006թ. 13.9%-ի փոխարեն), ինչը շեշտադրում է այս եկամտի տեսակի կարևորությունը տնային տնտեսությունների դրամական եկամուտների մեջ, ինչպես նաև Կառավարության սոցիալական ապահովության համակարգի դերը ճգնաժամի հաղթահարման գործում:

Գծապատկեր 2

Դրամական եկամուտների կառուցվածք մեկ շնչի հաշվով (միջին ամսական), 2009թ.



Աղբյուր՝ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ

[15] Թեպետ 2009թ. նախորդ տարվա նկատմամբ միջին տարեկան ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է մոտ 18.7%-ով, իսկ տրանսֆերտները (աշխատողների դրամական փոխանցումներ և սփյուռքից տրանսֆերտներ, աշխատողների (ներառյալ սահմանային, սեզոնային և այլ) եկամուտներ) դոլարային արտահայտությամբ նվազել էին 29.8%-ով, ապա դրամային արտահայտությամբ (անվանական) նույնիսկ կարող էր աճ արձանագրել նախորդ տարվա նկատմամբ: Օրինակ, եթե մեկ տնային տնտեսությունը ստանում էր 100 ԱՄՆ դոլար, որը 2009թ. միջինում կազմել էր 35,097, դրամ, ապա գումարի կրճատման պարագայում՝ 70.2 ԱՄՆ դոլար ստանալու պարագայում, այն միջինում կկազմեր 25,490 դրամ: Իսկ քանի որ, նկատվել է դրամային արտահայտությամբ աճ, սա նշանակում է, որ տնային տնտեսությունները, որոնք ստանում էին բավականին մեծ գումար սկսել են ավելի շատ ստանալ, իսկ կրճատումը տեղի է ունեցել այն տնային տնտեսություններում, որոնց փոխանցումները մեծ գումարներ չեն կազմել:

Դրամական եկամուտները քաղաքային բնակավայրերում

Քաղաքային բնակավայրերում աշխատավարձերի դերն աճեց, որպես եկամտի հիմնական եկամուտ, որին հետևեցին նպաստներ և կենսաթոշակներ եկամտի խումբը, որոնք իրական աճ արձանագրեցին ճգնաժամի տարում: 2009թ. նախորդ տարվա նկատմամբ քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով առաջանային համարվող վճարովի աշխատանքից եկամուտների, ինչպես նաև կենսաթոշակներից և նպաստներից իրական աճ արձանագրվեց (համապատասխանաբար՝ 15.4 և 17.7%): Իսկ այս երկու աղբյուրների համապատասխան մասնաբաժինները կազմեցին՝ 64.9 և 18.5% (եկամուտների 83.4%, իսկ ՀՀ-ից դուրս ստացվող տրանսֆերտների հետ միասին 92.0%): Այլ եկամուտներից ստացվող եկամուտների իրական աճը կտրուկ չէր 34.0%, համեմատած գյուղական բնակավայրերի հետ 71.2%, իսկ մասնաբաժինը եկամուտների կառուցվածքում՝ 3.1% (գյուղական բնակավայրերի 8.0%-ի համեմատ): Իսկ Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտների դրամով արտահայտված եկամուտների իրական աճը կազմեց 11.3% մասնաբաժինը: Քաղաքային բնակավայրերում, հատկապես, կարևորվեց ներքին աշխատանքի շուկայի դերը, որպես եկամտի առաջնային աղբյուր:

Դրամական եկամուտները գյուղական բնակավայրերում

Գյուղական համայնքներում կախվածությունը կենսաթոշակներից և նպաստների, ինչպես նաև այլ եկամտի աղբյուրներից ավելի մեծացավ ճգնաժամի տարում: 2009թ. նախորդ տարվա նկատմամբ երկու աղբյուրներից ստացվող եկամուտների իրական աճ է արձանագրվել՝ կենսաթոշակների և նպաստների 25.4% և այլ եկամուտների 71.2%, որոնց մասնաբաժինը եկամուտների կառուցվածքում համապատասխանաբար կազմեցել է՝ 26.6 և 8.0%: ՀՀ տարածքից դուրս ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտներից դրամային եկամուտների մասնաբաժինը եկամուտների մեջ՝ 8.4% էր, իսկ իրական աճը դրամական արտահայտությամբ աճեց 9.8%: Գյուղմթերքի և գյուղատնտեսական կենդանիների վաճառքից ստացվող եկամուտների մասնաբաժինն ընդհանուր եկամուտների մեջ մեկ շնչի հաշվող 2006թ.-ից սկսած սկսեց նվազել (29.0%-ից դառնալով 21.6% 2009թ.), իսկ 2009թ. նախորդ տարավ նկատմամբ, եկամուտների այս աղբյուրի իրական աճը կազմեց 7.1%: Նմանատիպ միտում է նաև արձանագրվել ինքնազբաղվածությունից ստացվող եկամուտների մասնաբաժնում ընդհանուր եկամուտների մեջ՝ 12.6%-ից դառնալով 4.0%: Իսկ վարձու աշխատանքից ստացվող եկամուտների մասնաբաժինը 2009թ. կրճատվեց նախորդ տարվա նկատմամբ (38.0%-ից դառնալով 34.0%), իսկ իրական աճր՝ 0.3% է կազմել: 2009թ. կենսաթոշակներից և նպաստներից եկամտի մասնաբաժինը գերազանցեց գյուղմթերքի և գյուղատնտեսական կենդանիների վաճառքից ստացվող եկամուտների մասնաբաժնին, ինչը, հատկապես գյուղական համայնքներում կարևորեց Կառավարության սոցիալական ապահովության համակարգի դերը ճգնաժամի հաղթահարման գործում:

Դրամական եկամուտներն ըստ դեցիլային խմբերի

Բոլոր դեցիլային խմբերում տնային տնտեսության մեկ շնչի հաշվով դրամական իրական եկամուտների աճ է արձանագրվել 2009թ. նախորդ տարվա նկատմամբ, սակայն տարբեր դեցիլային խմբերում աճը պայմանավորված է եղել տարբեր եկամտի աղբյուրներից ստացվող եկամուտների փոփոխությամբ: Ճգնաժամի տարում նախորդ տարվա նկատմամբ բոլոր դեցիլային խմբերում տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսեկան իրական եկամուտներում արձանագրվել է աճ, սակայն տարբեր սոցիալական ազդեցությունը փոխանցող ուղիները տարբեր կերպ են ազդել տարբեր դեցիլային խմբերի տնային տնտեսությունների վրա:

«Տեղական (ներքին) աշխատանքի շուկա» փոխանցման ուղի

«Տեղական աշխատանքի շուկա» փոխանցման ուղին բացասաբար է ազդել աղքատության գծից ներքև գտնվող դեցիլային խմբերի (I-III) վրա ճգնաժամի տարում նախորդ տարվա նկատմամբ, մինչդեռ «եկամուտներ աշխատանքից» եկամտի աղբյուրի դերը մեծացել է IV-VI դեցիլային խմբերում: «Եկամուտներ աշխատանքից» եկամտի աղբյուրի պարագայում իրական աճ է արձանագրվել IV-IX դեցիլային խմբերում (X խմբում -0.7% անկում է արձանագրվել), մինչդեռ I-III դեցիլային խմբերի պարագայում այս աղբյուրից ստացվող իրական եկամուտների անկում են արձանագրել (I խումբ՝ 30.8%, II խումբ՝ 15.8, III-խումբ՝ 4.2%), որտեղ նաև նվազել է այս աղբյուրի մասնաբաժինն ընդհանուր եկամուտների մեջ նախորդ տարվա նկատմամբ (I խումբ՝ 13.0%-ից 8.5%, II խումբ՝ 30.8%-ից 25.0%, III-խումբ՝ 46.7%-ից 41.7%): Այս եկամտի աղբյուրի մասնաբաժնի աճ է արձանագրվել IV-VI դեցիլային

խմբերում նախորդ տարվա նկատմամբ ընդհանուր եկամտի մեջ, որտեղ և այս եկամտի աղբյուրի իրական աճն ամենամեծն է եղել (համապատասխանաբար՝ 18.1%, 17.3%, 14.5%), ինչը շեշտադրում է այս աղբյուրի դերը ճգնաժամի հաղթահարման գործում: Մյուս կողմից ստացվում է, որ «ներքին տեղական շուկա» սոցիալական ազդեցություն փոխանցման ուղին բացասաբար է ազդել հիմնականում I-III դեցիլային խմբերի տնային տնտեսությունների վրա, որոնք աշխատանքի շուկայում տեղի ունեցող փոփոխությունների պարագայում մի գուցե նախընտրել են աշխատանք չորոնել, կամ էլ նոր աշխատանքի անցնելը, քանի որ այն գտնելու դեպքում կզրկվեին սոցիալական ծրագրերի ընձեռած հնարավորություններից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գտած աշխատանքը կարող էր ժամանակավոր բնույթ է կրել (UN WFP, 2009թ.): 2006-2008թթ. «եկամուտներ աշխատանքից» եկամուտների մասնաբաժնի կրճատման պարագայում I-II դեցիլային խմբերում աճել է «կենսաթոշակներից և նպաստներից» եկամտի աղբյուրի մասնաբաժինը, իսկ III դեցիլային խմբում կտրուկ փոփոխություններ չէր արձանագրել ինչպես կենսաթոշակների և նպաստների այնպես էլ աշխատանքից ստացվող եկամուտների գծով: Իսկ ինչ վերաբերում է տրանսֆերտների իրական չափերին 2009թ. ամենամեծ չափը արձանագրվել 50,607 դրամ X դեցիլային խմբում, մինչդեռ I-ում՝ 433 դրամ մեկ շնչի հաշվով (միջին ամսեկան):

<u>«Օտարերկրյա աշխատանքի շուկաներ» փոխանցման ուղի</u>

Ընդհանուր առմամբ, «օտարերկրյա աշխատանքի շուկաներ» փոխանցման ուղին, դրական ազդեցություն է ունեցել հիմնականում միջինի բարձր և բարձր եկամուտներ ունեցող դեցիլային խմբերում (VII-X), որոնք սկսել են ավելի շատ գումարներ ստանալ[16]: Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացվող եկամուտների դրամական արտահայտությամբ իրական աճ է արձանագրվել 2009թ. նախորդ տարվա նկատմամբ III և VII-X դեցիլային խմբերում, որտեղ և այս աղբյուրից ստացվող եկամուտների մասնաբաժինը մեծացել է բացառությամբ IX դեցիլային խմբի, ինչը նշանակում է, որ այս խմբում այլ աղբյուրներից ստացվող եկամուտները ավելի են աճել, քան տվյալ աղբյուրինը: 2009թ. ամենամեծ մասնաբաժինն արձանագրվել է 11.1%, իսկ դրամային արտահայտությամբ բավականին բարձր աճ (իրական) է գրանցվել VII-VIII դեցիլային խմբերում (համապատասխանաբար՝ 34.4 և 43.8%): Իսկ սա նշանակում է որ օտար երկրներում գտնվող բարեկամներից ստացվող գումարներն աճել են միջինից բարձր և բարձր եկամուտներ ունեցող տնային տնեսությունների մոտ (սկսել են դոլարային արտահայտությամբ ավելի շատ գումարներ ստանալ), մինչդեռ, ընդհանուր առմամբ, ցածր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունները, սկսել են ավելի քիչ գումարներ ստանալ: Հետաքրքրական է նկատել, որ 2009թ. III դեցիլային խմբում դրամային արտահայտությամբ այս եկամտի աղբյուրից ստացվող եկամուտների իրական աճը կազմել է 31.1%, իսկ մասնաբաժինն այս աղբյուրի ընդհանուր եկամուտների մեջ կազմել է 5.9%՝ աճելով 0.9%-ային կետով: Իսկ ինչ վերաբերում է տրանսֆերտների իրական չափերին 2009թ. ամենամեծ չափն արձանագրվել 8,236 դրամ X դեցիլային խմբում, մինչդեռ I-ում՝ 210 դրամ մեկ շնչի հաշվով:

<u>«Կառավարության եկամուտներ» փոխանցման ուղի</u>

Պետական եկամուտների կրճատմամբ պայմանավորված պետական պարտքի ավելացումը[17] հնարավորություն տվեց I-III դեցիլային խմբերին հաղթահարել ճգնաժամը հատկապես I-II դեցիլային խմբերի պարագայում, աղքատության ընտանեկան նպաստի համակարգում ոչ շատ բարձ ընդգրկվածության պարագայում, մինչդեռ ամենաշատը նպաստների և կենսաթոշակների ավելացումից շահել են IX-X խմբերը: 2009թ. սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճեցին մոտ 31 մլրդ (2008թ. այն կազմում էր՝ 212.1 մլրդ) դրամ: Սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերի ավելացումը պայմանավորված էր նպաստների և կենսաթոշակների, թեպետ նպաստառուների և կենսաթոշակառուների խմբերում նկատվել է քանակի կրճատում 2009թ. նախորդ տարվա նկատմամբ, մինչդեռ այլ խմբերում գրանցվել է քանակի աճ[18]: Իսկ սա

[16] Տե՛ս, նախորդ տողատակի բացատրությունը:

[17] 31.12.2008թ. դրության նկատմամբ 30.12.2009թ. դրությամբ պետական ներքին պարտքի կումուլյատիվ աճը կազմել էր 48.8%, մինչդեռ պարտքին պատական պարտքինը՝ 88.1%: Աղբյուր՝ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ, հեղինակների սեփական հաշվարկ: Պետական եկամուտները 759.2 մլրդ դրամից 2008թ. կրճատվեցին և կազմեցին, 676.4 մլրդ դրամ 2009թ.

[18] 2009թ. նախորդ տարվա նկատմամբ կրճատվեցին ապահովագրական կենսաթոշակառուների թվաքանակը՝ մոտ 0.5%-ով կազմելով 467,555 կենսաթոշակառու, իսկ սոցիալական կենսաթոշակառուների թվաքանակն աճեց մոտ 3.8%

նշանակում էր որ բոլոր խմբերում կակնկալվեր այս եկամուտների աճ՝ «կենսաթոշակներ և նպաստներ» աղբյուրից, սակայն այս աղբյուրի մասնաբաժնի փոփոխությունը կախված կլիներ նրանից, թե ինչպիսի փոփոխություններ կգրանցվեին մնացած աղբյուրներից ստացվող եկամուտներում: Հետաքրքրական է նշել, որ տնային տնտեսությունների հաշվով միջին ամսեկան եկամուտները, որոնք ստացվել ես այս աղբյուրից ամենամեծ իրական աճն են արձանագրել IX-X դեցիլային խմբերում (համապատասխանաբար՝ 64.1 և 29.6%), ինչպես նաև դրամական արտահայտությամբ ամենամեծ չափեր են արձանագրվել այստեղ (համապատասխանաբար՝ 7,008 և 7,439 դրամ), որի բացատրություններից կարող են լինել հետևյալը, որ այս նոր թոշակի անցածները բարձ կենսաթոշակի չափով են անցել, նախկինում անցածների կենսաթոշակի չափը եղել է բարձ և վերահաշվարկ կատարելուց հետո ներկայիս կենսաթոշակառուները սկսել են ավելի շատ ստանալ, ինչպես նաև նվազագույն կենսաթոշակների չափերի մեծացումը, կամ էլ այլ հանգամանքով է դա պայմանավորված եղել: Մյուս կողմից, ամենացածր աճը գրանցվել էր VIII դեցիլային խմբում, սակայն 2008թ, նախորդ տարվա նկատմամբ, այս աղբյուրից ստացվող եկամուտների աճը կազմել էր 116.6%: Իսկ ինչ վերաբերում է այս աղբյուրի մասնաբաժնին, ապա այն 1/3 և դա մեծ մասնաբաժին է կազմել (ընդհանուր եկամուտների մեջ) I-III դեցիլային խմբերում (համապատասխանաբար՝ 51.5, 48.0 և 33.1%), իսկ մասնաբաժինն աճել է գրեթե բոլոր դեցիլային խմբերում՝ բացառությամբ IV և VIII դեցիլային խմբերի, որտեղ այլ աղբյուրներից ստացվող եկամուտներն ավելի արագ են աճել: I-II դեցիլային խմբերում առավել կարևորվեց կառավարության սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրերը, ինչպես նաև սոցիալական պաշտպանության ծախսերի ավելացումը կանխեց աղքատության էլ ավելի խորացումը (էրսադո 2010թ.): 2009թ. աղքատության ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված մեկ ընտանիքի միջին ամսական չափի անվանակ աճ է արձանագրվել, և սոցիալական օժանդակությանը/աջակցության ուղղվող ծախսերի ավելի քան 55%-ը ուղղվում էր աղքատության ընտանեկան նպաստի համակարգին, այնուամենայնիվ տնային տնտեսությունների ամենաաղքատ քվանտիլային խումբը 35%-ով է ընդգրկված եղել համակարգում (Միտրա/CGI, 2010թ.): Այս պարագայում կարևորվում է ավելի շատ ընտանիքներ այս դեցիլային խմբից համակարգում ընդգրկելը, կամ էլ այլ սոցիալական ապահովության ծրագրերի մշակումը, հատկապես այն մարզերում որտեղ աղքատությունը շատ բարձր է:

«Գյուղմթերքի և գյուղատնտեսական կենդանիների վաճառք» եկամտի աղբյուր

Հիմնականում VIII-X դեցիլային խմբերն են «գյուղմթերքի և գյուղատնտեսական կենդանիների վաճառք» եկամտի աղբյուրից ստացվող իրական եկամուտների աճ արձանագրել՝ որոշ գյուղատնտեսական մթերքի գների անկման և բերքի/քանակի կրճատման պարագայում: 2009թ. գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը նվազել էր 22.2 %-ային կետով՝ կազմելով 87.8% նախորդ տարվա նկատմամբ, սակայն գյուղմթերքի ոչ բոլոր ապրանքատեսակներ են կտրուկ գների անկում արձանագրել[19]: Մյուս կողմից գների անկման պարագայում կարևորվում է բերքատվությունը, կամ էլ կենդանիների գլխաքանակի ավելացումը[20]՝ ծավալների մեծացման պարագայում հասույթի նույն մակարդակի պահպանման

կազմելով 50470: Իսկ ինչ վերաբերում է հաշմանդամների թվաքանակին, ապա 2009թ. նախորդ տարվա նկատմամբ աճել է մոտ 4.9%՝ կազմելով 179,257 հաշմանդամ, մինչդեռ կենսաթոշակի միջին ամսական չափը կազմեց 24,520 դրամ (անվանական աճը նախորդ տարվա նկատմամբ կազմեց 14.7%): Աղքատության ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների քանակի մոտ -4.7% կրճատման պարագայում (123,293 ընտանիք 2009թ.), մեկ ընտանիքի նպաստի միջին ամսական չափի անվանակ աճը կազմեց 11.7% (23,560 դրամ): Ինչ վերաբերում է նպաստառու գործազուրկների թվաքանակի, ապա 2009թ. հոկտեմբերին այն ամենամեծն էր՝ 26.6 հազար մարդ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված թվաքանակին գերազանցելով 9,8 հազարով, իսկ գործազրկության նպաստի միջին չափը կազմեց 17,014 դրամ (անվանական աճը նախորդ տարվա նկատմամբ՝ 21.5%):

[19] Հետևյալ ապրանքների գների փոփոխությունը 2008թ. նկատմամբ 2009թ.՝ խնձոր (373-ից 368 դրամ), տանձ (684-ից 828 դրամ), խաղող (502-ից 687 դրամ), ձմերուկ (305-ից 334 դրամ), սեխ (400-ից 545 դրամ), կաղամբ (123-ից 154 դրամ), գլուխ սոխ (254-ից 276 դրամ), կարտոֆիլ (155-ից 117 դրամ), լոբի (հատիկ, 833 -ից 889 դրամ), ալյուր (բարձր տեսակի, 324-ից 289 դրամ), տավարի միս (1582-ից 1613 դրամ), թռչնի միս (1231-ից 1336 դրամ), ոչխարի միս (1687-ից 1979 դրամ), խոզի միս (2542-ից 2420 դրամ), սիգ (հատ, 724-ից 858 դրամ), կաթ (լիտր, 304-ից 326 դրամ), չանախ պանիր (1456-ից 1461 դրամ), ձու (հատ 55.9-ից 51.6 դրամ):

[20] Համախառն բերքի փոփոխությունը 2009թ. նախորդ տարվա նկատմամբ (հազար տոննա)՝ կարտոֆիլ (648.6-ից 593.6, իսկ 2010թ.՝ 481.9), բանջարանոցային մշակաբույսեր (825.3-ից 819.8, իսկ 2010թ.՝ 707.7), բոստանային մշակաբույսեր (182.2-ից 216.1, իսկ 2010թ.՝ 132.5), պտուղ և հատապտուղ (317.8-ից 332.2, իսկ 2010թ.՝ 128.5), խաղող (185.8-ից 208.5 իսկ 2010թ.՝ 222.9), ցորենի (225.7-ից 198.1 իսկ 183.5): Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը հունվարի 1-ի դրությամբ 2010թ. փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ (584779-ից 570633, մինչդեռ 2008թ. 629146), կովերինը՝ (283048-ից, 273854 մինչդեռ 2008թ. 310610), խոզերինը (84801-ից, 112608 մինչդեռ 2008թ. 86710), ոչխարներ և այծեր՝

տեսանկյունից: Հակառակ դեպքում, գյուղատնտեսական մթերք արտադրողները նույն քանակի վաճառքի դեպքում ավելի քիչ եկամուտներ կստանային: Ստեղծված վիճակը հաղթահարելու համար պետք էր կլիներ ավելի շատ գյուղատնտեսական մթերք վաճառել: Մյուս կողմից դեցիլային խմբերով դիտարկելիս 2009թ. նախորդ տարվա նկատմամբ այս աղբյուրից ստացվող իրական եկամուտների աճ են արձանագրել հիմնականում VIII-X դեցիլային խմբերը (համապատասխանաբար՝ 46.4%, 7.1%, 49.5%), իսկ այս աղբյուրի մասնաբաժինն աճել է միայն VIII և X դեցիլային խմբերում, չնայած նրան, որ այս աղբյուրն առաջնային/հիմնական եկամտի աղբյուր չի հանդիսացել: Նաև աճ է արձանագրվել I դեցիլային խմբում (2.5%), սակայն մասնաբաժինն ընդհանուր եկամտի մեջ նվազել է 0.5%-ային կետով (14.5): Իսկ II-V դեցիլային խմբերում, որտեղ այս աղբյուրն ապահովում էր եկամուտների 10%-ից ավելին 2008թ. (II՝ 16.6%, III՝ 12.1%, IV՝ 11.7%, V՝ 10.4%), ապա 2009թ. միայն III դեցիլային խմբում էր միջինում այս եկամտից ստացված եկամուտնն ապահովում ընդհանուր եկամուտների 10.4%, իսկ ամենամեծ անկումն արձանագրվել էր II դեցիլային խմբում՝ իրական եկամուտների անկումը կազմել էր 44.3% (մասնաբաժինը՝ 8.9%): 2006թ. նկատմամբ ճգնաժամի տարում այս եկամտից ստացվող եկամուտների մասնաբաժինը բոլոր դեցիլային խմբերում նվազել էր: Իսկ 2009թ. իրական եկամուտները (մեկ շնչի հաշվով միջին ամսեկան), որոնք ստացվում էին այս աղբյուրից I դեցիլային խմբում կազմել էին 740 դրամ, ապա X դեցիլային խմբում՝ 4766 դրամ:

Բուսական ծագման գյուղմթերք

Պտուղ, հատապտուղ, բոստանային մշակաբույսեր աճեցնողները, ավելի շահեկան վիճակում էին հայտնվել, քան կարտոֆիլ և ցորեն աճեցնողները: 2009թ. նախորդ տարվա նկատմամբ կարտոֆիլի միջին գինը նվազել էր 38 դրամով (24.5% կազմելով 117 դրամ), մինչդեռ համախառն բերքն այդ նույն ժամանակահատվածում կրճատվեց 55.5 հազար տոննայով (8.6%՝ կազմելով 593.6 հազար տոննա): Իսկ սա նշանակում է, որ առավելապես կտուժեին այն մարզերը, որոնք շատ էին աճեցնում կարտոֆիլ, Գեղարքունիքի մարզում բերքը նվազեց 23.7 հազար տոննայով (8.5% անկում՝ կազմելով 254.3 հազար տոննա), իսկ գումարային կորուստը 2009թ. մոտ 2.77 մլրդ դրամ, Շիրակում՝ 15.2 հազար տոննա (14.5% անկում՝ կազմելով 89.7 հազար տոննա)՝ գումարային կորուստը՝ 1.78 մլրդ դրամ, իսկ ամենամեծ տոկոսային անկումը գրանցվել է Արմավիրի մարզում՝ է 10.3 հազար տոննա (16.2% անկում կազմելով՝ 53.2 հազար տոննա)՝ մոտ 2.6 մլրդ դրամ և Վայոց Ձորում՝ (17.1%՝ կազ-մելով 2.9 հազար տոննա), գումարային՝ 70.2 մլն դրամ: Ցորենի տեսակետից Գեղարքունիքի և Շիրակի մարզերը ևս անկում արձանագրեցին (համապատասխանաբար՝ 6.8 տոննա կամ 13.4% անկում, 8.4 տոննա կամ 15.9%), իսկ Լոռվա մարզում ամենամեծ տոկոսային անկում է գրանցվել՝ 2.9 հազար տոննա կամ 19.7%, մինչդեռ ալյուրի (բարձր տեսակի) գինն իջել էր 35 դրամով (10.8% կազմելով 289 դրամ): Ինչ վերաբերում է բոստանային մշակաբույսերին, ապա այստեղ այն մարզերում, որոնք այս տեսակի մշակաբույսեր են աճեցնում (Արմավիր, Արարատ) համախառն բերքի աճ է արձանագրվել, իսկ սեխի և ձմերուկի 2009թ. նախորդ տարվա նկատմամբ միջին տարեկան գների բարձրացումը չէր կարող մեղմել իրավիճակն այն մարզերում, որոնք տուժել էին հատկապես կարտոֆիլի և ցորենի բերքի և այլուր գների անկումից, քանի որ ոչ Գեղարքունիքի և ոչ էլ Շիրակի մարզերում չեն աճում բոստանային մշակաբույսեր: Խաղողի պարագայում միայն Լոռվա մարզում է համախառն բերքի կրճատում նկատվել (0.2 հազար տոննայից դառնալով 0.1), մինչդեռ խաղողի գները նախորդ տարվա նկատմամբ աճել էին: Պտղի և հատապտղի համախառն բերքի անկում է արձանագրվել է Գեղարքունիքի (1.1 հազար տոննա կամ մոտ 5%), Լոռվա (0.3 հազար տոննա կամ 4.8%), Կոտայքի (4.2 հազար տոննա կամ 15.9%), Սյունիքի (6.2 հազար տոննա կամ 31%) և Վայոց Ձորի մազերում (1.5 հազար տոննա կամ մոտ 26.8%): Ինչ վերաբերում է բանջարանոցային մշակաբույսերի համախառն բերքին, ապա այստեղ ևս տուժել է Գեղարքունիքի մարզը (5.2 կամ հազար տոննա կամ 9.2% կազմելով 51.3 հազար տոննա) և Կոտայքը (2.8 հազար տոննա 9.2% կազմելով 27.6 հազար տոննա), իսկ Արագածոտն և Սյունիք մարզերում համախառն բերքի 0.4 հազար տոննա է կազմել (1.6% և 2.2%): Մյուս կողմից մրգի (ներառյալ՝ ընկուզապտուղներ) արտահանումն ավելացել էր ճգնաժամի տարում 2008թ. նկատմամբ 4,834.6 տոննայով մոտ 39.5%, որից խաղողինը՝ 871.9 տոննայով կամ մոտ 30.4%: Վերը նշվածից, կարելի է եզրակացնել, որ բուսական ծագման գյուղմթերքի որոշ տեսակների բերքի կրճատման և գների

(559218-ից, 511029 մինչդեռ 2008թ. 637101): Կենդանական ծագման գյուղատնտեսական մթերքի արտադրություն՝ իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով, հազ. տոննա)՝ (125.9-ից 126.2), կաթ (հազ. տոննա՝ 661.9-ից 615.7), ձու (մլն. հատ 576.1 630.1):

անկման պարագայում մարզերի տնային տնտեսությունների բուսական ծագման «գյուղմթերքի և վաճառք» եկամտի աղբյուրից ստացվող եկամուտների անկում կարձանագրեին, ինչն էլ կարող էր ազդել աղքատության վրա: Մյուս կողմից 2010թ. «գյուղմթերքի և գյուղատնտեսական կենդանիների վաճառք» աղբյուրից ստացվող եկամուտների տվյալները դեռս հրապարակված չեն, սակայն համախառն բերքի 2010թ. կտրուկ կրճատումը (կարտոֆիլ, բանջարանոցային մշակաբույսեր, բոստանային մշակաբույսեր և ցորեն) նախորդ տարվա նկատմամբ նպաստելու է 2010թ. գնաճի բարձր տեմպերին, ինչը լրացուցիչ սոցիալական լարվածության պատճառ էր ցածր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունների համար:

Կենդանական ծագման գյուղմթերք

Կենդանիների գլխաքանակի կրճատումը (խոշոր եղջերավոր, այծ և ոչխար) ձվի արտադրությունը (մլն. հատ) աճել է ճգնաժամի տարում՝ կազմելով 630.1 մլն ձու՝ նախորդ տարվա 576.1 մլնի համեմատ, մինչդեռ 2006թ. այն կազմել էր 463.7 մլն, սակայն 2008թ. նկատմամբ 2009թ. ձվի գինը (հատ) նվազել էր 4.3 դրամով կամ 7.7%, ինչը նշանակում էր ձվի իրացումից եկամուտների կրճատում կարձանագրվեր տնային տնտեսությունների մոտ: Ձվի արտադրության ծավալների աճի պարագայում, աճել էր նաև թռչնի մսի արտադրությունը 2.2 հազար տոննայով՝ դառնալով 8.9 հազար տոննա 2009թ. նախորդ տարվա նկատմամբ: Իսկ թռչի մսի գինն աճել էր 105 դրամով՝ դառնալով 1336 դրամ: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ, բացառությամբ Արարատի, Շիրակի և Տավուշի մարզերում կրճատվել է: Այս երեք նշված մարզերում 2009թ. հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարվա նկատմամբ գլխաքանակի կրճատում էր արձանագրվել (-7.2%, 10.4%, 11.7%), ինչը նշանակում էր, որ այս մարզերում հնարավոր է փորձել են հետագա գլխաքանակի ավելացման հարցը ապահովել՝ եկամուտների ստացման նպատակով: Իսկ ճգնաժամի տարում ամենամեծ տոկոսային անկումը գլխաքանակի մեջ արձանագրվել էր Կոտայքի մարզում՝ 7.8% (2008թ հունվարի մեկից ի վեր -10778 գլխաքանակի կումուլյատիվ կրճատում՝ 18.2%): Ինչ վերաբերում է կովերի գլխաքանակին, ապա 2010թ. հունվարի 1-ի դրությամբ, այստեղ և գլխաքանակի ավելացում է արձանագրվել Շիրակի և Տավուշի մարզերում (1.9%, 2.9%), իսկ ամենամեծ տոկոսային անկումը ևս եղել է Կոտայքի մարզում՝ 6.8% (1764 կով): Իսկ տավարի մսի գնի աճը կազմել 31 դրամ ճգնաժամի տարում նախորդ տարվա նկատմամբ, կամ մոտ 2%: Իսկ ինչ վերաբերում է տավարի մսի արտադրությանը, ապա ճգնաժամի տարում աճը կազմել է 0.3 հազար տոննա 49.3-ից դառնալով 49.6 2009թ.: Այս պարագայում ապագա գնաճի միտում պետք էր ակնկալել՝ հաշվի առնելով այն, որ 2008թ. հունվարի 1-ից մինչև 2010թ. հունվարի 1-ը գրանցվել է խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի 58,513 (9.3%) կրճատում (կովերինը՝ 36,756 կամ 11.8%): Իսկ 2010թ. նախորդ տարվա նկատմամբ տավարի մսի գինը 2009թ. նկատմամբ աճեց 28.1%՝ դառնալով 2067 դրամ: Իսկ ինչ վերաբերում է ոչխարների և այծերի գլխաքանակին, ապա 2010թ. հունվարի 1-ի դրությամբ 2009թ. հունվարի 1-ի համեմատ (ինչպես նաև նախորդ ժամանակահատվածի նկատմամբ) ապա գլխաքանակի կրճատում է նկատվել ՀՀ բոլոր մարզերում՝ 1.6-18.2% սահմաններում (ամենամեծը Լոռիում), իսկ 2008թ. հունվարի 1-ի համեմատ կումուլյատիվ գլխաքանակի կրճատումը՝ կազմել էր 126072 կամ 19.8%: Խոզի գլխաքանակը 2009թ. հունվարի 1 նկատմամբ 2010թ. հունվարի 1-ին բոլոր մարզերում աճել էր (չնայած այն, որ 2010թ. հունվարի 1-ի դրությամբ արձանագրված գլխաքանակը զիջում էր 2007թ. գրանցած ցուցանիշին 40183-ով կամ 26.3%):

Այլ եկամուտներից ստացվող եկամուտների աղբյուր

Բացառությամբ VI-րդ դեցիլային խմբի, բոլոր դեցիլային խմբերում այլ եկամուտների աղբյուրից ստացվող իրական եկամուտների դերը կարևորվեց: Ճգնաժամի տարում նախորդ տարվա նկատմամբ իրական եկամուտների աճ է արձանագրվել բոլոր դեցիլային խմբերում (բացառությամբ VI-րդ դեցիլային խմբի), ինչպես նաև աճեց այս աղբյուրից ստացվող եկամուտների մասնաբաժինը: Ամենամեծ տոկոսային աճն արձանագրվել է VIII դեցիլային խմբում (279.3%), իսկ 100% գերազանցող աճը գրանցվել է II-V և IX դեցիլային խմբերում, մինչդեռ VII դեցիլային խմբերում այն մոտ էր 100%-ին (97.6%), իսկ X դեցիլային խմբում այն 44.4% էր, ինչի հետևանքով այդ դեցիլային խմբերում աճեց այս աղբյուրից ստացվող եկամուտների աճը: Եթե 2008թ. նախորդ տարվա նկատմամբ այս աղբյուրի մասնաբաժինը եկամուտների մեջ նվազել էր I-V և VII-VIII դեցիլային խմբերի մոտ, իսկ I-III խմբերում բավականին կտրուկ անկում էր արձանագրվել, ապա IX-X դեցիլային խմբերում աննշան աճ արձանագրվեց: Այս աղբյուրն իրական եկամուտների՝ 19.6% է ապահովել I դեցիլային խմբում, իսկ II-ում 13.2%, մինչդեռ X դեցիլային խմբում այն 2.6% է կազմել, իսկ V-IX դեցիլային խմբերի

մոտ այն չի գերազանցել 5%-ը: Իսկ իրական դրամային արտահայտությամբ X դեցիլային խմբի մեկ շնչի հաշվով այս աղբուրից ստացվող եկամուտները I դեցիլային խմբի եկամուտներին (այս աղբյուրից ստացվող) գերազանցում էին 1.92 անգամ, II՝ 1.52 անգամ, իսկ III՝ 2.02 անգամ, շեշտադրելով այս դեցիլային խմբերի համար տվյալ աղբյուրի դերը, որպես տնային տնտեսությունների հաղթահարման ռազմավարություն:

Եզրակացություններ

Ընդհանուր առմամբ, Կառավարության սոցիալական ապահովությանն ուղղված ծախսերի ավելացումը 2009թ. դրական ազդեցություն ունեցավ բոլոր դեցիլային խմբերի վրա, քանի որ աճել էին նպաստների և կենսաթոշակների չափսերը, ինչը գյուղական բնակավայրերում կարող էր մեղմել «գյուղմթերքի և գյուղատնտեսական կենդանիների վաճառք» եկամտի աղբյուրից ստացվող եկամուտները, հատկապես I-III դեցիլային խմբերում, քանի որ այս խմբերը «Եկամուտներ աշխատանքից» ստացվող եկամուտների կրճատման պարագայում, պետք է կախումը մեծացնեին այլ եկամտի աղբյուրներից (I-III խումբ) կամ ապավինել ՀՀ-ից դուրս և ՀՀ-ում ապրող բարեկամներից ստացվող տրանսֆերտների վրա (III դեցիլային խումբ): I-II դեցիլային խմբերում կարող էր իրավիճակը մեղմվեր, եթե ընդգծվածությունն Աղքատության ընտանեկան նպաստի համակարգում ավելի բարձր լիներ: Մյուս կողմից «եկամուտներ աշխատանքից» ստացվող իրական եկամուտների աճը IV-IX դեցիլային խմբերում, ՀՀ միջին ամսեկան իրական աշխատավարձի աճի պարագայում, մատնանշում է զբաղվածության դերն, ինչպես նաև կադրերի խնդրի առկայությունը: Այս աղբյուրից ստացվող իրական եկամուտների աճից հիմնականում օգտվել են IV-VI դեցիլային խմբերի տնային տնտեսությունները, այն կադրերը, որոնք ընկերությունների շահույթի ապահովման աղբյուրն էին, որոնք ավելի շատ կօգտվեին, քանի որ հիմնականում իրենք են նպաստել ընկերության եկամուտների ապահովմանը: Մյուս կողմից I-III դեցիլային խմբերում «եկամուտներ աշխատանքից» աղբյուրից ստացվող իրական եկամուտների կրճատումը, շեշտադրում է բարձր որակավորում, կարողություններ և հմտություններ ունենալու խնդիրը, քանի որ ճգնաժամի պարագայում ավելի ցածր որակավորումներ ունեցողները կզրկվեին աշխատանքից: Եթե նախքան ճգնաժամի տարին 2007-2008թթ. ՀՀ ընկերությունների հասույթի աճը կարող էր ապահովել իրական աշխատավարձի աճը, ապա ճգնաժամի տարում բարձր որակավորում ունեցող աշխատողների կորուստը կարող էր էլ շատ ավելի բացասական հետևանքներ ունենալ ընկերությունների վրա, իսկ դրանից խուսափելու միակ եղանակը կլիներ աշխատավարձերի աճը: Բարձր որակավորում ունեցող աշխատակիցների խնդրի էլ ավելի սրանալը ՀՀ տնտեսության մրցունակության համար լրջագույն խոչընդոտ կհանդիսանա: Ինչ վերաբերում է «գյուղմթերքի և գյուղատնտեսական կենդանիների վաճառքից» ստացվող եկամուտներն, ապա այստեղ հիմնականում շահել են այն խմբերը, որոնց համար այս աղբյուրն առաջնային եկամտի աղբյուր չի հանդիսացել (VIII-X դեցիլային խմբեր), գյուղական համայնքներում այս աղբյուրից ստացվող եկամուտների աճի բացակայության պարագայում կավելանա կախումն այլ եկամտի աղբյուրներից (նպաստներ և կենսաթոշակներ և այլ եկամուտներ խումբ), ինչն էլ՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին միգրացիայի պատճառ կարող է հանդիսանալ: Այլ եկամտի աղբյուրներից ստացվող եկամուտների մասնաբաժնի ավելացումը հանդիսացել է որպես ճգնաժամի հաղթահարման ռազմավարություն: Իսկ իրական եկամուտների տեսանկյունից 2006-2009թ. I և X դեցիլային խմբերի միջև եկամուտների տարբերությունը խորացել է: Եթե 2006թ. X դեցիլային խմբի տնային տնտեսության մեկ շնչի միջին ամսեկան եկամուտները գերազանցում էին I դեցիլային խմբի եկամուտներին 13.1 անգամ, ապա 2009թ.՝ 14.5 անգամ, մինչդեռ 2007թ. այն մոտ 15.1 անգամ էր գերազանցում:

Ոչ դրամական եկամուտներ (սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից)[21]

Քաղաքային, ինչպես նաև գյուղական բնակավայրերում դրամական արտահայտությամբ սննդամթերքի սպառումը սեփական տնտեսությունից (ներառյալ օգնություն) աճեց ճգնաժամի տարում: Եթե քաղաքային բնակավայրերում, իրական սննդամթերքի սպառումը կրճատվել էր 21% 2008թ. նախորդ տարվա նկատմամբ, իսկ գյուղականում աճել էր մոտ 3%, ապա ճգնաժամի տարում նախորդ տարվա նկատմամբ երկու բնակավայրերում գրանցվել էր աճ: Քաղաքային բնակավայրերում այն աճել էր մոտ 12%, մինչդեռ գյուղականում՝ 2.5%, սակայն

[21] Ներառյալ օգնությունը:
Այստեղ չեն դիտարկվում անվճար ոչ պարենային ապրանքները և ծառայությունները, այլ միայն սննդամթերքի սպառումը սեփական տնտեսությունից:

մեկ շնչի հաշվով ամսեկան սպառումը դրամական արտահայտությամբ գյուղականում գերազանցել է քաղաքայինին 7.53 անգամ (մոտ 5193 դրամ): Մյուս կողմից որոշ եկամուտների աղբյուրներից ստացվող եկամուտների կրճատման պարագայում որոշ ընտանիքներում կարճանագրվեր սեփական սպառման համար պարենի արտադրության ավելացում (գրանցվել է հարցված ՀՀ տնային տնտեսությունների 14%-ի մոտ):

Ծախսերի կառուցվածքը

Ընդհանուր առմամբ սննդամթերքի, ալկոհոլային խմիչքի և ծխախոտի մասնաբաժիններն իրական սպառողական ծախսերի մեջ աճեցին, ինչպես դրանց իրական սպառումը ճգնաժամի տարում, մինչդեռ ծառայությունների և ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը նվազեց[22]: Ճգնաժամի տարում նախորդ տարվա նկատմամբ տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսեկան իրական սպառողական ծախսերի 1.2% աճ է արձանագրվել, մինչդեռ 2008թ. այն կազմել էր 5.3%: Եթե 2007թ. սննդամթերքի մասնաբաժինը սպառողական ծախսերի 52.5% էր կազմում, 2008թ. 50.9%, ապա 2009թ. այն կազմեց 53.2% *(տե՛ս, գծապատկեր 3)*, մինչդեռ սննդամթերքի սպառումն աճեց 5.8%, իսկ գնված և չգնված սննդամթերքները՝ 6.1%: Ալկոհոլային խմիչքի վրա կատարվող իրական ծախսերի աճը կազմեց 3.4% 2009թ. նախորդ տարվա նկատմամբ, ծխախոտի վրա կատարվող ծախսերինը՝ 0.2%: Եթե, ընդհանուր առմամբ, ոչ պարենային ապրանքները ՀՀ-ում կրճատվեցին 10%, ապա գյուղական բնակավայրերում այն աճեց 2.6%, մինչդեռ քաղաքայինում անկումը՝ 16.7% է կազմել: Ինչ վերաբերում է անձնական ծառայությունների վճարների անկմանը, ապա այստեղ գյուղական համայնքներում անկումը 3.2% է կազմել, մինչդեռ ՀՀ-ում և քաղաքային բնակավայրերում կրճատումը համապատասխանաբար կազմել է 0.8% և 0.3%, իսկ, ընդհանուր առմամբ ՀՀ-ում մեկ շնչի հաշվով մասնաբաժինը նախորդ տարվա նկատմամբ 27.4%-ից դարձել է 26.9%: Հետաքրքրական է նկատել, որ բնակ-կոմունալ ծառայությունների վճարները, որն անձնական ծառայությունների վճարների մոտ 33.1% է կազմել 2009թ. սպառողական ծախսերի կառուցվածքում, գյուղական բնակավայրերում քաղաքայինի նկատմամբ տարբերությունը խորացել է (համապատասխանաբար՝ 32% և 36.7% 2009թ. նախորդ տարվա 34.8% և 33.6%): Հարկ է նշել, որ բնակ-կոմունալ ծառայությունների իրական վճարներն այդ նույն ժամանակահատվածում նախորդի համեմատ գյուղականում աճել են 5.9%, մինչդեռ ՀՀ-ում և քաղաքային բնակավայրերում անկում է գրանցվել (-4.7% և -8.4%), որի հիմնական պատճառը, կոմունալ ծառայությունների վճարներն են եղել[23]: Երկրորդն իր մեծությամբ անձնական ծառայությունների վճարների մեջ (18.3% 2009թ.)՝ կապի ծառայությունների վրա կատարվող ծախսերի կրճատում արձանագրվեց ՀՀ-ում (-8.1%), մինչդեռ գյուղականում այն ավելի խոր էր եղել (-7.5%) քան քաղաքային բնակավայրերում (-10.4%) ընդհանուր առմամբ, մինչդեռ կապի ծառայությունների գների ինդեքսը եղել է 97.2%: Եթե ծառայությունների ծախսերի մեջ բուժօգնության վճարները երրորդ տեղում էին 2008թ., ապա այս ծախսերի իրական սպառումը, ընդհանուր առմամբ, կրճատվեցին 10.6%, սակայն գյուղական բնակավայրերում կրճատումը բավականին խոր էր՝ -4.4%, քան քաղաքային բնակավայրերում՝ -22.3%, իսկ մասնաբաժինը ծառայությունների ծախսերի մեջ կրճատվեց 5 տոկոսային կետով՝ կազմելով 11%: Ուսման վճարների հետ կապված նմանատիպ միտում է ևս դիտվել 2009թ. նախորդ տարվա նկատմամբ՝ այս ծառայությունների իրական սպառման կրճատում՝ 32.0% (գյուղականում՝ -55.3%, քաղաքայինում՝-25.6%), իսկ ծառայությունների ծախսերի մեջ մասնաբաժինը 12.3%-ից դարձավ 11.0% (մանրամասնությունների համար տե՛ս բաժին IV)[24]: Իսկ տրանսպորտային ծառայությունների վրա կատարվող ծախսերի մասնաբաժինը ճգնաժամի տարում 2008թ. նկատմամբ ընդհանուր ծախսերի մեջ աճեց (12.4% 13.9%) պայմանավորված այս ծառայությունների իրական սպառման աճով՝ 11.3% ընդհանուր առմամբ, մինչդեռ քաղաքայինում՝ 5.1%, իսկ գյուղականում՝ 34.9%: Տրանսպորտային միջոցներից օգտվելու փոփոխություն է տեղի ունեցել հարցվող տնային տնտեսությունների 28.1%-ում, քանի որ ավելացրել է հասարակական տրանսպորտի օգտագործումը կամ ոտքով գնալը:

Սպառողական ծախսերն ըստ դեցիլային խմբերի

<u>Սննդամթերքի սպառում</u>

---

[22] Հետայսու՝ տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսեկան իրական սպառողական ծախսեր, այլ բան չնշելու դեպքում: Յուրաքանչյուր ծախսային տար ճշգրտվել է իր համապատասխան գների ինդեքսով:

[23] Բնակ-կոմունալ ծառայությունների իրական վճարների ինդեքսը 2008թ. 105.3%, 2009թ.117.1 %:

[24] Կրթության համակարգի ծառայությունների գների ինդեքսը 2009թ.՝ 105.4%, բուժսպասարկման՝ 111.6%:

Սննդամթերքի իրական սպառումը ճգնաժամի տարում բոլոր դեցիլային խմբերում աճեց, իսկ մասնաբաժինն աճեց բոլոր դեցիլային խմբերում բացառությամբ I դեցիլային խմբի: Չնայած բոլոր դեցիլային խմբերում գրանցվել է սննդամթերքի իրական սպառման աճ, այնուամենայնիվ միայն I դեցիլային խմբում է սպառման մասնաբաժնի կրճատում գրանցվել սպառողական ծախսերի մեջ, ինչը նշանակում է, որ այլ ծախսերն այս դեցիլային խմբում ավելի շատ են աճել, քան սննդամթերքի սպառումը[25]: Եթե 2006-2008թթ. սննդամթերքի իրական սպառման մասնաբաժինը կրճատվում էր, ապա 2009թ. այն աճ արձանագրեց, իսկ ամենամեծ աճը գրանցվեց՝ 4.9%-ային կետով՝ կազմելով 51.2%, որտեղ և ամենամեծ տոկոսային աճը (իրական սպառման) արձանագրվել էր 8.2%: 2006-2008թթ. տնտեսական աճը և եկամուտների աճը հնարավորություն էր տալիս տնային տնտեսություններին այլ ծառայություններից և ոչ պարենային ապրանքներից օգտվել՝ տեղափոխվել Մասլոուի բուրգի առաջին մակարդակից վեր (բնակչության որոշ դեցիլային խմբերի պարագայում), սակայն ճգնաժամը ցույց տվեց թե ինչքան խոցելի են ցածր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունները:

Գծապատկեր 3

Իրական սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով (միջին ամսական), 2009թ.



Աղբյուր ԱՎԾ, 2010թ. նշում՝ սննդամթերքի մեջ նաև ներառված է չգնված կամ որպես օգնություն ստացած սննդամթերքը, հեղինակների սեփական հաշվարկներ, իրական արժեքների հիմքում ընկած են համապատասխան ծախսային տարի գների ինդեքսը, սննդամթերք կատեգորիայի համար կիրառվել է պարենային ապրանքների գների ինդեքսը:

<u>Ոչ պարենային ապրանքների սպառում</u>

Ոչ պարենային ապրանքների իրական սպառումը կրճատվեց ճգնաժամի տարում, սակայն այն հիմնականում պայմանավորված է եղել V-X դեցիլային խմբերով: I-IV դեցիլային խմբերում ոչ պարենային ապրանքների իրական սպառում է արձանագրվել մինչդեռ V-X իրական կրճատում է գրանցվել, ինչից էլ կարելի է ենթադրել, որ միջինից բարձր և բարձր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունների մոտ իրական սպառման կրճատումը պայմանավորված է եղել ճոխության կամ թանկ իրերի սպառման կրճատմամբ, մինչդեռ ցածր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունները ստիպված են եղել իրենց համար անհրաժեշտ իրերը փորձել ձեռքբերել (դեղորայք, բուժ. պարագաներ, վառելիք և հագուստ, կոշիկ, կտոր)[26,27]: Ամենամեծ տոկոսային աճն արձանագրվել է III դեցիլային խմբում՝ 10.3%, իսկ ամենամեծ անկումը՝ IX դեցիլային խմբում (15.3%), մինչդեռ ամենամեծ մասնաբաժնի անկումը (3.3 տոկոսային կետ) գրանցվել է X դեցիլային խմբում՝ կազմելով 20.1%: Իսկ ըստ տնային տնտեսությունների հարցման արդյունքների նրանց 37.1% դադարել կամ նվազեցրել է ոչ պարենային ապրանքներ գնելը:

<u>Ծառայությունների սպառում</u>

[25] I դեցիլային խմբում սննդամթերքի իրական սպառումն աճեց 2009թ. 4.1% նախորդ տարվա նկատմամբ, մինչդեռ ծառայությունների իրական սպառումը՝ 11.2%:

[26] Քանի որ ոչ պարենային ապրանքերի իրական սպառման աճ է արձանագրվել գյուղական բնակավայրերում, կարելի է ենթադրել, որ սպառման իրական աճը տեղի է ունեցել I-IV դեցիլային խմբերի գյուղական տնային տնտեսություններում:

[27] 2009թ. նախորդ տարվա նկատմամբ դեղորայք, բուժ. պարագաներ խմբի անվանական աճը գյուղական բնակավայրերում կազմել է 24.3%, վառելիքինը՝ 26.8%, իսկ հագուստ, կոշիկ, կտոր խմբի անվանական սպառումը՝ 5.3%

Ծառայությունների իրական սպառման աճ է արձանագրվել աղքատ I-II, ամենահարուստ և VI դեցիլային խմբերում: Ծառայությունների սպառման իրական աճ է արձանագրվել I-II, VI և X դեցիլային խմբերում: Եթե առաջին երկու ծախսերի կտրվածքով կարելի էր որևէ պատկեր կազմել, այստեղ հստակ որևէ եզրակացություն հնարավոր չէ անել: Մի բան պարզ է, որ 6 դեցիլային խմբերում կրճատում է արձանագրվել, իսկ աճ արձանագրած խմբերում նաև աճել է ծառայությունների մասնաբաժինն ընդհանուր սպառողական ծախսերի մեջ: Նախորդ բաժնից պարզ էր, որ ծառայությունների մեջ իրական անկում է արձանագրվել բուժօգնության և ուսման վճարների մեջ, իսկ մնացած ծախսերի գծով կարևոր դեր է խաղացել բնակավայրը:

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ արձանագրվել է սննդամթերք խմբի իրական սպառման մեծացում, որը պայմանավորված է եղել մի քանի հանգամանքով՝ պարենի և մասնավորապես գյուղ-մթերքի արտադրության գների ինդեքսների փոփոխմամբ, մյուս կողմից տնային տնտե-սությունների որդեգրած ճգնաժամի հաղթահարման ռազմավարություններով: Նրանց 57.8% փոխարինել է թանկ սննդամթերքի սպառումն ավելի էժանով, 34.5% պակասեցրել է սննդի սպառումը, իսկ 14% ավելացել է սեփական սպառման համար պարենի արտադրությունը: Իսկ այստեղից կարելի է ենթադրել, որ իրական սպառման աճը տեղի է ունեցել այն սննդամթերքի գծով, որոնց գների իջեցում է տեղի է ունեցել, և չնայած որոշ տնային տնտեսություններ նվազեցրել են սպառումը, ապա դա տեղի է ունեցել թանկ մթերքի հաշվին, իսկ էժանի սպառումը մեծացել է: Մյուս կողմից սպառվող սննդամթերքը կարող էր չունենալ բարձր կալորիականություն անհրաժեշտ 2100 կկալ/օր ապահովելու համար: Ինչպես և ակնկալվում էր ընդհանուր առմամբ, նկատվեց ոչ պարենային ապրանքերի իրական սպառման կրճատում, սակայն տարբեր դեցիլային խմբեր տարբեր կերպ արձագանքեցին: Աղքատ դեցիլային խմբերում, ընդհանուր առմամբ, նկատվեց այս ծախսերի աճ, որն ավելի շուտ անհրաժեշտությունից էր դրդված լուծելու առողջական, տեղափոխման և շոր ու կոշիկի խնդիրները: Իսկ ինչ վերաբերում է ավելի հարուստ տնային տնտեսությունների, ապա իրենք, ավելի շուտ հրաժարվում էին ճոխության և ոչ առաջին անհարժեշտության ոչ պարենային ապրանքներից: Ինչ վերաբերում է տնային տնտեսությունների ծառայությունների սպառմանը, ապա կախված բնակավայրից տարբեր ծառայությունների գծով տարբեր կերպ են փոխվել դրանց սպառումը, սակայն երկու ծառայությունների գծով անկախ չափից իրական սպառման կրճատում է արձանագրվել բոլոր բնակավայրերում՝ բուժօգնության և ուսման վճարների գծով, ինչը նշանակում է, որ այս ոլորտների իրական աճը պետք է որ պայմանավորված լինի Կառավարության դեպի այս ոլորտ ուղղվող ծախսերի ավելացմամբ:

Աղքատություն

Աղքատությունն[28] աճեց, սակայն կտրուկ աճ չնկատվեց ճգնաժամի ժամանակ, Կառավարության սոցիալական ապահովության ծախսերի ավելացման շնորհիվ, չնայած աղքատության ընտանեկան նպատակների համակարգը բավարար ընդգրկվածություն չէր ապահովում: Ըստ էրսադոյի (2010թ.) աղքատության կտրուկ աճը կանխելու գործում պետական տրանսֆերտներն են կարևոր դեր խաղացել: Ինչպես ներկայացվել է այս բաժնի առաջին մասում, միջինում, բոլոր դեցիլային խմբերը՝ տնային տնտեսության մեկ շնչի հաշվով դրամային եկամուտներում (միջին ամսեկան) «կենսաթոշակներից և նպաստներից» աղբյուրից ստացվող իրական եկամուտները նախորդ տարվա նկատմամբ աճ են արձանագրվել, սակայն ամենաաղքատ 1-ին քվանտիլային խմբում մոտ 35%-ն ներգրավված եղել ընտանեկան նպաստների համակարգում (Միտրա/CGI, 2010թ.), իսկ այս պարագայում կարելի էր ակնկալել ծայրահեղ աղքատների թվի աճ: 2009թ. աղքատների թիվը ՀՀ-ում ավելացել է 214 հազար մարդով, իսկ ընդհանուր թիվը կազմել է մոտ 1.1 միլիոն, ինչը նշանակում է, որ գրեթե յուրաքանչյուր երրորդը Հայաստանում աղքատ է եղել, իսկ աղքատության մակարդակը դարձել 34.1% (2008թ. 27.6%-ի փոխարեն կամ էլ 6.5% տոկոսային կետով):

[28] Քանի որ աղքատության մակարդակի հաշվարկի մեթոդաբանության փոփոխման պատճառով, նոր մեթոդաբանությամբ ՀՀ ԱՎԾ-ն հրապարակել է 2008-2009թթ. Տվյալները, ինչպես նաև վերահաշվարկած 2004թ. տվյալները, այդ իսկ պատճառով ոչ մի համեմատություն չի կատարվում 2006-2007թթ. ժամանակահատվածի հետ:

Գծապատկեր 4

Աղքատության ցուցանիշները 2008- 2009թթ.-ին

(%)



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2010թ.

Միևնույն ժամանակ 245 հազարով ավելացել է շատ աղքատների թվաքանակը գերազանցելով 650 հազարը՝ իսկ ծայրահեղ աղքատները աճել են մոտ 65 հազար մարդով՝ հասնելով մոտ 117 հազարի: Սա նշանակում է, որ բնակչության յուրաքանչյուր հինգերորդը եղել է շատ աղքատ, իսկ աղքատների մոտ 70%-ը եղել է շատ և ծայրահեղ աղքատ: Ծայրահեղ աղքատության մակարդակն աճել է 2.0%-ային կետով և կազմել է 3.6% 2009թ., ընդհանուր աղքատության մակարդակը՝ 6.5%-ային կետով, իսկ շատ աղքատներինը՝ 7.5%:

Գծապատկեր 5

Աղքատության ցուցանիշները, ըստ մարզերի 2008- 2009թթ.-ին

(%)



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2010թ.

Այլ քաղաքներն ավելի են տուժել, քան գյուղական բնակավայրերի և Երևանի բնակիչները: Ծայրահեղ աղքատության մակարդակն ամենաշատն աճել է և ամենաբարձ մակարդակ արձանագրել այլ քաղաքաբնակ բնակավայրերում (4.6%-ային կետ՝ դառնալով 7.4%): Ընդհանուր առմամբ, այլ քաղաքների բնակիչների 41.5%-ը եղել են աղքատ, մինչդեռ ամենամեծ մակարդակի փոփոխությունն արձանագրվել էր գյուղական բնակավայրերում՝ 7.4%-ային կետ (27.5%-ից դառնալով 34.9%): Չնայած աղքատության մակարդակի ամենամեծ աճը

գրանցվել է Վայոց Ձորի մարզում (9.2%-ային կետ՝ կազմելով՝ 30.3%), սակայն ծայրահեղ աղքատության մակարդակը նվազել է 0.3%-ային կետով, իսկ Կոտայքի մարզում ՀՀ աղքատության մակարդակի աճը կազմել է 3.5%-ային կետ՝ կազմելով 43%, ՀՀ միջին աղքատության մակարդակի աճից ցածր աճ է արձանագրվել, ընդամենը 4 մարզում՝ Սյունիքում՝ 3.1%, Կոտայքում՝ 3.5%, Շիրակում՝ 4.8% և Արագածոտնում՝ 5.1%, մինչդեռ ամենամեծ տոկոսային աճը ծայրահեղ աղքատության արձանագրվել է Լոռիում (4.9%-ային կետով՝ դառնալով 7.7%): Ինչպես և նախորդ տարի, 2009թ. աղքատության ամենամեծ մակարդակն արձանագրվել է Շիրակում՝ 47.2%, ինչը նշանակում է, որ բնակչության մոտ կեսը, աղքատ են:

Սովորությունների կամ առօրյա վարքագծում կատարված փոփոխություններ

Ճգնաժամի պայմաններում ժամանցի, զվարճանքի ծախսերի կրճատումն ուղեկցվել է սննդամթերքի սպառման մեջ փոփոխություններ մտցնելով, ինչպես նաև ծառայությունների և այլ ապրանքների սպառման կրճատմամբ: Ճգնաժամի պայմաններում հարցվող տնային տեսությունների 60%-ից ավելին սկսել էր ավելի քիչ օգտվել զվարճանքներից և ավելի քիչ հանդիպել ընկերների հետ *(տե՛ս, գծապատկեր 6):* Ինչ վերաբերում է սննդամթերքի սպառմանը, ապա տնային տնտեսությունների մոտ 58% էժան ապրանքներ է անցում գնել, 34.5% պակասեցրել է սննդի սպառումը, իսկ 14% ավելացրել է սեփական սպառման համար պարենի արտադրությունը: ՀՀ-ում 2100 կկալ/օր պակաս ստացող բնակչության մասնաբաժինը 2009թ. նախորդ տարվա նկատմամբ աճել է 8.2%-ային կետով՝ կազմելով 52.7%, չնայած բնակչության մասնաբաժինը, որոնց սննդակարգի 70%-ից ավելին բաժին է ընկնում հացամթերքին և կարտոֆիլին կտրուկ աճ չի արձանագրել՝ 0.4%-ային կետ աճ (17.7%): Տնային տնտեսությունների 42.6%-ը նշել էր, որ նվազեցրել կամ դադարեցրել է այցելություններն առողջապահական կենտրոններ, իսկ 36.4%-ը՝ դեղորայք գնելը: 2009թ. միևնույն ժամանակ պոլիկլինիկաներ-ամբուլատոր հաստատությունների հաճախումների թիվը 7.7%-ի աճ է արձանագրվել նախորդ տարվա նկատմամբ: Մյուս կողմից տնային տնտեսությունները նաև սկսել են օգտագործած իրեր գնել՝ 10.4%, տրանսպորտային միջոցների թանկ տեսակներից էժանին են անցել՝ 28.1%:

Գծապատկեր 6

Տնային տնտեսությունների հաղթահարման ռազմավարությունները 2009թ.



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2009թ. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2010, 2011թ. 59 էջ:

Եկամուտների աղբյուրներից որևէ մեկի դերի ավելացում, կախման մեծացում և սեփական ուժերով ուղիների որոնում

Կառավարության սոցիալական ապահովության համակարգի դերի կարորման պարագայում կախումը պարտքի և խնայողությունների նկատմամբ նկատվեց, մինչդեռ տնային տնտեսությունների որոշ մասը փորձեց սեփական ուժերով այլ եկամտի աղբյուր ապահովել՝ պատահական գործ կատարելու և այլ բնակավայրում սեզոնային աշխատանքների մեկնելու միջոցով: Տնային տնտեսությունների 89.2%-ի մոտ սոցիալական օգնություն համարվող աղբյուրից ստացվող եկամուտների աճ է նկատվել, քանի որ 2009թ. կենսաթոշակների և

նպաստների միջին չափերի ավելացում է արձանագրվել: Իսկ փոխհատուցում կամ գործազրկության նպաստ համարվող աղբյուրից ստացվող եկամուտների աճ է արձանագրվել տնային տնտեսությունների 54.7%-ի մոտ այդ նույն ժամանակահատվածում: Ճգնաժամի տարում նախորդ տարվա նկատմամբ պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը ավելացավ 6.5 հազարով՝ կազմելով 81.4 հազար[29], իսկ նպաստառու գործազուրկների թվաքանակը 2009թ. հունվարի նկատմամբ դեկտեմբերին աճեց 9 հազարով՝ կազմելով 25.7 հազար (թեպետ նոյեմբերի նկատմամբ 300 հոգով կրճատվել է), ինչը նշանակում է, որ ավելի շատ մարդ էր դիմում այդ նպաստը ստանալու համար: Վերը նշվածից կարելի է ենթադրեք, որ գործազրկության նպաստը ստանալու համար դիմել են նաև այն մարդիկ, որոնք իրականում գործազուրկ են եղել նախքան 2009թ., սակայն պաշտոնապես որպես այդպիսին գրանցված չեն եղել և դիմել են նպաստ ստանալու համար: Սա նշանակում է, որ Կառավարությունից ստացվող փոխհատուցումը, ինչպես նաև կենսաթոշակները և նպաստները տնային տնտեսությունների հաղթահարման ռազմավարությունում կարևոր դերակատարում է ունեցել, շեշտադրելով սոցիալական ապահովության համակարգի դերը ճգնաժամի պարագայում: Իսկ ըստ էրսադոյի (2010թ.) *«Ավելի վատ հետևանքներից խուսափելու համար մեկ պատճառը եղել է ճգնաժամի հետևանքները մեղմելուն ուղված պետական միջոցառումները»*, քանի որ ըստ նրա ավելի շատ տնային տնտեսությունների կողմից հույսը դրվել է Կառավարության աջակցության վրա, քան որևէ այլ հաղթահարման ռազմավարության վրա: Մյուս կողմից տնային տնտեսությունների 46.3%-ի մոտ ավելացել էր պարտք աղբյուրից եկամուտների ստացումը, մինչդեռ կրճատում է նկատվել տնային տնտեսությունների 28.0%-ի պարագայում *(տե՛ս, գծապատկեր 7):* 2009թ. բանկերից կամ վարկային կազմակերպություններից վարկերի ստացում ոչ մատչելի էր դարձել, ինչն ակնկալելի էր ճգնաժամի տարում, որն էլ իր հերթին ճգնաժամի սոցիալական ազդեցության փոխանցման ուղի է և տնային տնտեսությունների համար այլ եկամտի աղբյուր է այլ աղբյուրներից ստացվող եկամուտների կրճատման պարագայում (տե՛ս, բաժին 1-ին): Մյուս կողմից տնային տնտեսությունների 58.4%-ի մոտ խնայողությունների օգտագործումը, որպես հաղթահարման ռազմավարություններ, սակայն հետագայում խնայողությունների բացակայությունը և վատթարացող տնտեսական վիճակը կհանգեցներ նրան, որ նրանք կսկսեն ավելի շատ պարտք կուտակվել այլ աղբյուրներից ստացվող եկամուտների չավելանալու պարագայում: Որպես ճգնաժամի հաղթահարման ռազմավարություն է դիտվել նաև պատահական աշխատանք կատարելը: Հարցված տնային տնեսությունների 12.6%-ը այդպիսի ռազմավարություն է որդեգրել, իսկ 10.3%-ի պարագայում տնային տնտեսության անդամը մեկնել է այլ բնակավայր որպես սեզոնային աշխատող:

Գծապատկեր 7

Եկամտի փոփոխությունն ըստ աղբյուրների (վերջին 12 ամիսների ընթացքում), 2009թ.



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2009թ. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2010, 2011թ. 60 էջ:

[29] Մինչդեռ ըստ տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների գործազրկության մակարդակը 2009թ. կազմել է 18.7%: «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար-ապրիլին», էջ 41:

ԲԱԺԻՆ IV ՈՒՂՂԱԿԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ՝ ԱԾԱՆՑՅԱԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Ճգնաժամի ածանցյալ սոցիալական ազդեցությունները դիտարկելիս, ընդհանուր առմամբ թերսնուցման դեպքերի աճ է նկատվեց, իսկ կրթության ոլորտում լուրջ փոփոխություններ չարձանագրվեին, մինչդեռ ճգնաժամի առողջության վրա ազդեցությունը պետք է գնահատել երկարաժամկետ հատվածում: Միջինում միայն Երևան քաղաքում է թերսնուցում արձանագրվել՝ ընդունած կալորիաների տեսանկյունից (հաշվի առնելով մեդիանան և միջին արժեքները): Ինչ վերաբերում է, կրթությանը, ապա բարձրագույն կրթության տեսանկյունից նյութականի վատթարացման պատճառով, 2008թ. նկատմամբ 2009թ. դուրս մնացողների կտրուկ աճ չի արձանագրվել, իսկ վճարովի համակարգում ընդգրկվածների թիվն աճել է, տնային տնտեսությունների պատասխաններից երևում է, որ հանրակրթական դպրոցներից տնային տնտեսությունների չնչին տոկոսն է հանել երեխաներին: Առողջապահական ծախսերի կրճատման պարագայում պոլիկլինիկաներ կամ ամբուլատոր հաստատություններ հաճախումների թիվն աճել է, իսկ այլ հիվանդությունների, ինչպես նաև մահացության դեպքերի աճի ֆոնի վրա, որը նկատվել է նախքան ճգնաժամն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև ալկոհոլի և ծխախոտի իրական սպառման ծավալների պարագայում անհրաժեշտ կլինի ճգնաժամի ազդեցությունը բնակչության առողջության վրա դիտարկել երկարաժամկետ ժամանակահատվածում, որի համար լուրջ հետազոտություն է անհրաժեշտ:

Սնուցում

ՀՀ բնակչության կեսից ավելին 2009թ. անհրաժեշտ 2100 կկալ/օր չէր ընդունում, մինչդեռ Երևանում այս մասնաբաժինը մոտ 2/3-ն է կազմել, իսկ բնակչության մասնաբաժինը, որոնց սննդակարգի 70%-ից ավելին բաժին էր ընկնում հացամթերքին և կարտոֆիլին 1/5-ից էլ պակաս էր: Չնայած ՀՀ-ում մեկ բնակչի հաշվով ստացվող կալորիաները միջինում պակասեցին 107-ով, այնուամենայնիվ 100 կալորիան[30] գերազանցող նվազում է տեղի ունեցել երեք բնակավայրերում՝ Լոռիում (206 կկալ/օր), որտեղ ամենամեծն է եղել ծայրահեղ աղքատության մակարդակի աճը, Վայոց Ձորում (195 կկալ/օր), որտեղ աղքատության մակարդակի աճն ամենամեծն է եղել, և Երևանում (106 կկալ/օր): Եթե առաջին երկու բնակավայրերի դեպքում, մեկ բնակչի հաշվով միջին օրեկան կալորիաները 2100-ից բարձր է եղել, ապա միայն Երևանում է ստացվող կալորիաների թիվը (ինչպես մեդիանան այնպես էլ միջինը) պակաս է եղել 2100-ից (1897, 1996): Քաղաքային բնակավայրերում կալորիաների չստացման հետևանքով, միջինում տնային տնտեսության մեկ շնչի հաշվով ստացվող կալորիաները 2100 կկալ/օր պակաս էր (2066 կկալ/օր, իսկ անկումը՝ 113 կկալ/օր), իսկ գյուղական բնակավայրերում այն բարձր էր (2339 կկալ/օր): Իսկ ըստ քվանտիլային խմբերի դիտարկելիս, բոլոր խմբերում միջին օրեկան ստացվող կալորիաների նվազման պարագայում, I և II խմբերում ինչպես և նախքան ճգնաժամը 2100 կկա/օր-ից պակաս էր (համապատասխանաբար՝ 1563 և 1904 կկալ/օր), մինչդեռ V խմբում՝ այն կազմել էր միջինում 3332 կկալ/օր, իսկ IV խմբում՝ 2559 կկալ/օր: 2100 կկալ/օր պակաս ստացող բնակչության մասնաբաժինը ՀՀ-ում, ընդհանուր առմամբ աճել է 8.2%-ային կետով՝ դառնալով 52.7%, մինչդեռ 10%-ային կետը գերազանցող աճ է արձանագրվել Վայոց Ձորում (15.9%), Լոռիում՝ (17.4%-ային կետով աճ), և քաղաք Երևանում է միայն, որ բնակչության մոտ 2/3-ն էր օրեկան 2100 կկալ/օր քիչ է ստացել 2009թ. նախորդ տարվա նկատմամբ, մինչդեռ Արագածոտնի բնակչության 24.4% է նշված նորմայից քիչ կալորիա ընդունել: Քվանտիլային խմբերի պարագայում I, II խմբերի 100% և III խմբի 16.6% նշված քանակը չէր ստանում օրեկան 2100 կկալ/օր *(տե՛ս, գծապատկեր 8):*

Ինչ վերաբերում է սննդակարգի փոփոխությանը, ապա այստեղ կտրուկ աճ չգրանցվեց բնակչության այն մասնաբաժնի, որոնց սննդակարգի 70%-ից ավելին բաժին է ընկնում հացամթերքին և կարտոֆիլին (0.4%-ային կետով դառնալով 17.7%): Երկու մարզում է (Կոտայք և Լոռի, որտեղ աճն ամենամեծն է եղել՝ 7.5%-ային կետ) միայն բնակաչության այն մասնաբաժինը գերազանցել 30%-ը, որոնց սննդակարգում այս ապրանքները գերակշիռ դեր են խաղացել: Ինչ վերաբերում է սննդակարգի հիմնական խմբերի սպառման փոփոխությանը, ապա այստեղ մեկ շնչի սպառումը, միջինում ավելացել է երեք խմբերի գծով՝ կարտոֆիլ, միրգ, հատապտուղներ և ձու՝ (2009թ. ձվի, կարտոֆիլի գների անկման պարագայում) գյուղմթերք արտադրողների իրացման գների ինդեքսի 87.8% պարագայում:

[30] Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաշխարհային պրակտիկայում 2000-2500 կկալ/օր ստացումը մարդու կողմից համարվում է նորմալ սնուցում, Զեկույցում հիմք է ընդունվում 2100 կկալ/օր:

Գծապատկեր 8

Սնուցումը ՀՀ-ում, 2009թ.



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2010թ.:

Կրթություն

Ընդհանուր առմամբ, ֆորմալ կրթության համակարգը ոչ միայն կարողացավ հաղթահարել ճգնաժամի ազդեցությունը, այլ նաև աճ արձանագրեց ճգնաժամի տարում: 2009թ. նախորդ տարվա նկատմամբ կրթության ոլորտի աճը կազմեց 2.7%, ինչից հետևում է, որ ֆորմալ կրթական գործընթացը ճգնաժամի տարում կտրուկ անկում չի արձանագրել: Տնային տնտեսությունների ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունից երևում է, որ նրանց միայն 0.5% է մեկ կամ ավելի երեխաների հանել դպրոցից, իսկ 1.2%-ում է որոշում կայացվել ետ վերցրել կամ հետաձգել դպրոցի, քոլեջի կամ մանկապարտեզի վճարը:

Գծապատկեր 9

Կրթության իրական ծավալի ինդեքը նախորդ տարվա նկատմամբ (2006-2010թթ.)



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ:

Ոչ ֆորմալ կրթական (մասնավոր դասեր) գործընթացը էապես անկում է արձանագրել ճգնաժամի ժամանակ: 2009թ. նախորդ տարվա նկատմամբ, ընդհանուր առմամբ, տնային տնտեսության մեկ շնչին ընկնող միջին ամսական կրթության վրա կատարվող իրական ծախսերի անկումը 32%[31] է կազմել նախորդ տարվա նկատմամբ, չնայած ֆորմալ կրթությունը (կրթական համակարգը), ընդհանուր առմամբ, ճգնաժամի ազդեցությունն իր վրա չի զգացել, քանի որ կրթության ավելացված արժեքի իրական աճը մոտ 2.7% է կազմել, իսկ այդ ոլորտի ընկերությունների զուտ շահույթն աճել է 736.6 մլն դրամով կամ 99.8% (738.2-ից դառնալով 1474.8): Այս երևույթի ամենահավանական բացատրությունը մասնավոր դասերն են, որոնց ծնողներն ուղարկում են իրենց երեխաներին ուսման առաջադիմությունը բարձրացնելու նպատակով: Իսկ սա նշանակում է, որ այն անձինք ովքեր մասնավոր դասեր էին տալիս, եկամուտների կրճատում են արձանագրել: Այս անկումը կարող է փաստել այն մասին, որ կրթության որակն է տուժել ճգնաժամի տարում, և ոչ թե ֆորմալ կրթական գործընթացը, ինչը հետագայում իր ազդեցությունը կթողնի ՀՀ մրցունակության վրա՝ մրցունակ և բարձր պատրաստվածություն ունեցող մասնագետների պակասի տեսքով:

[31] Քաղաքային բնակավայրերում՝ -25.6%, մինչդեռ գյուղական բնակավայրերում՝ -55.3%:

Բարձրագույն կրթությունը չեզոք մնաց ճգնաժամի ազդեցությունից և նույնիսկ աճ արձանագրեց,[32] հատկապես 2009/2010 ուս. տարվա առաջին կեսի շնորհիվ: 2007/2008-2009/2010 ուս. տարիների ընթացքում վճարովի հիմունքով դուրս մնացածների և վերականգնվողների մասնաբաժինն ընդհանուր դուրս մնացածների թվաքանակի մեջ էապես չեն տարբերվել (հանած զորակոչիկներին), սակայն ինչ վերաբերում է վճարովի համակարգից դուրս մնացածներին նյութական անկարողության պատճառով ընդհանուրի մեջ, ապա այստեղ հետաքրքիր միտում է արձանագրվել *(տե՛ս, գծապատկեր 10)*: Պետական ԲՈՒՀ-երում այս ուսանողների մասնաբաժինը տարեց տարի կրճատվել է (369-ից հասնելով 159 ուսանողի), մինչդեռ մասնավոր ԲՈՒՀ-երում, այս աճը պայմանավորված է եղել հիմնականում նրանով, որ 2007/2008 ուս. տարվա նկատմամբ հետագա տարիներին նկատվել է վճարովի համակարգից դուրս մնացածների քանակի կրճատում: Այնինչ նյութական միջոցների պակասի պատճառով դուրս մնացածների թիվը էական տատանում չի արձանագրել (369, 401 և 382 համապատասխանաբար այս 3 ուս. տարիների ընթացքում): Մյուս կողմից պետական ԲՈՒՀ-երի ուսանողների թվաքանակի կրճատումը 2008/2009թ. ուս. տարում նախորդի համեմատ, կոմպենսացվեց հաջորդ տարի ավելի շատ վճարովի համակարգում ընդգրկվածների ուսանողների շնորհիվ՝ Երևանի ԲՈՒՀ-երում ավելի բարձր ուսման վարձի սանդղակում ընդգրկվածների հաշվին, մինչդեռ մասնավոր ԲՈՒՀ-երում սովորողների թվաքանակն այդ երեք տարիների ընթացքում կրճատվում էր՝ Երևանի և մարզերի ԲՈՒՀ-երում բացառությամբ մեկ ուսման վարձի սանդղակի նվազեց 2009/2010 ուս. տարվա մնացած վճարման սանդղակում ընդգրկված ուսանողների քանակը ինչպես Երևանում այնպես էլ մարզերում *(տե՛ս, հավելված Դ)*:

Գծապատկեր 10

Վճարովի հիմունքներով դուրս մնացած կամ ուսումը թողածները, վերականգնվածները և ֆինանսական դժվարությունների պատճառով ուսումը թողածները (%, ընդհանուրի մեջ)



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ:

[32] Բարձրագույն կրթության վրա ճգնաժամի ազդեցությունը գնահատելիս հիմնական ցուցանիշը, որը այստեղ դիտարկվում է նյութական դժվարությունների պատճառով ՀՀ ԲՈՒՀ-երից դուրս եկած վճարովի համակարգում սովորող ուսանողների թվաքանակն է ընդհանուր վճարովի հիմունքներով դուրս մնացածների թվաքանակի մեջ հանած բանակի պատճառով դուրս եկածներին վճարովի համակարգից: Այստեղ դիտարկվում է ճգնաժամի ազդեցությունը միայն բարձրագույն կրթության վրա, որը երկրի ապագա մրցունակության հենասյուներից մեկն է, ինչ էլ հնարավորություն կատ ավելի բարձ կենսամակարդակ ապահովել:

Երևանի պետական ԲՈՒՀ-երի դերակատարումը ՀՀ բարձրագույն կրթական համակարգում 2009/2010 ուս. տարում բարձրացավ: ՀՀ պետական բարձրագույն կրթական համակարգում վճարովի համակարգում ընդգրկվածների թվաքանակի աճը վերը դիտարկվող երեք ուսման տարիների ընթացքում, ինչպես նաև 2009/2010 ուս. տարում ավելի բարձր ուսման վճարով տեղերի աճը՝ հատկապես Երևանի ԲՈՒՀ-երում մասնավոր ԲՈՒՀ-երում ընդգրկվածների թվաքանակի կրճատմամբ, փաստում է պետական և, հատկապես, Երևանի ԲՈՒՀ-երը նախընտրելու (ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում) և կրթության ավելի անմատչելի դառնալու մասին: Իսկ կրթության ոչ մատչելի լինելու պարագայում ավելի շատ պետական ԲՈՒՀ-երում վճարովի համակարգում ընդգրկվածների թվաքանակի աճը կարելի է բացատրել բարձրագույն կրթության նկատմամբ ձևավորված արժեքի և որպես լավ աշխատանքի գրավականի կարևորմամբ: Մյուս կողմից ավելի շատ Երևանի պետական ԲՈՒՀ-երը նախընտրելու հանգամանքը, կարող է փաստել ավելի բարձր վարկանիշ ունեցող հաստատությանը նախապատվության տալով: Հետագայում այս միտումը շարունակվելու պարագայում մարզերի և Երևանի միջև անջրպետի մեծացման պատճառ կդառնա, քանի որ տնային տնտեսությունների եկամուտների աճը և ընդունելության ոչ բարձր սահմանները կհանգեցնեն ուսանողության կենտրոնացմանը Երևանում, որոնք կրթություն ստանալու դեպքում կարող են փորձել գտնել աշխատանք մայրաքաղաքում, ինչ էլ ավելի կխորացնի սոցիալական լարվածությունը Երևանի և մարզերի միջև:

Գծապատկեր 11

ԲՈՒՀ-երի անվճար և վճարովի համարգերում ընդգրկված ուսանողների բաշխվածությունը, (2007/2008-2009/2010 ուսումնական տարիներին)



Աղբյուր՝ ՀՀ ԱԿԾ, տարբեր տարիների հրապարակումներ:

Նշում՝ ուսանողների ընդհանուր թվաքանակը չի համընկնում նրանց ըստ ուսման վճարաչափերի բաշխվածության հանրագումարի հետ, քանզի առկա են ուսման վճարներից ազատվածներ, այդ իսկ պատճառով այստեղ մեր նպատակն է ուղղակի պարզել թե ինչ միտում է արձանագրվել վճարովի համակարգում տեղերի ավելացման գծով:

Առողջություն

«Տնտեսական անկումները (ռեցեսիաները) կարող են բացասաբար ազդեցություն ունենալ, այն մարդկանց վրա ովքեր կորցնում են իրենց աշխատանքը, և որոշակիորեն դրական ազդեցություն այն մարդկանց վրա, որոնք պահպանում են իրենց աշխատանքը: Այս ամենը չեզոք ազդեցություն կունենա բնակչության վրա...» (Ստաքլեր և այլոք, 2009թ., էջ 143):

Ստաքլերը և այլոք հիմնվելով մի շարք հետազոտությունների վրա, որոնց հիմնական ուշադրությունը եղել է տնտեսական ճգնաժամի ազդեցությունն առողջության վրա կարճաժամկետ ժամանակահատվածում, նշում են, որ մարդկանց վարքագծում արձանագրված փոփոխությունները կարող են առողջական խնդիրներ առաջացնել մի քանի տարի անց. *«Գործազրկությունը հաճախ նույնացում է օրվա ընթացքում ավելի շատ ալկոհոլ օգտագործելու հետ, ինչն ակնհայտորեն երկարաժամկետ հետևանքներ կունենա առողջության վրա: Տնօրինվող եկամտի կրճատումը կարող է հանգեցնել նրան, որ մարդիկ այնպիսի սննդակարգի կացնեն, որն այդքան էլ առողջարար չլինի»:* Նրանք նաև նշում են, որ եկամտի անկումը կազդի ծխելու վրա (ծխողների քանակ), իսկ առողջության վրա տնտեսական ճգնաժամի ազդեցությանը չափը կախված է 3 հանգամանքից, որոնցից են սոցիալական ապահովությունը և ոչ ֆորմալ բարեկեցությունը: Ֆրիդմանը և այլոք (2007թ.) պարզել էին, որ Ինդոնեզիայում ճգնաժամը բացասաբար է ազդել բնակչության հոգեբանական բարեկեցության վրա դիտարկելով նախքան ճգնաժամը, ճգնաժամի ընթացքում և դրանից հետո արձանագրված արդյունքները: Ըստ UN WHO-ի (2009թ., էջ 5) տնտեսական անկումների ժամանակ մարդկանց ֆինանսական վիճակը վատթարանում է և նրանք *«խուսափում են գումար ծախսելուց կամ էլ ավելի շատ են օգտագործում պետության կողմից մատուցվող առողջապահական ծառայություններից»*, ինչպես նաև նախկին ճգնաժամերի փորձը ցույց է տվել, որ արձանագրվում է մահացության դեպքերի աճ, որոշ երկրներում:

Ելնելով վերը նշվածից հնարավոր կլինի պարզել կարճաժամկետ ժամանակահատվածում բնակչության առողջության հետ կապված ճգնաժամի պատճառով ինչ երևույթներ/

միտումներ են ի հայտ եկել, իսկ երկարաժամկետ ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ կլինի մի քանի տարվա տվյալների առկայություն, ինչպես նաև լուրջ և խոր տնային տնտեսությունների մակարդակով հետազոտություն: Սակայն կարճաժամկետ ժամանակահատվածում բացահայտված միտումները հնարավորություն կտան պարզելու ապագայում ինչ է սպասվելու համապատասխան քաղաքականություն մշակողների կողմից միջոցառումներ ձեռնարկելու տեսանկյունից: Ներքո անդրադարձ է կատարվել առողջապահության վրա պետության կողմից ծախսերի ավելացման պարագայում, ինչպես են փոխվել ամբուլատոր-պոլիկլինիկան հաճախումների թիվը, հիվանդանոցների կողմից ընդունվող հիվանդների թիվը, մեկ հիվանդի անցկացրած օրերի միջին թիվը: Ներքո դիտարկվում են մահացության դեպքերը և ալկոհոլի և ծխախոտի վրա կատարվող ծախսերի փոփոխությունը: Ինչ վերաբերում է սնուցմանը, ապա ինչպես ներկայացվել է սնուցման բաժնում 2100 կկալ/օր պակաս ստացող բնակչության մասնաբաժինը ՀՀ-ում աճել է 8.2%-ային կետով՝ դառնալով 52.7%, իսկ բնակչության այն մասնաբաժնի, որոնց սննդակարգի 70%-ից ավելին բաժին է ընկնում հացամթերքին և կարտոֆիլին աճել է 0.4%-ային կետով դառնալով 17.7%, ինչը նշանակում է, որ այս բացասական ազդեցությունը հնարավոր կլինի գնահատել միայն ապագայում: Այստեղ անդրադարձ չի կատարվում ՀՀ բնակչության հոգեբանական բարեկեցությանը, քանի որ նախքան ճգնաժամը և ճգնաժամի տարում այսպիսի տվյալները բացակայում են, որը հիմնականում ստացվում է տնային տնտեսությունների հարցման արդյունքում:

<u>ՀՀ-ում ճգնաժամի կարճաժամկետ ազդեցությունը բնակչության առողջության վրա</u>

Ճգնաժամի տարում պետական բյուջեից առողջապահության վրա կատարվող ծախսերի աճի պարագայում ավելացել է ամբուլատոր-պոլիկլինիկական հաճախումների քանակը, մինչդեռ նվազել է մահճակալի վրա մեկ հիվանդի անցկացրած օրերի միջին թիվը գրանցված հիվանդությունների քանակի աճի պարագայում: 2009թ. նախորդ տարվա համեմատ առողջապահությանն ուղղվող պետական ծախսերն աճեցին 4.2 մլրդ դրամով՝ կազմելով մոտ 52.6 մլրդ դրամ: Ամբուլատոր-պոլիկլինիկական օգնություն ստանալու համար հաճախումների քանակը ՀՀ-ում 2009թ., նախորդ տարվա նկատմամբ աճել է, բացառությամբ Գեղարքունիքի մարզի: Մեկ բնակչի հաշվով ամենամեծ հաճախումները գրանցվել են Սյունիքի մարզում[33] և Երևանում, իսկ ամենամեծ տոկոսային աճը գրանցվել է Արարատի և Տավուշի մարզերում, որին հետևել է Երևանը: Մյուս կողմից տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին առողջապահության վրա կատարվող ծախսերի իրական կրճատում էր արձանագրվել, ինչից կարելի էր ենթադրել, որ բնակիչները կնախընտրեին օգտվել պետության կողմից առաջարկվող առողջապահական ծառայություններից: Մյուս կողմից հաճախումների քանակը փաստում է այն մասին, որ եղել են մեկ անգամից ավելի հաճախումներ, իսկ կրկնակի այցելությունները հիմնականում կանխարգելիչ դեր են խաղացել և/կամ էլ այդ հիվանդները համարվել են դիսպանսերային հսկողության տակ գտնվողներ (2009թ. տարեվերջին այդպիսի հիվանդերի թիվը կազմել է 478943՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 14060 հիվանդով, իսկ, ընդհանուր առմամբ, հիվանդների թվի աճը սկսել է արձանագրվել 2005թ. ի վեր): Իսկ ամբուլատոր օգնությունից հետո, մարդիկ կարող է ավելի քիչ դիմած լինեին համապատասխան մասնագիտացված բուժ հաստատություն ստացիոնար բուժում ստանալու համար (ճգնաժամի տարում դեռահասների և մեծահասակների մոտ գրանցված հիվանդությունները նախորդ տարվա համեմատ աճել էին 77569 դեպքով 2009թ, որից առաջին անգամ գրանցվածների դեպքերը կազմել է 56735) կամ էլ ավելի քիչ ժամանակ անցկացրած լինեին բուժ հաստատությունում: Եթե մինչև 2009թ. նախորդ երեք տարիների ընթացքում 2006-2008թթ. հիվանդանոցների կողմից ընդունված հիվանդների քանակը նախորդ տարվա համեմատ աճը կազմել էր 9755, 8149, 8854 հիվանդ[34], ապա 2009թ. ընդամենը 3305 հիվանդով է քանակն ավելացել, մինչդեռ դրան զուգահեռ այդ նույն ժամանակահատվածում նվազել է մահճակալի վրա մեկ հիվանդի անցկացրած օրերի միջին թիվը՝ կազմելով 2009թ. 6.9 օր 2006թ. 7.6 օրի դիմաց (2007թ.՝ 7.3, 2008թ.՝ 7.2): Բուժման համար համապատասխան քայլերի չձեռնարկելու պարագայում, ինչպես նաև դեղորայքի վրա կատարվող ծախսերի կրճատումը[35] (տնային տնտեսությունների 36.4%-ի պարագայում), հետագա բուժումը կարող է որոշ դեպքերում միայն որոշ ժամանակով երկարաձգել հիվանդի

[33] Հատկապես պայմանավորված է Սիսիան քաղաքով (7.3 հաճախում մեկ բնակչի հաշվով) և Կապանով (4.5):

[34] 2006թ. ընդունվել է 96209 հիվանդ, 2007թ.՝ 104358, 2008թ.՝ 113212, 2009թ.՝ 116517:

[35] Տնային տնտեսությունների 42.6%-ը նվազեցրել կամ դադարել է այցելությունն առողջապահական կենտրոններ, իսկ 36.4%-ը՝ նվազեցրել կամ դադարել է դեղորայք գնելը: Իսկ ՀՀ-ում տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսեկան իրական ծախսերը բուժօգնության վճարների վրա կրճատվեց 10.6%:

կյանքը: Այս միտումի շարունակվելու պարագայում հնարավոր է բախվել երկրի մրցունակության համար անհրաժեշտ համարվող առողջ աշխատուժ ունենալու հետ, ինչը նաև կխոչընդոտի ապագա տնտեսական աճին:

Գծապատկեր 12

Բնակչությանը ցույց տրվող ամբուլատոր-պոլիկլինիկական օգնությունը՝ հաճախումների միջին թիվը 1 բնակչի հաշվով, 2007-2009թթ.



Աղբյուր՝ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ:
Նշում՝ սկսած 2006թ-ից հաճախումների ընդհանուր թվի մեջ ներառվում է նաև մասնավոր բուժական կաբինետների գործունեությունը, առանց մասնավոր ստոմատոլոգիական կաբինետների տվյալների:

Մահացություն

Մահացության դեպքերի չնչին աճ արձանագրվեց: Մահացության (1000 բնակչի հաշվով մահացածների թվաքանակ) ընդհանուր գործակիցն աճեց 0.02 պրոմիլային կետով՝ կազմելով 8.5 պրոմիլ: Մահացության աճը հիմնականում պայմանավորված է եղել գյուղական բնակավայրերում մահացության դեպքերի աճով (ԱՎԾ, 2010թ.): Իսկ այս ցուցանիշը ՀՀ-ում սկսել է աճել 2006թ. (11.5 պրոմիլ) ի վեր: Չնայած ճգնաժամի տարում աճեցին մահացության դեպքերը, բայց այդ միտումը կարելի էր ակնկալել, քանի որ նախորդ տարիների ընթացքում աճ էր արձանագրվում: 2009թ. 100000 բնակչի հաշվով արձանագրված 850 մահացության դեպքերի մեջ առաջին տեղում էր արյան շրջանառության համակարգի հետ կապված հիվանդություններ խումբը, ինչպես և 2008թ (423 դեպք), որին հաջորդել է չարորակ նորագոյացություններից արձանագրված մահվան դեպքերը (167 դեպք, 2008թ. 170 դեպքի համեմատ): Իսկ 2008թ. նկատմամբ ճգնաժամի տարում աճել էր մարսողական օրգանների և էնդոկրին համակարգի հիվանդություններից մահացության դեպքերը (50 և 44 դեպք համապատասխանաբար 47-ի և 42-ի համեմատ): Իհարկե, մենք ընդունում ենք, որ կարևոր է պարզել մահացության դեպքերի տարիքային բաշխվածությունը, հետագա առողջապահական քաղաքականության մշակման համար, սակայն այստեղ հեղինակները նպատակ են հետապնդել պարզելու միայն միտումները:

Գծապատկեր 13

2009թ. արձանագրված մահացության կառուցվածք (100000 բնակչի հաշվով)



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2010թ.:

Ծխախոտի և ոգելից խմիչքների վրա կատարվող ծախսեր

Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական իրական սպառողական ծախսերը ծխախոտի և ալկոհոլի վրա ճգնաժամի տարում աճեցին: Ալկոհոլային խմիչքի վրա կատարվող ծախսերի իրական աճը 2009թ. նախորդ տարվա նկատմամբ կազմեց 3.4%, իսկ

ծխախոտի վրա կատարվող ծախսերինը՝ 0.2%: Եթե ալկոհոլի սպառումը քաղաքային բնակավայրերում աճեց 0.4%, ապա գյուղական բնակավայրերում՝ աճը կազմեց 9.2%, իսկ ինչ վերաբերում է ծխախոտին, ապա քաղաքայինում աճեց 0.3%, իսկ գյուղականում այն կրճատվեց 0.7%: Առողջության վրա ճգնաժամի ազդեցությունը երկարաժամկետ ժամանակահատվածում գյուղական համայնքներում կարելի է ակնկալել ալկոհոլի չարաշահման հետ կապված հիվանդությունների աճով, մինչդեռ քաղաքային վայրերում ծխախոտի չարաշահման հետ կապված: Սակայն այստեղ բարդ է տարանջատվել, թե սպառման ծավալների աճը պայմանավորված է արդեն այս ապրանքները սպառող բնակչության սպառման ծավալների մեծացմամբ, թե այս չօգտագործողներն են միացել այս ապրանքների սպառողների շարքին: Այստեղ մի բան պարզ է, որ այս երկու ապրանքների սպառման ծավալների աճի պարագայում ապագայում դրանց սպառման չարաշահման պատճառով որոշակի հիվանդությունների աճ կարձանագրվի, որն էլ ճգնաժամի առողջության վրա երկարաժամկետ ազդեցությունն է:

Ճգնաժամի երկարաժամկետ ազդեցությունն առողջության վրա պարզելու համար անհրաժեշտ կլինի դիտարկել այն հիվանդությունների աճը, որոնք պայմանավորված կլինեն թերսնուցման, սննդակարգի ոչ առողջարար լինելու, ալկոհոլի և ծխախոտի սպառման ծավալների աճի ինչպես նաև հոգեբանական բարեկեցության վատթարացման պատճառներով և որոնք սկիզբ են առել կամ սուր բնույթ են ստացել ճգնաժամի պատառով: Իսկ սա միայն հնարավոր է պարզել լայնածավալ հետազոտությամբ տնային տնտեսությունների մակարդակով, քանի որ մյուս կողմից գրանցվող հիվանդությունների աճի միտում է նկատվել վերջին տարիների ընթացքում՝ առողջապահության քաղաքականությունն էլ ավելի բարելավելու նպատակով, ինչը կնպաստի բնակչության առողջապահական վիճակի բարելավմանը:

ԲԱԺԻՆ V ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Արտադրողականություն

Ճգնաժամի ժամանակ արտադրողականության անկման պարագայում իրական աշխատավարձերի աճը փաստում է լուրջ կադրային խնդիրների առկայության մասին: ՀՆԱ-ի իրական ծավալների կրճատումը կարող էր ուղեկցվել արտադրողականության փոփոխությամբ, կախված նրանից, թե ինչպես կփոխվեր զբաղվածների թիվը: ՀՀ-ում 2007թ.-ից հետո ՀՆԱ-ի տեմպերի նվազումը ուղեկցվել է արտադրողականության տեմպերի կրճատմամբ *(տե՛ս, գծապատկեր 14):* Այս երևույթը կարող է փաստել այն մասին, որ ՀՀ-ում 2009թ. չի արձանագրվել գործազրկության մակարդակի կտրուկ աճ՝ 2009թ. զբաղվածների թիվը նախորդ տարվա նկատմամբ կրճատվեց 28.2 հազարով, իսկ գործազրկության մակարդակը՝ 0.7 տոկոսային կետով ՀՆԱ-ի -14.2% կրճատման պարագայում, ինչի բացատրությունը կարող էր լինել աշխատավարձերի ճկունությունը զբաղվածության խնդիրը մեղմելու տեսանկյունից (Ռեյնթարթ և Ռոգոֆֆ, 2009թ.): Սակայն ՀՀ-ում 2007-2010թթ. իրական աշխատավարձի աճի տեմպերը գերազանցում էին արտադրողականության աճի տեմպերին, հատկապես 2009թ. երբ 11%-ը գերազանցող արտադրողականության անկման պարագայում իրական աշխատավարձերի 14.7% աճ է արձանագրվել, 2010թ. և նույն միտումը նկատվեց: Այս երևույթը կարող է փաստել մի քանի հանգամանքների մասին՝ որակյալ կադրերի, չգրանցված աշխատակիցների, ճգնաժամի պարագայում միայն բարձր որակավորում ունեցողներին պահելու, ինչպես նաև տնտեսական գործունեության որոշակի ծավալների չգրանցված լինելու հանգամանքով: Առաջինի դեպքում գործատուներն իրենց աշխատակիցներին պահելու համար բարձրացնում են աշխատավարձերը, քանի որ նորին գտնելը կամ վերապատրաստելը շատ ժամանակ կպահանջի, իսկ երկրորդի դեպքում չգրանցված աշխատակիցներն են ազատվում աշխատանքից, որն ուղեկցվում է որակյալ աշխատակիցների աշխատավարձերի բարձրացմամբ, իսկ երրորդի դեպքում մնում են միայն որակյալ աշխատակիցները, մինչդեռ ազատվում են համապատասխանաբար ցածր որակավորում ունեցողները: Սակայն մի բան ակնհայտ է դառնում՝ դա կադրերի խնդիրն է: Եթե կադրերի խնդիրը նույն ձևով շարունակվի ապագայում, ապա հետագայում այն ընկերությունների համար լրացուցիչ բեռ կհանդիսանա, որը մյուս կողմից նրանց համար մարտահրավեր կլինի ավելի լուրջ խորհել իրենց մրցակցային առավելությունը կառուցելու շուրջ ինչը կբարձրացնի նաև ամբողջ երկրի մրցունակություն: Հակառակ դեպքում՝ աշխատակիցներին պահելը, որպես բեռ բացասաբար կանդրադառնա տնային տնտեսությունների վրա՝ տեղական ընկերությունների կողմից առաջարկվող ապրանքների և ծառայությունների դիմաց ավելի բարձր գին վճարելով:

Գծապատկեր 14

Արտադրողականության և աշխատավարձերի իրական աճի տեմպերը, 2007-2010թթ.



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ-ի տարբեր տարիների հրապարակումներ և հեղինակների սեփական հաշվարկ, աշխատավարձը՝ միջին ամսեկան:

Գծապատկեր 15

ՀՆԱ-ի, արտադրական հարկերի և ավելացված արժեքի աճի տեմպը, 2007-2010թթ.



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2011թ.:

2007-2010թթ. արտադրողականության աճի տեմպերը ճգնաժամից առաջ և հետո զիջել են ՀՆԱ-ի աճի տեմպերին, մինչդեռ ճգնաժամի տարում հակառակ պատկեր է արձանագրվել: Քանի որ արտադրանքի հարկերի աճի տեմպը նախքան ճգնաժամը և ճգնաժամից հետո գերազանցել է համախառն ավելացված արժեքի աճի տեմպերին, ապա տարբերություն կունենար արտադրողականության երկու ցուցանիշների միջև[36] (տե՛ս, գծապատկերներ 14 և 15), իսկ արտադրանքի հարկերի 22% և համախառն ավելացված արժեքի 13.1% անկման պարագայում, արտադրողականության երկու ցուցանիշների աճի տեմպի անկումը զիջելու էր վերջինիս կրճատման չափին՝ զբաղվածների քանակի ոչ մեծ չափերի հասնող նվազման պարագայում: Իսկ 2010թ. արտադրողականության երկու ցուցանիշների աճը հակառակ ուղղությամբ էր շարժվել: ՀՆԱ/զբաղվածների թիվ հարաբերության 0.77% աճը, պայմանավորված է արտադրանքի հարկերի 9.2% աճով նախորդ տարվա նկատմամբ, մինչդեռ համախառն արժեք/զբաղվածների հարաբերությունը 0.05% անկում է արձանագրել: Հարկ է նշել, որ նույն ժամանակահատվածում իրական աշխատավարձերի աճը կազմել է 2.13%: Իսկ այստեղից կարելի է նկատել, որ արտադրողականության բացասական կամ բավականին ցածր տեմպերի պարագայում, գործատուների համար լրացուցիչ բեռ է իրական աշխատավարձերի բարձր տեմպերի ապահովումը և, հետևաբար, ավելի բարձր կենսամակարդակի ապահովում, որը միայն հնարավոր կլինի մատուցվող ապրանքների և ծառայությունների գների բարձրացման պարագայում աշխատակիցների ավելի բարձր աշխատավարձ վճարելու նպատակով, կամ էլ աշխատակիցների թվի կրճատման պարագայում, ինչը կբարձրացնի գործազրկության մակարդակը:

Գծապատկեր 16

Իրական արտադրողականությունն ըստ NACE 1.1 տնտեսական գործունեության ոլորտների, 2006-2010թթ.



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ, հեղինակների սեփական հաշվարկ: Նշում՝ մնացած ճյուղերը չեն ներկայացված, քանի որ ՀՀ ԱՎԾ-ն չունի հաշվարկած այլ ճյուղերի ավելացված արժեքը 2005թ.-ի միջին տարեկան գներով, իսկ գյուղատնտեսությունը ներկայացված է որպես մեկ ճյուղ:

[36] Համախառն ավելացված արժեք/ զբաղվածների թիվ և ՀՆԱ/զբաղվածների թիվ հարաբերությունների միջև, քանի որ վերջինս նաև արտացոլում է արտադրանքի հարկերի փոփոխությունը:

Արտադրողականությունը, աշխատավարձերը և զբաղվածությունն ըստ ոլորտների

Ճգնաժամի տարին ի հայտ բերեց այն ճյուղերը, որոնք կարողացան ոչ միայն պահպանել իրենց արտադրողականության մակարդը, այլ նաև էլ ավելի արտադրողական դառնալ, անկախ նրանից թե տվյալ ոլորտում արձանագրվել է իրական ծավալների և զբաղվածների թվի կրճատում թե ոչ, որն էլ ուղեկցվել է իրական միջին աշխատավարձերի աճով *(տե՛ս, գծապատկեր 16):* 2009թ. տնտեսության դիվերսիֆիկացիայի հիմքերը դրվեցին, ի հայտ բերելով երկրի ապագա մրցունակության համար այն ճյուղերը, որոնց արտադրողականության աճը երկրի բնակչության կենսամակարդակի ապահովման հիմք կհանդիսանա[37]:

Աշխատուժի օգտագործում

Աշխատունակ տարիքի բնակչության թվի աճին զուգահեռ աշխատուժի մասնակցության դրույքի կրճատումը մատնանշում է աշխատուժի օգտագործման ոչ բարձր արդյունավետության մասին: Աշխատունակ տարիքի բնակչության աճին զուգահեռ, 2009թ.-ին նախորդ տարվա նկատմամբ աշխատուժի (labor force participation rate) մասնակցության մակարդակը[38] կրճատվել է 1.79%-ային կետով կազմելով 52.45%, մինչդեռ զբաղվածության մակարդակը (employment rate)[39] այդ նույն ժամանակահատվածում կրճատվեց 2.02%-ային կետով՝ կազմելով 48.81% *(տե՛ս, գծապատկեր 17):* 2006թ. ի վեր այս երկու ցուցանիշները նվազել են, իսկ սա նշանակում է, որ աշխատունակ տարիքի բնակչության թվի աճին զուգահեռ, ՀՀ աշխատուժը (labor force) ավելի դանդաղ է աճել, քան աշխատունակ տարիքի բնակչության թվի աճը: Հիմնվելով պաշտոնական տվյալների վրա՝ ստացվում է, որ աշխատունակ տարիքի միայն 52.45% կարող էր աշխատել գործատուների մոտ կամ էր որպես գործատու հանդիսանալ 2009թ. գործազրկության բացակայության դեպքում: Իսկ եթե այս միտումը շարունակվի, ապա տնտեսական աճը կուղեկցվի իրական աշխատավարձերի աճով, որը հնարավոր է, որ ապահովված չլինել արտադրողականության աճով, ինչն էլ լրացուցիչ բեռ կհանդիսանա գործատուների համար: Մյուս կողմից էլ ավելի մրցունակ ընկերությունների որակյալ աշխատուժի նկատմամբ աճող պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտ է բարձր որակավորում ունեցող աշխատակիցների առկայություն: Իսկ նրանց սահմանափակ լինելն իր հերթին ևս կխոչընդոտի ընկերությունների աճին:

Գծապատկեր 17

Աշխատուժի օգտագործում



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ, հեղինակների սեփական հաշվարկներ:

[37] Ըստ ոլորտների վերլուծությունը կներկայացվի հաջորդ զեկույցում հեղինակներից մեկի՝ Աննա Մակարյանի կողմից, 2012թ. առաջին եռամսյակում:

[38] Աշխատուժի մասնակցության դրույքն աշխատուժի մասնաբաժինն է աշխատունակ տարիքի բնակչության թվի մեջ:

[39] Զբաղվածության դրույքը զբաղվածների մասնաբաժինն է աշխատունակ տարիքի բնակչության թվի մեջ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տնտեսական քաղաքականությանն ուղղված առաջարկություններ

1. Հարկավոր է մշակել ոչ միայն պետության ճգնաժամային իրավիճակներին դիմակայելու ռազմավարություններ, այլ նաև շեշտը դնել ՓՄՁ-ների կողմից ճգնաժամերին պատրաստ լինելու և դրանց հաղթահարման համար համապատասխան գործիքներին տիրապետելու հմտությունների զարգացման վրա:
2. ՀՀ կառավարությունը որդեգրում է գնաճի զսպման և ինֆլյացիայի ցածր մակարդակի ապահովման քաղաքականություն, այն պետք է իրագործել ելնելով *յուրաքանչյուր ապրանքատեսակի գների փոփոխության* հետ կապված տարվող լուրջ քաղաքականությամբ և խթաններ ստեղծելու գնաճի մեջ մեծ մասնաբաժին ունեցող ապրանքերի արտադրությունն ապահովելու ՀՀ-ում և ապրանքատեսակ առ ապրանքատեսակ գների բարձրացում թույլ չտալու միջոցով:
3. Անշարժ գույքի շուկայում բնակարանների գների մոնիտորինգի համակարգի և վերահսկողական համակարգի ուժեղացում՝ անշարժ գույքի շուկայում «ակտիվների փուչիկ» կոչվող երևույթի հնարավոր բացասական զարգացումները կանխելու համար:
4. Ավանդների տոկոսադրույքների և վարկերի տոկոսադրույքների իջեցման քաղաքականության իրագործում՝ խթանելու համար գործարարությամբ զբաղվելու գործընթացը, ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ վարկեր տրամադրելով ՓՄՁ-ներին:
5. Հարկային դրույքաչափերի նվազեցման և հարկային բազայի ընդլայնման քաղաքականության իրագործման մեխանիզմների և մոտեցումների մշակում:
6. Բյուջեի ծախսային քաղաքականությունը սոցիալական ծախսերի բնագավառում տեղափոխվել գիտականորեն հիմնավորված մակարդակ՝ ծախսերը կատարել արդյունքների, աշխատավարձերի բարձրացումները՝ արտադրողականության ավելացման վրա հիմնվելով և այլն:
7. Փորձել նվազագույնի հասցնել ՀՀ տնտեսության կախվածությունն արտաքին տրանսֆերտներից և տնտեսական աճ ապահովել ներքին ռեսուրսների հաշվին, իսկ արտաքին ռեսուրսներն օգտագործել տնտեսական համագործակցության ընդլայնման համար:
8. Բոլոր տիպի ֆինանսական ճգնաժամերի համառոտ ուսումնասիրություն՝ հետևանքներ, ազդեցություն, ծագման պատճառներ, հաղթահարման ռազմավարություններ, ապագայում ճգնաժամերի կանխատեսելու (ինդիկատորների համակարգ) և կրկնվելու դեպքում համապատասխան միջոցառումներ իրականացում:
9. Տնտեսության դիմադրողականության աստիճանի բարձրացում (resilience)՝ տնտեսական հիմքի բազմազանության, տնտեսության ճկունության բարձր մակարդակի ապահովում և այլն:
10. Մարզերում՝ հատկապես քաղաքային բնակավայրերում աշխատատեղեր ստեղծման նախաձեռնությունների իրագործում (կախված բնակավայրից, աշխատողների քանակից և ոլորտներից) և գործատուներին արտոնությունների տրամադրում աշխատատեղերի ստեղծման պարագայում:

Սոցիալական քաղաքականությանն ուղված առաջարկություններ

1. Սոցիալական քաղաքականության խնդիրների և մարզային անհամաչափ զարգացվածությունը կանխելու համար անհրաժեշտ է մշակել ամենաթույլ զարգացած մարզերի ՓՄՁ-ների աջակցության ծրագրեր և նպաստավոր պայմաններ ու լիարժեք դաշտ ստեղծել նրանց արդյունավետ գործունեության համար՝ դրանով իսկ հաղթահարելով մարզերի սոցիալական անհամաչափ զարգացվածությունը:
2. Համակարգված մարզային զբաղվածություն և գործազրկության քաղաքականության մշակում և իրագործում, որի արդյունքում լուծումներն իրավիճակային մակարդակից կտեղափոխվեն հստակ իրագործվող հանրային քաղաքականության մակարդակ: Քաղաքականությունը պետք է գործի արդյունավետ ամբողջ հանրապետության տարածքով և անհամաչափ ու անկանոն բաշխվածություն չպետք է ունենա: Եվ նպատակահարմար է, որ իրագործվի առաջնային աջակցություն ըստ ամենաթույլ տնտեսական վարկանիշ ունեցող մարզի գաղափարից ելնելով:

3. Առաջին անհրաժեշտության ապրանքների և դեցիլային 1-ից 5-րդ խմբերի հիմնական սպառողական ապրանքների գների նկատմամբ հատուկ գնային ցածր քաղաքականության մշակում և իրագործում:
4. Ցածր տոկոսադրույքների քաղաքականության մշակում և իրագործում՝ հիփոթեքային վարկավորման համակարգում՝ սոցիալական խնդիրների լուծման համար, թանկ փողերի քաղաքականությունից հրաժարվելու հիմքերի ստեղծում:
5. Տնային տնտեսությունների վարկային բեռի թեթևացում՝ տոկոսադրույքների իջեցման միջոցով, քանի որ 2010թ. արդեն 1 տրիլիոն դրամի հասնող վարկերի դիմաց յուրաքանչյուր տարի ՀՀ տնային տնտեսությունները և գործարարները ստիպված են լինելու վճարել 150 մլրդ դրամի հասնող գումար, որը սոցիալական լուրջ ու ծանր բեռ է:
6. Համապատասխան մեխանիզմների մշակում, որոնք թույլ կտան հետագայում տնտեսական իրավիճակների վատթարացման պարագայում բարձրացնել Կառավարության սոցիալական ծրագրերի շահառուների ընդգրկվածության մակարդակը:
7. Համապատասխան համաշխարհային փորձի ուսումնասիրություն՝ սոցիալական ապահովության համակարգի ծրագրերի գծով՝ հատկապես առողջապահության ոլորտում:
8. Պարբերաբար 3 տարին մեկ տնային տնեսությունների առողջական վիճակը բացահայտող մանրակրկիտ լայնածավալ հետազոտության անցկացում՝ համապատասխան սոցիալական ուղղվածության ծրագրերի մշակման և իրականացման համար:
9. Գյուղական համայնքների ուսանողների համար Հայաստանի պետական ագրարային համալսարանում անվճար հեռահար ուսուցման կազմակերպման հնարավորության ապահովում՝ համապատասխան լսարանների վերազինում տեխնիկայով, որտեղ ուսանողները կայցելեն դասերի և առցանց տարբերակով դասախոսին կկարողանան հարցեր տալ: Դա կարող է ֆորմալ բնույթ կրել (բակալավրիատ) կամ մասնագիտացված դասընթացներ:
10. Գյուղատնտեսության նախարարության կողմից համապատասխան գրասենյակի/ կառույցի ստեղծում, որն անմիջականորեն կպատասխանի գյուղացիներին հուզող հարցերին՝ սերմերի ընտրության, որոշակի մթերքի տեսակի աճեցման և այլնի վերաբերյալ: Նախորդ կետում ստեղծված համակարգչային սրահները բոլոր գյուղերում կարող են նաև այս նպատակին ծառայել:

Մրցունակության բարձրացմանը ուղված ծագրեր

1. Ըստ ոլորտների ընտրել ներքին աշխատանքի շուկայում գործող մրցունակ ձեռնարկություններին և դրանց նկատմամբ տանել հատուկ մրցունակության բարձրացման քաղաքականություն՝ միջազգային ասպարեզում այդ կազմակերպությունների արտադրանքը մրցունակ դարձնելու համար:
2. Տնտեսության մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ է իրագործել ՀՀ տնտեսության մեջ զբաղվածության արդյունավետ դիվերսիֆիկացիոն քաղաքականություն, ապահովելու համար ճյուղային ճիշտ քլաստերային քաղաքականություն՝ զբաղվածության վրա հիմնվելով:
3. Մրցունակ և գործարարության համար նպաստավոր, հարևան երկրների հետ համեմատած մրցունակ, հարկային դաշտ ստեղծելու գաղափարի կյանքի կոչում՝ ապահովելով ՓՄՁ-ների համար գործունեության նպաստավոր պայմաններ:
4. Տրանսֆերտների մուտք ապահովող աշխատուժի նկատմամբ տանել հետևողական քաղաքականություն, ապահովելու համար նրանց ավելի բարձր որակավորման աշխատանքով դրսում զբաղվելու խնդիրը և աշխատել, որպեսզի նրանք իրենց գործունեությունը դրսում ծավալեն ոչ միան շինարարության և առևտրի բնագավառում, այլ ավելի բարձր մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելով՝ դառնան կապող օղակ ՀՀ և արտերկիր գործարար ու գիտական համագործակցության բնագավառում:
5. Ամեն մարզում հետազոտական/լաբորատոր կենտրոնների ստեղծում հատկապես գյուղատնտեսության ոլորտում, որոնք կզբաղվեն սելեկցիայով, խաչասերման, և այլն համապատասխան բնակավայրերում քլաստերների հիմնման հիմքերի ձևավորման նպատակով:
6. Բոլոր ոլորտների գործատուների հետ համատեղ բացահայտել այն պահանջները, որոնք իրենք վերագրում են իրենց աշխատակիցներին, դրա հիման վրա անհրաժեշտ հմտությունների և գիտելիքների կազմում՝ համապատասխան կրթական ծրագրերի մշակման և կազմակերպման նպատակով: Դասընթացները կարող են կազմակերպվել

տարբեր ֆորմատով՝ Կառավարությունը կարող է հանդես գալ որպես համաֆինանսավորող կամ լիովին ֆինանսավորողի դերում տվյալ ոլորտի աշխատակիցների վերապատրաստման դասընթացները, որոնք կկազմակերպվեն տեղական ԲՈՒՀ-երի կողմից (նպատակ հետապնդելով բարձրացնել տեղական ԲՈՒՀ-երի մրցունակությունը), կամ էլ օտարերկրյա մասնագետների/ինստիտուտների կողմից:

7. Մյուս կողմից զբաղվածության մակարդակի բարձրացման և կադրերի խնդիրները լուծելու համար՝ ներգրավել նախկին տարիների շրջանավարտներին, հարակից մասնագիտությամբ տվյալ տարվա շրջանավարտներին կամ գործազուրկներին, որոնք համապատասխան դասընթացներից հետո կարող են աշխատել տվյալ գործատուի մոտ: Իսկ Կառավարության միջոցներով վերապատրաստված մասնագետներին աշխատանքի վերցնելու դեպքում արտոնություններ տալ գործատուներին (Իսրայելի օրինակը):

Ersado, Lire. (2010), “The Global Economic Crisis, Migration, and Remittance Flows to Armenia: Implications for Poverty”, Presentation prepared for International Workshop on the Economic and Social Impact of Migration, Remittances, and Diaspora, Yerevan, Armenia, June 24-25.
http://www.edrc.am/WP/migration/june25/Ersado_Eng.ppt (last accessed: March 15, 2011)

Pernia, Ernesto and Knowles, James C. (1998), “Assessing the Social Impact of the Financial Crisis in Asia”, ADB Economics and Development Resource Center EDRC Briefing Notes Number 6, Manila Philippines: Asian Development Bank
http://www.adb.org/Documents/EDRC/Briefing_Notes/BN006.pdf (last accessed: October 21, 2010)

Porter, Michael and Ketels, Christian. (2003), UK Competitiveness: Moving to the Next Stage, DTI Economic Paper No 3, London, UK: UK Department of Trade and Industry.
http://www.berr.gov.uk/files/file14771.pdf (last accessed: October 21, 2010)

Spence, Randy (2009) “Financial and Economic Crisis: Transmission Channels and Impacts”, discussion presentation prepared for PEP Forum on the Impact of the Global Financial Crisis, Manila, Philippines, Feb. 17
http://www.pep-net.org/fileadmin/medias/pdf/files_events/PIDS-DLSU-MANILA/randall.pdf (last accessed: June 6, 2011)

Bagiński, Paweł (2009) “The world economic crisis and its effects on developing countries” Golbal Developemnt Research Group Policy Paper Nr 1/2009, Warszawa, Poland: Golbal Developemnt Research Group
http://www.gdrg.org.pl/attachments/124_POLICY_PAPERS_Nr_%201_2009_EN.pdf (last accessed: June 6, 2011)

Dabrowski, Marek (2009), “The Impact of Financial Crisis on Emerging Markets: Transmission Channels, Vulnerabilities and Expected Challenges” Presentation for the Working Group meeting on Financial Markets Development and Impact of Central Banks, OECD Initiative for Investment and Competitiveness in the South Caucasus and Ukraine,Warsaw, Poland, November 17
http://www.oecd.org/dataoecd/20/4/44183123.pdf (last accessed: June 6, 2011)

Dirk Willem te Velde with Charles Ackah, and other. (2009), “The Global Financial Crisis and Developing Countries: Synthesis of the Findings of 10 country case Studies”, Overseas Development Institute Working Paper No. 306, London, UK: Overseas Development Institute.
http://www.odi.org.uk/resources/download/3413.pdf (last accessed: March 13, 2011)

Wan, Guanghua; Francisco, Ruth. (2009), “How Is the Global Recession Impacting on Poverty and Social Spending? An ex ante assessment methodology with applications to developing Asia”, ADB Sustainable Development Working Paper Series No 8, Manila, Philippines: Asian Development Bank.
http://www.adb.org/Documents/Papers/ADB-Working-Paper-Series/ADB-WP08-Global-Crisis-Impact-Poverty.pdf (last accessed: March 13, 2011)

UNDP. (2010), Poverty and Social Impact Analysis of the Global Economic Crisis: Synthesis Report of 18 Country Studies, New York, USA: United Nations Development Program
http://www.undp.org/poverty/projects_psia_economic_crisis.shtml (last accessed: March 15, 2011)

Public Forum Armenia (2008), Implications of the World’s Financial Crisis for Armenia’s Economy,
http://www.pf-armenia.org/fileadmin/pfa_uploads/CRISIS_REPORT--FINAL.pdf (last accessed: June 7, 2011)

Canagarajah, Sudharshan (2010), The Economic Crisis in the Low Income CIS: Fiscal Consequences and Policy Responses, Presentation prepared for International Workshop on the Economic and Social Impact of Migration, Remittances, and Diaspora, Yerevan, Armenia, June 24-25.
http://siteresources.worldbank.org/INTECA/Resources/Sudharshan_Eng.pdf (last accessed: June 7, 2011)

Gyulumyan, Gohar (2009), “ARMENIA: Social Impact of the Global Economic Crisis”, presentation prepared for AIPRG international Conference on Impact of the Global Crisis on Armenia: Short- and Long-run Perspectives, Armenia: Yerevan. July 7-8.
http://www.econarm.com/AIPRG_2009_Conference/3rd_session/Gohar_Gyulumyan.ppt (last accessed: March 15, 2011)

The World Bank, (2010) ARMENIA: The 2008–09 Global Economic Crisis, Policy, Responses, and Household Coping Strategies, Report No. 55011-AM, Human Development Sector Unit, Europe and Central Asia Region

http://siteresources.worldbank.org/ARMENIAEXTN/Resources/Global_Economic_Crisis_Policy_2008_09.pdf (last accessed: June 6, 2011)

WFP Food Security Analysis (2009) Rapid Assessment of the Impact of the Global Financial Crisis in Armenia, Yereavan: WFP Armenia
http://home.wfp.org/stellent/groups/public/documents/ena/wfp205566.pdf (last accessed: June 7, 2011)

Balisacan, Arsenio; Piza, Sharon; Mapa, Dennis; Santos, Carlos; Odra, Donna. (2010), "Social Impact of the Global Financial Crisis in the Philippines", Manila, Philippines: Asian Development Bank.
http://www.adb.org/documents/reports/social-impact-crisis-ph/social-impact-crisis-ph.pdf (last accessed: March 13, 2011)

Sumarto, Sudarno; Wetterberg, Anna; Pritchett Lant. (1998), "The Social Impact of the Crisis in Indonesia: Results from a Nationwide Kecamatan Survey", SMERU Working Paper, SMERU Research Institute: Jakarta, Indonesia.
http://www.smeru.or.id/report/workpaper/crisimpactkecsurv/kecsur1.pdf (last accessed: March 15, 2011)

National Institute of Labour and Social Research. (2010), "Armenia: Impact of the Global Financial Crisis on Households", Yerevan, Armenia: National Institute of Labour and Social Research, 54p.
http://content.undp.org/go/cms-service/stream/asset/?asset_id=2652302 (last accessed: March 14, 2011)

Milesi-Ferretti, Gian Maria, Razin, Assaf, (1996). *Current-Account Sustainability* (Princeton Studies in International Economics No 81), International Finance Section Princeton Unive., 86p.
http://www.princeton.edu/~ies/IES_Studies/S81.pdf (last accessed: July 04, 2011)

Bleaney, Michael, (2005), "The Aftermath of a Currency Collapse: How Different are Emerging Markets?" The World Economy, Volume 28, Issue 1, pp79-89.

Stuckler, David; Basu, Sanjay; Suhrcke, Marc; McKee, Martin. (2009), "The health implications of financial crisis: A review of the evidence", The Ulster Medical Journal, 78(3), pp.142-145

WHO. (2009), "Health amid a financial crisis: a complex diagnosis" Bulletin of the World Health Organization, 87(1): 4–5.

Friedman, Jed; Thomas, Duncan. (2008), "Psychological Health Before, During, and After an Economic Crisis: Results from Indonesia, 1993–2000", the World Bank Economic Review, Vol. 2 3, No.1, pp. 57 –76

Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, 463p.

Centennial Group International, (2010). "Impact and Policy Responses: Caucasus, Central Asia and Mongolia" Prepared for ADB By Pradeep K. Mitra as discussion materials for the "Regional Forum on the Impact of Global Economic and Financial Crisis", 4 January 2010
http://www.adb.org/Documents/events/2010/Global-Economic-Financial-Crisis/report-8.pdf (last accessed: August 22, 2011)

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա
ՃԳՆԱԺԱՄԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ, ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի փոխանցման մեխանիզմները

Սպենս (2009)	Բարժինսկի (2009)	Վիլեմ թե Վելդե (2009)	Դաբրովսկի (2009)	Վան և այլոք (2009)
Միջազգային փոխանցման մեխանիզմներ	Դեպի զարգացող երկներ	Դեպի զարգացող երկներ (10 երկրի օրինակի վրա)	Դեպի միջինից բարձր եկամուտներ ունեցող երկրներ	Դեպի ասիական երկրներ
• Պորտֆելային ներդրումներ • Արտահանում • ՕՈՒՆ • Զբոսաշրջություն • Զարգացման օգնություն • Գիտելիք	• Միջազգային առևտուր և գյուղմթերքի ու հանածոների գներ • Կապիտալի հոսքեր և ֆինանսական շուկաների վիճակ • Տրանսֆերտներ • Զարգացման օգնություն	• Մասնավոր ֆինանսական հոսքեր • Առևտուր • Տրանսֆերտներ • Զարգացման օգնություն	• Թույլ համաշխարհային պահանջարկը (առևտրի ուղի) • Օգտակար հանածոների և գյուղմթերքի գների անկումը (վճարային հաշվեկշիռ, դրամավարկային և երկրորդ փուլի ներքին պահանջարկի հետևանքներ) • Համաշխարհային իրացվելիության խնդիր (վարկի ուղի) • «Մայր» ֆինանսական հաստատությունների խնդիրները (ոչ այնքան) • Ավելի շատ ռիսկից խուսափում • Փոխարժեքի ավելի մեծ տատանում • Ֆինանսական ռեսուրսների արտամղում դրամավարկային խթանի պատճառով • Միգրանտ աշխատողների նկատմամբ պահանջարկի կրճատում	• Ծառայությունների և ապրանքների առևտուր • Տրանսֆերտներ • ՕՈՒՆ • Ֆինանսական շուկաներ և այլն

Աղյուսակ 2

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի փոխանցման մեխանիզմները ՀՀ տնտեսության վրա

ՄԱԿ-ի Աղքատության և սոցիալական ազդեցության խումբը (2010)	PFA-ի կողմից առաջարկված (2008)	Գյուլումյան (2009)	Քանագարաջահ (2010)
Երեք միաժամանակյա շոկ • Արտահանման պահանջարկի կրճատում • Արտահանվող գյուղմթերքի և օգտակար հանածոների գների անկում • Տրանսֆերտների և մասնավոր կապիտալ հոսքերի կտրուկ կրճատում	• Տրանսֆերտների կրճատում • Առևտրի և ներդրումների կրճատում (արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկի կրճատում, արտահանվող հիմնական ապրանքների գների անկում, ՕՈՒՆ) • Ֆինանսական հատվածից ծագող խնդիրներ • Պետական օգնություն	• Աշխատանքի շուկա և միգրացիա (գործազրկություն, տրանսֆերտներ) • Ապրանքների ու ծառայությունների շուկաներ (աճի տեմպի կրճատում, առևտրի զբոսաշրջությունից ստացվող եկամուտների նվազում) • Կապիտալի շուկա (ՕՈՒՆ-ի և վարկերի կրճատում, դրամավարկային քաղաքականության հնարավորությունների սահմանափակում)	Արտաքին շոկ • Տրանսֆերտների կրճատում • Արտասահման կրճատում • ՕՈՒՆ

Աղյուսակ 3

Ճգնաժամի փոխանցման ուղիները և սոցիալական ազդեցությունը

Վան և այլոք (2009)	Պերնիա և Նոլզ (1998)
<u>Ազդեցություն տնային տնտեսությունների վրա</u> • Տնային տնտեսությունների եկամուտների և զբաղվածության փոփոխությունը հանգեցնում է՝ o Աղքատության դեպքերի աճի o Տնային տնտեսությունների ծախսերը միջնակարգ կրթության և առողջության վրա • Կառավարության ծախսերը հանրային ծառայությունների հանգեցնում է՝ o հանրային ծառայությունների առաջարկի կրճատում <u>Վերջնական արդյունք՝</u> Սնուցման, կրթության և առողջության հետ կապված փոփոխություններ	<u>Սոցիալական ազդեցության տարածման փոխանցման ուղիները</u> • Աշխատանքի շուկաներ (ներքին և արտաքին) • Գներ • Ակտիվներ • Վարկեր • Պետական բյուջե <u>Ազդեցություն՝</u> • Եկամուտների բաշխում և աղքատություն • Մակարդակին զարգացում՝ o Կրթություն o Առողջություն o Վերարտադրողական առողջություն • Սոցիալական կապիտալ և շրջակա միջավայր՝ o Հանցագործություններ և բռնություններ o Համայնքային համագործակցություն և մասնակցություն o Շրջակա միջավայր

Աղյուսակ 4

Ճգնաժամի սոցիալական ազդեցության փոխանցման ուղիները և ազդեցությունը ՀՀ-ում

Համաշխարհային Բանկ (2010)	**ՀՊԾ-ի պարենային անվտանգության վերլուծություն (2009)**
Ամենակարևոր փոխանցման ուղիները • Աշխատանքի շուկաներ (զբաղվածության մակարդակի կրճատում, աշխատավարձերի նվազում) • Միգրացիայի նվազում և տրանսֆերտների կրճատում (պայմանավորված եկամտի աղբյուր հանդիսացող երկրների տնտեսական աճի տեմպերի անկմամբ) • Գների փոփոխություն և փոխարժեքի կայունացում ճգնաժամի պարագայում	Փոխանցման ուղիները • Արտահանում/ օտարերկրյա կապիտալ հոսքեր • Գների փոփոխություն և գնաճ • Աշխատանքի շուկա և զբաղվածություն • Տրանսֆերտներ և միգրացիա • Պետական ծախսեր և սոցիալական ապահովություն
Ազդեցություն տնային տնտեսությունների վրա	
• Տնային տնտեսությունների եկամուտներ • Տնային տնտեսությունների սպառողական ծախսեր • Աղքատություն և բաշխման ազդեցություն	*Գոյատևման ռազմավարությունների միջոցով* • Պարենային ապահովություն/ թերսնուցում • Կրթության և առողջության հետ կապված փոփոխություններ • Սոցիալական խնդիրների աճ • Հաղթահարման ռազմավարությունների ընտրության սահմանափակում

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2008-2009թթ.

Աղյուսակ 1

Կազմակերպությունների զուտ շահույթը (վնասը (-)) ըստ ՏԳՏՀԴ-ի բաժինների

(մլն դրամ)

	Ընդամենը		որից՝ ըստ խոշոր և միջին կազմակերպությունների	
	2008	**2009**	**2008**	**2009**
Ընդամենը	**208188.7**	**47352.9**	**121608.5**	**10953.6**
Այդ թվում՝				
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	911.0	-269.1	728.3	-63.0
Ձկնորսություն, ձկնաբուծություն	113.6	-71.9	-	-
Հանքագործական արդյունաբերություն	9116.0	-7891.4	6673.2	-8287.0
Մշակող արդյունաբերություն	53258.5	-17573.5	4416.2	-18839.0
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	6401.7	-45225.1	2848.7	-46572.9
Շինարարություն	11291.1	20367.4	8250.7	12625.0
Առևտուր. ավտոմեքենաների, կենցաղային արտադ-ռատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	49324.2	35567.0	28339.2	18851.9
Հյուրանոցներ և ռեստորաններ	3166.8	3496.4	3053.2	1822.7
Տրանսպորտ և կապ	57777.3	36089.0	56468.1	34791.4
Ֆինանսական գործունեություն	2673.2	5719.2	39.5	1178.0
Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	8874.5	11716.2	5998.8	10113.3
Պետական կառավարում	2.2	50.5	2.2	0.3
Կրթություն	738.2	1474.8	685.8	805.2
Առողջապահություն, սոցիալական ծառայությունների մատուցում	2474.2	2625.0	2400.7	2502.2
Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	2066.2	1278.5	1703.8	2025.5

Աղյուսակ 2

Կազմակերպությունների զուտ շահույթը (վնասը(-)) ըստ մարզերի և Երևանի[40]

(մլն դրամ)

Զուտ շահույթ (վնաս(-)) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	Ընդամենը		որից՝ ըստ խոշոր և միջին կազմակերպությունների	
	2008	**2009**	**2008**	**2009**
Ընդամենը	**208188.7**	**47352.9**	**121608.5**	**10953.6**
Այդ թվում՝				
Ք. Երևան	156168.0	36561.8	104787.8	12885.1
Արագածոտն	21151.4	442.4	97.9	872.2
Արարատ	10207.1	7079.3	7699.3	5129.7
Արմավիր	302.7	-2767.5	-206.1	-794.6
Գեղարքունիք	-22.5	1915.4	375.5	745.5
Լոռի	3074.6	1452.2	-422.8	-613.6
Կոտայք	11398.0	1350.9	3957.4	609.1
Շիրակ	391.6	780.3	107.4	274.9
Սյունիք	5667.7	-2765.2	4925.6	-9470.6
Վայոց Ձոր	-301.9	1043.1	276.6	960.5
Տավուշ	152.1	2260.3	9.9	355.4

[40] Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2010, ՀՀ ԱՎԾ, էջ 31:

Աղյուսակ 3

Արտադրանքի շահութաբերության (վնասաբերության (-)) մակարդակն ըստ մարզերի և Երևանի

(%)

	Ընդամենը		որից՝ ըստ խոշոր և միջին կազմակերպությունների	
	2008	**2009**	**2008**	**2009**
Ընդամենը	**13.7**	**10.7**	**11.3**	**9.6**
Այդ թվում՝				
Ք.Երևան	13.8	9.9	12.2	9.2
Արագածոտն	30.8	16.6	2.1	17.6
Արարատ	16.5	14.1	18.7	11.2
Արմավիր	-1.7	-2.6	-4.0	-1.6
Գեղարքունիք	1.3	9.4	10.7	14.4
Լոռի	12.4	17.6	2.5	16.2
Կոտայք	11.5	6.4	9.4	5.6
Շիրակ	4.8	6.2	3.0	3.6
Սյունիք	6.4	26.7	5.7	22.0
Վայոց Ձոր	3.8	16.1	14.6	15.8
Տավուշ	2.6	22.6	3.3	12.9

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. Ընկերության տեսակ (N=80)



2. Գործունեության ոլորտ (N=80)



3. Համախառն հասույթի փոփոխությունը 2009թ. նախորդ տարվա նկատմամբ (N=44, 36, 80)



4. Համախառն հասույթի անկման չափը 2009թ. նախորդ տարվա նկատմամբ (N=40, 26, 66)



5. Համախառն հասույթի պահպանումն ու աճի չափը 2009թ. նախորդ տարվա նկատմամբ (N=14)

Ոլորտ	Համախառն հասույթի պահպանումը և աճի չափը			Ընդամենը
	15-34%	5-15%	<5% կամ պահպանում	
Առևտուր	1	2	1	4
Այլ ոլորտներ	2	4	4	10
Ընդամենը	3	6	5	14

6. Համախառն հասույթի անկման պատճառները 2009թ. նախորդ տարվա նկատմամբ (N=40, 26, 66)



7. Համախառն հասույթի աճի պատճառները 2009թ. նախորդ տարվա նկատմամբ (N=4, 9, 13)

	Առևտուր	Այլ ոլորտներ	Ընդամենը
Մրցակիցների բացակայությունը տվյալ ոլորտում տվյալ բնակավայրում		1	1
Մրցակից ընկերությունների փակվելը տվյալ ոլորտում տվյալ բնակավայրում	3	2	5
Հաճախորդների հավատարմությունը	4	7	11
Կատարված ներդրումը սեփական միջոցներից	1	5	6
Կատարված ներդրումը ստացված բանկային/վարկային կազմակերպություններից (վարկ)		2	2
Շուկայի ընդլայնում		1	1
Մրցակիցների գործի սխալ վարում		1	1
Տեսականու ավելացում	1		1

8. Մարման ենթակա վարկի առկայություն 2009թ. ըստ ոլորտների, համախառն հասույթի փոփոխության
(N=43, 35, 78) (N=65, 13)





9. ՓՁ-ների վարկի դիմելը 2009թ. ըստ ոլորտների, և մարման ենթակա վարկի առկայության
(N=44, 35, 79) (N=14, 13, 20)





10. 2009թ. ստացված վարկի օգտագործման նպատակները (N=8, 8, 16)

2009թ. ստացված վարկի օգտագործման նպատակները	Առևտուր	Այլ ոլորտներ	Ընդամենը
Կրեդիտորական պարտքերի մարում	3	4	7
Նոր գործի սկսում կամ ընդլայնում/հիմնական միջոցների ձեռքբերում (նոր արտադրամասի, տարածքի, սարքավորումների ձեռք բերում,)	4	5	9
Ապրանքների /շրջանառու միջոցների ձեռքբերում	4	2	6

11.Վարկի մերժման պատճառները (N=2, 2, 4)

Վարկի մերժման պատճառները	Առևտուր	Ոլորտներ	Ընդամենը
Ֆինանսական անվստահությունը	2	1	3
Վերցված վարկի առկայություն	1		1
Վարկային սխալ քաղաքականություն	1		1
Ճգնաժամ		1	1
Գրավի հետ կապված խնդիրներ	1		1
Անվճարունակությունը	1		1
Այլ		1	1

12. Համախառն հասույթի փոփոխությունը 2010թ. նախորդ տարվա նկատմամբ (N=44, 36,80)



13. Համախառն հասույթի անկման չափը 2010թ. նախորդ տարվա նկատմամբ (N=40, 25, 65)



14.Համախառն հասույթի աճի չափը 2010թ. նախորդ տարվա նկատմամբ (N=4, 11, 15)

	>=35 %	15-34%	5-15 %	<5% կամ նույն մակար-դակի պահ-պանում
Առևտուր	0	0	3	1
Այլ ոլորտներ	2	5	2	2
Ընդամենը	2	5	5	3

15. Համախառն հասույթի անկման պատճառները 2010թ. նախորդ տարվա նկատմամբ (N=37, 25, 62)



16. Համախառն հասույթի աճի պատճառները 2010թ. նախորդ տարվա նկատմամբ (N=4, 9, 13)

	Առևտուր	Այլ ոլորտներ	Ընդամենը
Մրցակիցների բացակայությունը տվյալ ոլորտում տվյալ բնակավայրում		2	2
Մրցակից ընկերությունների փակվելը տվյալ ոլորտում տվյալ բնակավայրում	3	3	6
Հաճախորդների հավատարմությունը	4	8	12
Կատարված ներդրումը սեփական միջոցներից	2	6	8
Կատարված ներդրումը ստացված բանկային/վարկային կազմակերպություններից (վարկ)		3	3
Տեսականու ավելացում		1	1
Նոր եկած լավ աշխատողի առկայություն		1	1

17. ՓՁ-ների վարկի դիմելը 2010թ. ըստ ոլորտների և ըստ 2009թ. համախառն հասույթի փոփոխության (N=43, 35, 78) (N=18, 13, 31)





18. 2010թ. ստացված վարկի օգտագործման նպատակները (N=14, 12, 26)



19. 2010թ. վարկի մերժման պատճառներն առևտրի ոլորտում, քանի որ այլ ոլորտներում մերժում չի եղել (N=4)

Բիզնես ծրագրի գրավիչ չլինելը	3
Ֆինանսական անվստահությունը	1
Գրավի հետ կապված խնդիրներ	3

20. 2009-2010թթ. ընթացքում որևէ դոնոր կամ աջակցություն ցուցաբերող կառույցի օգնության համար (ֆինանսական, խորհրդատվական և այլն) դիմելը (N=44, 36, 80)



21. 2009-2010թթ. ընթացքում աջակցության բնույթը (N=5, 5, 10)

Ոլորտ	Աջակցության բնույթ	
	Ֆինանսական	խորհրդատվական/դասընթացներ
Առևտուր	1	4
Այլ ոլորտներ	4	3
Ընդամենը	5	7

22. Գործունեության բարելավմանը նպաստող աջակցությունը (N=4, 5, 9)

	Առևտուր	Այլ ոլորտներ	Ընդամենը
Դրական ազդեցություն	1		1
Բիզնեսի բնագավառի նոր գիտելիք (մարքեթինգ, գովազդ)	1	1	2
Տեղեկատվական	1	2	3
Ազդել է, սակայն ոչ ակնկալվող չափի	1	2	3

23. Դեռևս գործողՓՁ-ների կողմից մտահոգությունները և դժգոհությունները (N=42, 34, 76)

	Առևտուր (N=17)	Այլ ոլորտներ (N=13)	Ընդամենը (N=30)
Տվյալ բնակավայրում /ՀՀ-ում հնարավոր չէ/ձեռնտու չէ աշխատել	1	2	3
Վիճակի վատթարացում/ճգնաժամի շարունակում կամ խորացում (կենսամակարդակի ցածր մակարդակի պահպանում)	16	8	24
Պետության նկատմամբ անվստահություն	0	1	1
Բիզնեսի զարգացման համար պայմանների բացակայություն	0	2	2
Դժգոհություններ/պետական վերահսկողության բացակայություն	0	1	1

24. Գործող ՓՁ-ների առաջարկությունները (N=13, 9, 22)

	Առևտուր	Այլ ոլորտներ	Ընդամենը
Հարկային դաշտի կայունություն	1	0	1
Հարկային բեռի թեթևացում (թեթևացնել հարկերը)/ հարկային դաշտի պարզեցում	3	3	6
Վարկի տոկոսադրույքների իջեցում/տրամադրել ցածր տոկոսադրույքով վարկեր/երկարատև վարկերի տրամադրում	6	2	8
Վարկի մարման գրաֆիկի վերանայում/փոփոխում	1	0	1
Գյուղատնտեսության բարելավում	1	0	1
Միգրացիայի կանխում	0	1	1
Հաստատագրված վճարների վերացում և աշխատել միայն ՀԴՄ-ներով	0	1	1
Սահմանին ԱԱՀ չգանձել	1	0	1
Աշխատատեղերի ստեղծում	1	1	2
Բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակի բարելավում	1	0	1
Մաքսային վճարների կրճատում	1	1	2
Գների մակարդակի իջեցում (գազի սակագնի իջեցում)	1	2	3
Բիզնես միջավայրի բարելավում	1	0	1
Բիզնեսի իրավունքների պաշտպանություն	0	1	1

25. Գործող ՓՁ-ների Ճգնաժամից քաղած դասեր (N=34, 21, 55)



Այլ մեկնաբանություններ

10 տարվա մեջ պետական և այլ կազմակերպությունների վրա հույս դնել պետք չէ:
Այստեղ գործունեություն չարժե իրականացնել:
Գյումրիում հնարավոր չէ աշխատել:
Ճգնաժամի մեջ ենք, դեռ ավելին 2011թ.-ին խորանում է ճգնաժամը:
Պետությանը վստահել պետք չէ, բիզնեսի զարգացման պայմաններ չկան:
Եթե հարկերը քիչ լինեն ավելի շատ աշխատողներ կգրանցեմ, անգամ ստիպված եմ պահել եկամուտ չապահովող աշխատող:
Ճգնաժամի գործում կարևորվում է պետության կարգավորիչ դերը:

ՀՀ ԲՈՒՀ-ԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Գծապատկեր 1

Պետական ԲՈՒՀ-երում վճարովի համակարգում ընտրվածների բաշխումն ըստ ուսման վարձի չափի և մարզային բաշխվածությամբ 2007/2008-2009/2010 ուս. տարիներին



Աղբյուր՝ ՀՀ ԱԿԾ, տարբեր տարիների հրապարակումներ:

Գծապատկեր 2

Մասնավոր ԲՈՒՀ-երում վճարովի համակարգում ընդգրկվածների բաշխումը, ըստ ուսման վարձի չափի և մարզային բաշխվածությամբ 2007/2008-2009/2010 ուս. տարիներին



Աղբյուր՝ ՀՀ ԱԿԾ, տարբեր տարիների հրապարակումներ:

ՀՆԱ-Ի ԱՃԻ ՏԵՄՊԵՐԸ, ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԸ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Աղյուսակ 1

ՀՆԱ-ի արտադրությունն ըստ NACE 1.1 տնտեսական գործունեության դասակարգման, իրական աճի տեմպը, նախորդ տարվա նկատմամբ 2006-2010թթ.

		2006	2007	2008	2009	2010
	Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)	**113.2**	**113.7**	**106.9**	**85.9**	**102.1**
	Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	114.9	135.9	117.1	77.5	109.2
	Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	113.0	111.7	105.8	86.9	101.3
	Ֆինանս. միջնորդության անուղղակի չափվող ծառայություններ (ՖՄԱՉԾ)	101.7	153.4	109.1	89.8	103.5
A	Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	100.5	110.3	103.0	105.9	84.2
B	Ձկնորսություն. ձկնաբուծություն	119.5	127.5	212.9	109.7	92.8
C	Հանքագործական արդյունաբերություն	101.2	103.6	103.8	106.3	119.1
D	Մշակող արդյունաբերություն	99.5	101.6	100.9	92.9	113.6
E	Էլեկտրաէներգիայի. գազի. ջրի արտադրություն և բաշխում	89.6	105.8	104.6	86.7	96.9
F	Շինարարություն	137.7	118.2	111.3	58.4	103.0
G	Առևտուր. ավտոմեքենաների. կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	112.4	108.8	108.0	95.2	104.8
H	Հյուրանոցներ և ռեստորաններ	91.9	158.1	109.6	123.5	122.3
I	Տրանսպորտ և կապ	117.0	122.0	108.4	90.1	104.9
J	Ֆինանսական գործունեություն	131.5	142.6	132.6	98.4	101.7
K	Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	132.9	116.1	98.6	99.9	108.7
L	Պետական կառավարում	111.7	104.6	93.4	94.1	106.3
M	Կրթություն	106.1	102.9	94.7	102.2	98.7
N	Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում	112.3	105.7	93.0	96.0	101.9
O	Կոմունալ. սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	112.5	112.0	90.7	108.5	100.5
P	Տնային տնտեսությունների վարման ծառայություններ*	-	130.3	292.7	113.4	107.0

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ առցանց տվյալների հենք, http://www.armstat.am/file/doc/99464693.xls (վերջին այցելություն, հուլիսի 19, 2011թ.:

Գծապատկեր 1

Իրական աշխատավարձերն ըստ NACE 1.1 տնտեսական գործունեության դասակարգման ոլորտների, 2006-2010թթ.



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, տարբեր տարիների հրապարակումներ, հեղինակների սեփական հաշվարկներ:

Զբաղվածություն ըստ ոլորտների (NACE1.1 տնտեսական գործունեության դասակարգում), 2006-2010թթ.

(հազ. մարդ)



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ աշխատանքի շուկայի տարեգիրք, 2010թ.:

ՁԵԿՈՒՅՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀԲ	Համաշխարհային Բանկ
ՄԱԿ	Միացյալ Ազգերի Կազմակերպություն
UN WFP (ՀՊԾ)	ՄԱԿ-ի Համաշխարհային պարենի ծրագիր
UN WHO	ՄԱԿ-ի Համաշխարհային առողջության ծրագիր
PFA	Հայաստանի հանրային խորհուրդ
ՀՀ ԱՎԾ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՀՀ ԿԲ	ՀՀ կենտրոնական բանկ
ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ՍԳԻ	Սպառողական գների ինդեքս
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություն
ՓՁ	Փոքր ձեռնարկություն